



ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳՐԻ ՍՅՈՒՆԱԿ

Միրելի ընթերցող,

Քո դատին է ներկայացվում «Բանբեր Հայաստանի գրադարանների» հանդեսի անդրանիկ համարը: Գրադարանային գործն իր բազմաբովանդակ գործառնությունով բոլոր ժամանակներում համարվել է հասարակական և մշակութային զարգացման խթանիչ գործոններից մեկը: Սակայն երբ հայացք ենք նետում դեպի անցյալ՝ ուսումնասիրելու, թե գրադարանային գործը և գրադարանագիտական աշխատանքը լուսաբանող հայալեզու ինչ հանդեսներ են հրատարակվել, ապա տեսնում ենք, որ պատկերը խիստ աղքատիկ է: 1941թ. Մյասնիկյանի անվան հանրային գրադարանը հրատարակել է «Բիբլիոգրաֆիական ամսագիրը» (գլխավոր խմբագիր՝ Հրաչյա Քոչար): 1941թ. մայիսին հրատարակվել է ընդամենը մեկ համար և, ամենայն հավանականությամբ, երբ ծագեց Հայրենական պատերազմը, ամսագրի հետագա հրատարկումը դադարեցվեց:

Երկար ընդմիջումից հետո 1960թ. Մյասնիկյանի անվան հանրային գրադարանը սկսում է հրատարակել «Գրադարանավար» մասնագիտական ամսագիրը (տարեկան 8 համար), որը 1961թ. անվանափոխվելով՝ դառնում է «Կուլտուր-լուսավորական աշխատանք» (հրատարակիչ՝ Հայկական ՄՄՀ կուլտուրայի մինիստրություն): Ամսագիրը հասարակական-քաղաքական, մշակույթի և արվեստի հարցերին անդրադարձող գիտամեթոդական հանդես էր: 1989թ. հանդեսն անվանափոխվելով՝ շարունակվում է հրատարակվել «Մշակույթ» խորագրով՝ որպես Հայկական ԽՍՀ կուլտուրայի մինիստրության և մշակույթի ֆոնդի հասարակական քաղաքական, մշակույթի և արվեստի հարցերով գիտահանրամատչելի պատկերազարդ հանդես: Ամսագիրը հրատարակվում է մինչև 1990 թ.:

Հայաստանի անկախացումից հետո՝ 1996-2008թթ., Հայաստանի գրադարանային միությունը հրատարակել է իր տարեգիրքը՝ «Տեղեկագիր Հայաստանի գրադարանային միության» վերնագրով (թողարկվել է 10 համար): 2004-2014 թթ. ընթացքում Հայաստանի ազգային գրադարանը թողարկել է «Հոգևոր հայրենիք» ամսաթերթը, որն ավելի շատ գրական ուղղվածություն է ունեցել :

«Բանբեր Հայաստանի գրադարանների» ամսագիրն իր ուղղվածությամբ գիտա-մեթոդական է, լույս է տեսնելու վեցամսյա պարբերականությամբ, էլեկտրոնային ձևաչափով, նախատեսված է գրադարանագիտության, մատենագիտության և ավտոմատացված համակարգերի մասնագետների համար:

Նկատի առնելով այն բուռն փոփոխությունները, որոնք ընթանում են աշխարհի բոլոր գրադարաններում՝ կապված համակարգչային տեխնոլոգիաների և համացանցի տարածման հետ, ամսագրում բացի ավանդական գրադարանային խորագրերից, ինչպիսիք են «Գրադարան. Տեսություն և պրակտիկա», «Համայնքային գրադարաններ», «Գրադարանային կրթություն», «Գրահրատարակչություն և գրքագիտություն», կլուսաբանվեն նաև գրադարանային վիճակագրության, գրադարանային շուկայաբանության, թվային գրադարանների նախագծման հարցերը: Առանձին խորագիր կհատկացվի թանգարանագիտությանը:

Կարծում ենք՝ այն կնպաստի Հայաստանում գրադարանային գործի կարգավորմանն ու զարգացմանը՝ հնարավորություն ընձեռելով վեր հանել արդիական մոտեցումներն ու գրադարաններին առաջադրված միջազգային չափանիշները:

Մաղթենք բարի երթ հանդեսին և ցանկանանք բեղմնավոր գործունեություն:

ԶԱՐԳԱՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ

*Հայաստանի ազգային գրադարանի տնօրեն,
տեխնիկական գիտությունների թեկնածու*

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԹՎԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ՍՏԵՂԾՄԱՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(ՀԱՅԱՑՔ 25 ՏԱՐՎԱ ԱՆՑԱԾ ՈՒՂՈՒՆ)

Բանալի բառեր՝ գրադարանների ավտոմատացում, թվային գրադարաններ, համահավաք գրացուցակներ

Keywords. Digital Libraries, Library Automation, Union Catalogues.

1. ՄԿԶԲՆԱՎՈՐՈՒՄԸ

Նախորդ դարի 90-ականներից ինտերնետի արագ տարածման, համացանցից օգտվելու գների կտրուկ նվազման, կյանքի բոլոր ոլորտներ անհատական համակարգիչների լայն ներթափանցման հետ ողջ աշխարհում ստեղծվեցին բոլոր անհրաժեշտ նախապայմանները՝ արդյունաբերական հասարակությունից անցում կատարելու դեպի տեղեկատվական հասարակություն: Կրթության, մշակույթի, տուրիզմի, արդյունաբերության, գյուղատնտեսության, տրանսպորտի ոլորտներում, հետազոտական կենտրոններում սկսեցին մեծամասշտաբ ֆինանսական հատկացումներ կատարել այն ժամանակ խիստ մոդայիկ հնչող «ավտոմատացված կառավարման համակարգերի» նախագծման և ներդրման ուղղությամբ: Գրադարանային գործընթացների հստակ և կանոնակարգված լինելը, միլիոնների հասնող հավաքածուների առկայությունը լավագույնս բավարարում էին ավտոմատացման կողմից առաջադրվող պահանջներին: Դա էլ պատճառ հանդիսացավ, որ տեղեկատվական և համակարգչային գիտությունների մասնագետների կողմից գրադարաններն ընտրվեն որպես փորձարարական մոդելներ: Սրան մեծապես նպաստեց գրադարանային 2 կարևոր ստանդարտների առկայությունը՝ 1967 թ. ընդունված «Անգլո-ամերիկյան քարտագրման օրենքները»¹ և 1970-ականների սկզբներին ամերիկացի ծրագրավորող Հենրիետտա Ավրամի ու ԱՄՆ Կոնգրեսի գրադարանի մասնագետների կողմից մշակված «Մեքենաընթերցման քարտագրման սկզբունքները»²: Հիմք ընդունելով այս երկու ստանդարտները՝ ԱՄՆ Կոնգրեսի

¹ <http://www.aacr2.org/>

² <http://www.loc.gov/marc/bibliographic/>

և Բրիտանական գրադարանները ձեռնամուխ եղան Էլեկտրոնային քարտարանների ձևավորման աշխատանքներին, իսկ ավելի ուշ նաև գրադարանային գործընթացների ավտոմատացման համակարգերի նախագծմանը:

1991թ. Հայաստանի անկախության ձեռքբերումից հետո համակարգչային և հեռահաղորդակցական տեխնոլոգիաներն անարգել սկսեցին ներկայացվել մեր երկրում: Ազատ շուկան նպաստեց ինտերնետի տարածմանը հանրապետության ողջ տարածքում, բջջային հեռախոսակապի օպերատորները սկսեցին ներդնել տվյալների հաղորդման արագագործ ցանցեր: 25 տարի առաջ սկսվեցին Հայաստան ներկրվել «Պենտիում 1» սերնդի անհատական համակարգիչների առաջին խմբաքանակները: Հնարավորություն ստեղծվեց անալոգային հեռախոսային կապուղով անհատական համակարգչի օգնությամբ միանալ համացանցին, ուղարկել և ստանալ Էլեկտրոնային նամակներ, մուտք ունենալ առաջատար գրադարանների կայքէջերը և ծանոթանալ զարգացած երկրներում թվային գրադարանների ստեղծման ուղղությամբ տարվող աշխատանքներին: Հենց այս ժամանակ էր, որ ՀՀ Էկոնոմիկայի նախարարության պատվերով նախագծվեց գրադարանային գործընթացների ավտոմատացման համակարգ, որին տրվեց “BIBLIO” պայմանական անունը: Երկու կազմակերպություններ՝ Հանրապետական գիտաբժշկական և Հանրապետական գիտատեխնիկական գրադարանները, ունենալով արհեստավարժ գրադարանավարներ, համակարգչային տեխնոլոգիաների բնագավառի ինժեներական կազմ և անհատական համակարգիչներ, հանձն առան այդ համակարգի փորձնական շահագործումը: Մեկ տարվա շահագործումից հետո պարզ դարձավ, որ նախագծված համակարգը չի համապատասխանում գրադարանագիտության բնագավառում ընդունված միջազգային մի քանի կարևոր ստանդարտների: Դա այդպես էլ պետք է լիներ, քանի որ հայկական գրադարանային դպրոցը մեծամասամբ հիմնված էր սովետական գրադարանային ստանդարտների վրա, որոնք մեծի մասամբ տարբերվում էին իրենց միջազգային նմանակներից: Ավելին, ԽՍՀՄ-ը, լինելով թույլ զարգացած երկիր համակարգչային տեխնոլոգիաների և հեռահաղորդակցման համակարգերի բնագավառներում, երբեք ուշադրություն չէր դարձնում գրադարանների, արխիվների և թանգարանների ավտոմատացման գործնական հարցերին: Այդ իսկ պատճառով տեղեկատվության միջմեքենայական փոխանակման կարևոր ստանդարտը³ երբեք հավուր պատշաճի ներկայացված չի եղել, խորհրդային

³ http://www.iso.org/iso/catalogue_detail.htm?csnumber=41319

գրադարանային դպրոցը ծանոթ չի եղել այդ ստանդարտին, քանի որ չի եղել դրա անհրաժեշտությունը: Նույնը կարելի է ասել մեքենարնթեռնելի գրառումների ստեղծման ստանդարտների մասին՝ մատենագիտական գրառման⁴ և հեղինակավոր գրառման⁵ պարագաներում: Նման բազմաթիվ այլ ստանդարտներ և համաձայնագրեր հասու չեն եղել սովետահայ գրադարանավարներին: Այսպիսով “BIBLIO” համակարգի մեկ տարվա շահագործումը բացահայտեց մի կարևոր հանգամանք. խզումը առկա գործնական գիտելիքի և տեղեկատվական գիտության բնագավառում տեսական մտքի ձեռքբերումների միջև: Զգացվեց արդի գրադարանագիտության նվաճումներին լավատեղյակ և արտասահմանյան գրադարանային դպրոցներն ավարտած մասնագետների պակաս, մասնագետներ, ովքեր պետք է հաղթահարեին գոյություն ունեցող անջրպետը:

Սրանից 25 տարի առաջ նորանկախ Հայաստանում իրենց գրասենյակները բացեցին միջազգային տարբեր բարեսիրական կրթական կազմակերպություններ, և երիտասարդների համար հնարավորություններ ստեղծվեցին կրթությունը շարունակելու ԱՄՆ և եվրոպական համալսարաններում, ինչպես նաև անցնել վերապատրաստման դասընթացներ նույն երկրների համալսարանական կենտրոններում: Ուսանողներից ոմանք իրենց ուսումը շարունակեցին համալսարանների գրադարանային ֆակուլտետներում, որոշներն էլ անցան ինտենսիվ վերապատրաստում արևմտյան գրադարաններում: Վերադառնալով Հայաստան և շարունակելով աշխատել գրադարաններում՝ մասնագետների այս խումբը ձևավորեց այն կրիտիկական զանգվածը, որի շուրջը հետագայում ծավալվեցին թվային գրադարանի ստեղծման աշխատանքները: Մասնագիտական որակների և հմտությունների զարգացմանը մեծապես նպաստեց նաև մասնակցությունը Գրադարանային միությունների և հաստատությունների միջազգային դաշնության (ԻՖԼՍ), Ամերիկայի գրադարանային միության համաժողովներին, ինչպես նաև եվրոպական տարբեր գիտաժողովներին:

Արդյունքները երկար սպասեցնել չտվեցին: Մի շարք դոնոր կազմակերպություններ («Բաց հասարակություն ինստիտուտը», «Եվրասիա» հիմնադրամը, «Կառնեգի» հիմնադրամը) սկսեցին դրամաշնորհներ տրամադրել Հայաստանի գրադարանների համակարգչայնացման, ինտերնետ հասանելիության ապահովման, գրադարանավարների շրջանում վերապատրաստման դասըն-

⁴ <http://www.loc.gov/marc/bibliographic/>

⁵ <http://www.loc.gov/marc/authority/>

թացների անցկացման նպատակներով: Հրատարակվեցին մեթոդական մի շարք ուղեցույցներ^{6, 7}:

Կարելի է նշել, որ 1995-97 թթ. Հայաստանում «գրադարանների ավտոմատացում» հասկացությունը դուրս եկավ խանձարուրային վիճակից, և մասնագետների խմբին հասկանալի դարձավ այն գաղափարը, որ **տեղային լուծումներ առաջարկելով հնարավոր չէ հասնել միջազգային գրադարանագիտական տարածքում ընթացող փոփոխությունների հետևից, անհրաժեշտ են որակապես նոր լուծումներ:**

2. ՅՈՒՆԵՍԿՕ-Ի ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԻՆ

Ուսումնասիրելով աշխարհի տարբեր երկրներում գրադարանների ավտոմատացման ուղղությամբ իրականացված աշխատանքների փորձը^{8, 9, 10, 11}՝ գալիս ենք այն եզրահանգմանը, որ համացանցի տարածմանը զուգընթաց գրադարանների ավտոմատացման պատկերը զարգացող երկրներում կլինի նույնը, ինչ արդյունաբերական զարգացած երկրներում, սակայն զարգացող երկրների պարագայում մշտապես կզգացվի ֆինանսների անբավարարություն:

ՅՈՒՆԵՍԿՕ-ն իր «Տեղեկատվության հասանելիություն» ծրագրի շրջանակում 1985 թվականից սկսած նախագծեց և սկսեց անվճար տարածել «Միկրո CDS/ISIS» համակարգը¹²: Հիմնական նպատակն էր՝ բավարարել տեղեկատվական պահոցների աշխատողների պահանջները, ունենալ տվյալների շտեմարանի կառավարման մի համակարգ, որում ներառվող դաշտերի տեսականին, դրանց անվանումները և ֆունկցիոնալ հնարավորությունները, տվյալների մուտքագրման աշխատանքային թերթերը, տեղեկատվության արտածման ձևաչափերը, դաշտերի և ենթադաշտերի ինդեքսավորման տեխնիկաները

⁶ Գրադարանները փոփոխվող աշխարհում: Նոր տեխնոլոգիաներ, համագործակցության նոր ձևեր: Մեթոդական ձեռնարկ / Կազմ.՝ Ս. Զարգարյան, Ա. Շիրինյան, Կ. Խաչատրյան, Հ. Ավետիսյան: Խմբ.՝ Ս. Զարգարյան, Երևան, Հանրապետական գիտա-թժշկական գրադարան, 1996.- 68 էջ:

⁷ Ինտերնետ համակարգչային ցանց և գրադարաններ: Մեթոդական ձեռնարկ / Կազմ.՝ Ս. Զարգարյան, Ա. Շիրինյան, Կ. Խաչատրյան և ուրիշն. / Խմբ.՝ Ս. Զարգարյան, Երևան: Հանրապետական գիտա-թժշկական գրադարան, 1997.- 88 էջ:

⁸ Hopkinson, Alan. Library automation in developing countries: the last 25 years. - Information Development, 25 (4), 2009. ISSN 0266-6669. <https://eprints.mdx.ac.uk/2823/2/devlsm.pdf>

⁹ LM Anglada i de Ferrer. Twenty-five years of library automation in Catalonia - BiD #16, 2006. ISSN 1575-5886. <http://bid.ub.edu/16angla3.htm>

¹⁰ Adewoye, Alice A., J.A. Fadayomi, Bisi Adesina and Muyideen Abdulraheem. Around the globe: case studies in library automation: University of Ilorin Library, Ilorin, Kwara State, Nigeria. Library Hi Tech News, 18 (6), 2001.

¹¹ Tigran Zargaryan. "Armenian libraries on the Threshold of a Digital Era: Fifteen Years of Library Automation in Armenia". - International Cataloguing and Bibliographic Control. Vol. 36. No. 1, 2007.

¹² http://portal.unesco.org/ci/en/ev.php-URL_ID=2071&URL_DO=DO_TOPIC&URL_SECTION=201.html

ստեղծվելին առանց ծրագրավորողների միջամտության¹³։ Գործնականում համակարգը անսահմանափակ հնարավորություններ և գործելու ճկունություն էր ընձեռում գրադարանավարին, ով, չունենալով ծրագրավորման բնագավառի գիտելիքներ, կարող էր անհատական համակարգչի հետ երկխոսության միջոցով ստեղծել իրեն անհրաժեշտ շտեմարանի մոդելը (օր.՝ մատենագիտական գրառումների շտեմարան, ընթերցողների հաշվառման շտեմարան, համալրման շտեմարան, արխիվային նյութերի հաշվառման շտեմարան և այլն), ապա իրականացնել տվյալների մուտքագրումը։ Համակարգը հատկապես մեծ կիրառություն գտավ զարգացող երկրներում։ Աֆրիկայում առ այսօր այն լայնորեն շահագործվում է, Վրաստանի ազգային պառլամենտական գրադարանի բազմաթիվ շտեմարաններ ներկայումս էլ ձևավորվում են այս համակարգի օգնությամբ¹⁴։ «Միկրո CDS/ISIS» համակարգը նախագծվեց որպես 7-բիթանի համակարգ (CDS/ISIS), ապա, միկրոպրոցեսորների զարգացմանը զուգահեռ, դարձավ 8-բիթանի կոդավորմամբ համակարգ (micro CDS/ISIS), ավելի ուշ՝ 16-բիթանի (WinISIS), իսկ ներկայումս էլ շահագործվում է 32-բիթանի J-ISIS համակարգը¹⁵։

1996 թ. ֆրանսիայից ժամանած մի գրադարանավար Հայաստանի գրադարանային հանրությանը ներկայացրեց «Միկրո CDS/ISIS» համակարգը։ Այն միանգամից իր վրա բևեռեց հայ մասնագետների ուշադրությունը, քանի որ տարածվում էր անվճար, ՅՈՒՆԵՍԿՕ-ն իրականացնում էր համակարգի ընթացիկ զարգացումը, բոլոր լուծումները հիմնված էին միջազգային ստանդարտների վրա, ՅՈՒՆԵՍԿՕ-ն իր իսկ կառույցներում առկա գրադարաններում օգտագործում էր այդ համակարգը, և բոլոր ցանկացողներին տրամադրում էր ISO2709 ձևաչափով արտահանած մատենագիտական գրառումները, առկա էր քննարկումների էլեկտրոնային խումբ, որը հաճույքով արձագանքում էր օգտվողների հարցումներին։ Համակարգը թարգմանվեց հայերեն, սկսեց օգտագործվել տարբեր գրադարաններում և Հայաստանի ազգային արխիվում։ Ռուսաստանի պետական գիտատեխնիկական գրադարանը, հիմք ընդունելով «Միկրո CDS/ISIS» համակարգը, զարգացրեց IRBIS վճարովի ծրագրային փաթեթը¹⁶՝ ուղղված ռուսական շուկայի կարիքների բավարարմանը։ Այս

¹³ Համակարգի սկզբնական տարբերակը էլեկտրոնային հաշվիչ մեքենաների համար ՅՈՒՆԵՍԿՕ-ն նախագծել է 1960-ականների վերջերին։

¹⁴ <http://www.nplg.gov.ge/ec/en/changedb.html>

¹⁵ <http://www.unesco.org/new/en/communication-and-information/access-to-knowledge/free-and-open-source-software-foss/j-isis/>

¹⁶ <http://irbis.gpntb.ru/>

համակարգը իրականացնում է մուտքագրում համաձայն RusMARC ստանդարտի, ներառում է տարաբնույթ թեմատիկ խորագրեր, ունի Վեբ միջերես: Երկու ճյուղային գրադարաններ՝ Հանրապետական գիտատեխնիկական ու Հանրապետական գիտաթժշկականը, որոնց հավաքածուները հիմնականում ռուսերեն լեզվով են, դարձան IRBIS-ի բաժանորդներ և առ այսօր օգտագործում են այդ համակարգն իրենց առօրյա աշխատանքներում:

Հենց այս տարիներին էր, որ բարերարների կողմից Հայաստանի ամերիկյան համալսարանի (ՀԱՀ) և Երևանի պետական համալսարանի (ԵՊՀ) գրադարաններին տրամադրվեցին միջազգային շուկայում հեղինակություն ունեցող գրադարանային գործընթացների ավտոմատացման կոմերցիոն փաթեթներ: ՀԱՀ-ն սկսեց օգտագործել «EOS International» կազմակերպության Q-series ծրագրային փաթեթը, իսկ ԵՊՀ գրադարանը՝ «Իզմիրյան» հիմնադրամի դրամաշնորհի շրջանակում ստացավ Մեծ Բրիտանական EOSi կազմակերպության նախագծած “Tinlib” համակարգը: Հարկ է նշել, որ 1995 թ. օգտագործման մեջ եղած անհատական համակարգիչներն ապահովում էին աշխատանք 8-բիթանի կոդավորման աղյուսակներով, «Ուինդոզ 95» օպերացիոն համակարգով: 16-բիթանի կոդավորումը դեռևս գոյություն չունեւ, ուստի ԵՊՀ գրադարանի պարագայում լուրջ խնդիրներ ծագեցին, որպեսզի հնարավոր լինեւ ապահովել տվյալների մուտքագրումը, փնտրումը և արտածումը հայերեն: ԵՊՀ գրադարանի ավտոմատացման ընթացքը նկարագրված է հրատարակված երկու հոդվածում^{17, 18}:

Հայաստանի գրադարանների ավտոմատացման երկրորդ փուլը, որը տևեց մինչև 2000 թվականը, նշանակալից էր նրանով, որ հայ գրադարանավարները ստացան գործնական հնարավորություն աշխատելու կոմերցիոն համակարգերով, նախագծողների հետ մասնակցելու բիզնես քննարկումների, ներկայացնելու իրենց պահանջները: Ակնհայտ դարձան մասնագիտական մեծ փորձ ունեցող կազմակերպությունների նախագծած համակարգերի առավելությունները «տնայնագործ» եղանակով ստեղծվածների համեմատ:

Կատարվեց որակական մեկ քայլ ևս. Հայաստանի խոշոր գրադարանները ցանկություն հայտնեցին մասնակից դառնալու ավտոմատացման խոշորածավալ աշխատանքներին:

¹⁷ Zargaryan Tigran, Chris Kirk. “Some Aspects of Automation of Yerevan State University Library”. International Cataloguing and Bibliographic Control. 1998, Vol. 27. No. 4.

¹⁸ Զարգարյան Տիգրան: «Երևանի պետական համալսարանի գրադարանը որպես ուսումնագիտական հետազոտությունների համակարգման և տեղեկատվության կենտրոն»: Կրթությունը Հայաստանում անցումային շրջանում սեմինարի և գիտաժողովի զեկուցումների ժողովածու, Երևան, 2000, էջ 133-138:

3. ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄՏԱԾԵԼԱԿԵՐՊՈՒՄ՝ ՄԵԿՈՒՍԱՑՎԱԾ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԻՑ ԴԵՊԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ՄՈԴԵԼՆԵՐ

2000թ. «Բաց հասարակության աջակցության» հիմնադրամը Հայաստանի գրադարանային հանրության հետ սկսեց քննարկումների շարք՝ նպատակ ունենալով ֆինանսավորելու «Հայաստանի գրադարանների համակարգչային ցանցի ձևավորում» պայմանական անվանումով նախագիծը: Նախագծի նպատակներն էին.

- աջակցել Հայաստանի գրադարաններին՝ դառնալու թվային պաշարների ձևավորման առաջատար կենտրոններ
- Էլեկտրոնային համահավաք գրացուցակի ձևավորման օգնությամբ բարելավել Հայաստանի և արտերկրի օգտվողների հասանելիությունը առկա տեղեկատվական պաշարներին,
- կրթական համակարգին տրամադրել բարձրարժեք տեղեկատվական պաշարներ
- օգնել հայաստադ բովանդակության ստեղծմանը և հայ ազգի ստեղծած գրավոր ժառանգությունը մատչելի դարձնել աշխարհին,
- նպաստել գրադարանագիտության և տեղեկատվական գիտության բնագավառներում մշակված միջազգային ստանդարտների ներկայացմանը և օգտագործմանը հայ գրադարանավարների շրջանում:

Նախագիծը ներառում էր հետևյալ փուլերը.

- Գրադարանային կոնսորցիումի ձևավորում, որը լինելով կոլեգիալ կառավարման մարմին՝ պետք է համակարգեր համակարգչային ցանցի ձևավորման աշխատանքները, բանակցեր գրադարանային արտադրանք թողարկող և ծառայություններ տրամադրող կազմակերպությունների հետ բաժանորդագրության մատչելի գների շուրջ:
- Մասնակից գրադարանների միջև տվյալների փոխանակման արագագործ ցանցի անցկացում (որտեղ հնարավոր է օգտագործելով լուսամանրաթելիկային կապուղիները):
- Գրադարանների վերազինում սպասարկող կայաններով, հեռահաղորդակցման սարքավորումներով և անհատական համակարգիչներով:
- Բազմալեզու քարտազման հնարավորությամբ գրադարանային ավտոմատացված համակարգի ձեռք բերում:
- Հայաստանի գրադարանների համահավաք գրացուցակի ձևավորում:

- Գրադարանավարների համար ուսուցողական դասընթացների և վարժանքների կազմակերպում ու անցկացում:
- «Հեղինակավոր գրառումների» և «Խորագրերի» բազմալեզու շտեմարանների ձևավորում:

Միջազգային փորձագետների հետ քննարկումներից հետո Հիմնադրամը հավանություն տվեց ներկայացված նախագծին: Ստեղծվեց կոնսորցիում¹⁹, նրա կողմից պատրաստվեց գրադարանների վերազինման տեխնիկական փաստաթուղթ, 2001- 2005թթ. աշխատանքների համար ներկայացվեց բյուջե, որը և հաստատվեց Հիմնադրամի կողմից: 2001թ. Հայաստանի գրադարանների համահավաք գրացուցակի ստեղծման տեխնիկական փաստաթղթի հիման վրա հայտարարվեց ինտեգրացված գրադարանային համակարգի ընտրության միջազգային մրցույթ: Բնական է, որ հիմնական պայմաններից մեկը բազմալեզու միջավայրում հայերեն այբուբենի աջակցումն էր համակարգի կողմից: Իրենց արտադրանքները ցանկություն հայտնեցին ցուցադրել մի քանի կազմակերպություններ, որոնցից մրցութային հանձնաժողովը հաղթող ճանաչեց իսրայելական «Էքսլիբրիս» կազմակերպության «Aleph 500» համակարգը: Ձեռք բերվեցին երկու SUN 450 դասի սպասարկող կայաններ, մատենագիտական գրառումների ձևավորման համար մասնակից գրադարանները ստացան «Պենտիում 4» դասի անհատական համակարգիչներ, ապա գրադարանավարների համար կազմակերպվեցին վերապատրաստման դասընթացներ: Այս մասնագետները հետագայում իրենց գրադարաններում ղեկավարեցին համահավաք գրացուցակի ձևավորման աշխատանքները: Հիմնադրամի պայմանագրի ժամկետի ավարտից հետո ՀՀ Մշակույթի նախարարությունը պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի շրջանակում շարունակվում են ֆինանսավորել համահավաք գրացուցակի ձևավորման աշխատանքները՝ ապահովելով «Aleph 500» համակարգի տարեկան շահագործման ծախսերի վճարումը «Էքսլիբրիս» կազմակերպությանը: Ուժերի նման համատեղումը բերեց ֆինանսական ծախսերի զգալի կրճատման, ապահովեց բազմաթիվ գրադարանների մասնակցությունը համահավաք

¹⁹ 2015 թ. դրությամբ կոնսորցիումի անդամներ են հանդիսանում Հայաստանի ազգային գրադարանը, Հայաստանի ազգային գրապալատը, Խնկո Ապոր անվան մանկական ազգային գրադարանը, Երաժշտագիտական գրադարանը, ՀՀ ԳԱԱ Հիմնարար գիտական գրադարանը, Գիտատեխնիկական գրադարանը, Գիտաբժշկական գրադարանը, Երևանի պետական համալսարանի, Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի, Լեզվաբանական համալսարանի, Երևանի պետական բժշկական համալսարանի, Հայաստանի ազգային ագրարային համալսարանի գրադարանները, Ավ. Իսահակյանի անվան կենտրոնական քաղաքային գրադարանը:

գրացուցակի ձևավորմանը, նպաստեց գրադարանավարների գիտելիքի հարստացմանը²⁰:

XX դարի վերջի մեկ այլ մարտահրավեր է բաժանորդագրությունը բարձրարժեք էլեկտրոնային գիտական հրատարակություններին, որին գրադարանները պետք է դիմակայեն համատեղ: Արևմտյան հրատարակիչները վաղուց դադարել են թղթային գիտական ամսագրերի հրատարակումը՝ դրանք փոխարինելով էլեկտրոնային համարժեքներով, էլեկտրոնային հրատարակությունների գներն էլ տարեցտարի շարունակաբար աճելու միտում ունեն: Զարգացած երկրների բազմաթիվ համալսարանական գրադարաններ, չդիմանալով հրատարակիչների կողմից թելադրվող բարձր գներին, կրճատում են բաժանորդագրության իրենց փաթեթները: Բնական է, որ զարգացող երկրների գրադարանները ընդհանրապես ի վիճակի չեն իրականացնելու պահանջվող բաժանորդագրությունները: Սա նշանակում է, որ տուժում է գիտական հետազոտությունների մակարդակը, կրթական գործընթացներում էլ հնարավոր չէ ընդգրկել այդ ամսագրերում հրատարակված նյութերի հետ աշխատանքը: Գրադարանային կոնսորցիումի ստեղծմանը զուգահեռ կազմավորվեց նաև «Հայաստանի էլեկտրոնային գրադարան» միավորումը²¹, որի ստեղծման հիմնական նպատակն էր բանակցել հրատարակիչների հետ անդամ կազմակերպությունների համար գեղջված գներով էլեկտրոնային գիտական հրատարակություններին բաժանորդագրություն իրականացնելու համար: Ներկայումս «Հայաստանի էլեկտրոնային գրադարան» միավորման անդամներ են հանդիսանում բոլոր համալսարանական գրադարանները, ճյուղային, հանրային և մարզային գրադարանները, ԳԱԱ համակարգի ինստիտուտները: Կոնսորցիումն իր գործունեությունն է ծավալում երեք հիմնական ուղղություններով՝ լիցենզավորված հրատարակությունների բաժանորդագրություն, բաց մատչելիության հրատարակչական մոդելների ներկայացում և տարածում, հեղինակային իրավունքի հարցեր:

Հայաստանի գրադարանների ավտոմատացման այս փուլը (2000-2013 թթ.) նշանավորվեց նրանով, որ գրադարանները համատեղեցին ջանքերն իրենց առջև ծառացած խնդիրների լուծման համար: Մարզային գրադարանները ևս միացան համահավաք գրացուցակի ձևավորման աշխատանքներին:

²⁰ Զարգարյան Տիգրան: «Հայաստանի գրադարանների համահավաք քարտարանը՝ գործողության մեջ», Գիտություն և տեխնիկա, Երևան, 2003, թ. 5, էջ 2-5:

²¹ <http://www.eifl.net/country/armenia>

TIGRAN ZARGARYAN

FROM THE HISTORY OF DEVELOPING DIGITAL LIBRARIES IN ARMENIA:
25 years of library automation in Armenian

SUMMARY

The history of automation and computerization of Armenian libraries fulfilled its 25 years – a short time for a human measurement. During this period of time Armenia became an independent state, moved from the centralized economy management system to the market based economy, integration processes with European Union structures are in an active phase. Libraries are also in a renovation and cardinal reconstruction process. This article presents the history of the library automation in Armenia from its beginnings, describes the evolution and challenges faced by the library community on its difficult way to the digitization. Could happen that I haven't described some facts and events in more details, or even, I haven't mentioned about them. I hope that those knowledgeable about these details will forgive such type of omissions, which can take place in such brief overview article.

Շարունակությունը հաջորդ համարում:

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԳՐՔԻ ՁԵՎԱԶՍՓԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՀԱՅԱՏԱՌ ՆՅՈՒԹԵՐԻ ՊԱՐԱԳԱՅՈՒՄ

Բանալի բառեր՝ գրադարանների ավտոմատացում, թվային գրադարաններ, էլեկտրոնային գիրք, տեղեկատվություն

Keywords. Digital Libraries, Library Automation, Electronic Book, Information

Տասնամյակների ընթացքում ձևավորված գրադարանային հավաքածուները ենթարկվել են բազմաթիվ փոփոխությունների՝ սկսած համալրման եղանակներից, վերջացրած պահպանման և օգտագործման կանոններով: Այսօր գրադարանները զարգացման նոր փուլում են, ինչն ուղեկցվում է էլեկտրոնային միջավայրի և թվային տեխնոլոգիաների ակտիվ ազդեցությամբ:

Ամեն ինչ տանում է նրան, որ ընթերցանության համար էլեկտրոնային հրատարակությունները սկսում են մրցակցել իրենց թղթային համարժեքների հետ, և էլեկտրոնային գրքերի պահանջը օրեցօր մեծանում է: Գիրքը կա և կմնա գրադարանային սպասարկման կենտրոնը, իսկ էլեկտրոնային գիրքը, ըստ էության, գրքի նոր ձևն է: Եթե մենք ուշադրություն չդարձնենք նոր զարգացումներին, ապա չենք կարող ապահովել որակյալ սպասարկում:

Հավաքածուների արդիականացման գլխավոր խնդիրներից է թվային նյութերի համալրման ընդլայնումը: Աշխարհի առաջատար գրադարանները ներկայումս ձեռք բերած նյութերից շատերը պահպանում են միայն էլեկտրոնային ձևաչափով: Մեծանում է էլեկտրոնային գիտական պարբերականների, էլեկտրոնային գրքերի, թերթերի, ուսուցողական նյութերի, հանրագիտարանների և տեղեկատվության քանակը: Տպագիր հրատարակությունների համեմատությամբ էլեկտրոնային հրատարակություններն ունեն բազմաթիվ առավելություններ՝ հսկայածավալ տեղեկատվության մեջ արագ որոնման, պահպանվող

տեղեկատվության բազմակի օգտագործման հնարավորություն, դարակների սահմանափակում, ինտերակտիվություն և այլն:

Բազմաթիվ գրադարաններ այսօր իրենց գործունեության առաջնային նպատակն են համարում հավաքածուների հնարավորինս արագ թվայնացումը՝ հեղինակային իրավունքի պահանջներին համապատասխան:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ներկա ժամանակաշրջանում գրեթե բոլորն ունեն համակարգիչ, բջջային հեռախոս, ընթերցիչ, պլանշետ կամ այլ սարքեր, որոնք հնարավորություն են տալիս գիրք կարդալ, հարկավոր է հնարավորինս հարմար ձևաչափով էլեկտրոնային գրքեր պատրաստել ու տրամադրել օգտվողներին: Այս առումով մեր գիտական պոտենցիալի զարգացման և առաջընթացի համար շատ կարևոր են հատկապես հայատառ էլեկտրոնային նյութերի ստեղծման աշխատանքները: Համացանցում տեղադրելու համար էլեկտրոնային գիրքը պետք է պատրաստված լինի հարմար ձևաչափով և ունենա ներքեռնման հնարավորություն:

Օգտվողների համար կա ձևաչափի ընտրության խնդիր: Գոյություն ունեն բազմաթիվ ձևաչափեր՝ FB2, EPUB, MOBI, PDF, RTF, TXT և այլն: Ընթերցիչներ արտադրող կազմակերպությունների կողմից նախագծված են ձևաչափեր հենց իրենց սարքերի համար: Իհարկե նախընտրելի է, երբ գիրքն առաջարկվում է տարբեր ձևաչափերով¹:

Շատ ընթերցողների, սովորաբար բավական է EPUB ձևաչափը, որին աջակցում են գրեթե բոլոր ընթերցիչները (բացառությամբ Kindle-ի): Այս ձևաչափով գիրքն ունի փոքր չափ, լավ կառուցվածք, թույլ է տալիս ներառել բովանդակությունը, նկարազարդումները և այլն:

Kindle-ի համար պետք է փնտրել գրքեր MOBI ձևաչափով կամ շատ ավելի հեշտ է պարզապես փոխակերպել նույն EPUB կամ FB2 ձևաչափերը: Այդ ընթացակարգը իրականացվում է արագ և հեշտ՝ հատուկ ծրագրերի օգնու-

¹ Լավագույն օրինակը www.litres.ru կայքն է, ուր կարելի է գտնել էլեկտրոնային տարբեր ձևաչափեր:

թյամբ: Նման ծրագրի շարքում մեծ հեղինակություն է վայելում Calibre ebook management ծրագիրը (պաշտոնական կայք՝ <http://calibre-ebook.com>): Calibre-ն ազատ և բաց կոդով ծրագիր է, որի միջոցով իրականացվում է թվային գրադարանի տարբեր ձևաչափերով էլեկտրոնային գրքերի ընթերցումը, ստեղծումը և պահպանումը:

Calibre ծրագիրը կարող է փոխարկել մի առանձին գիրք, ընտրված թղթապանակ կամ մի ամբողջ թվային գրադարան: Փոխակերպելիս կարելի է խմբագրել գրքի տարբեր դաշտեր, ավելացնել ցանկալի կազմ և այլն: Ծրագիրն անվճար է, ինչը կարևոր առավելություններից մեկն է: Բացի այդ, այն շատ հեշտ է տեղադրել և ունի հարմար միջերես: Ծրագրի կայքը անգլերեն է, բայց ծրագրի միջերեսը ներառում է մի շարք լեզուներ, այդ թվում՝ ռուսերեն²:

Ցանկացած ձևաչափ, բացի DOC-ից, կարելի է փոխարկել մեկ ուրիշով: DOC-ի դեպքում այն կարելի է փոխել RTF, HTML կամ DOCX, հետո նոր Calibre-ով փոխակերպել մեզ անհրաժեշտ ձևաչափի:

MOBI-ին XHTML-փաստաթղթի տեսքով էլեկտրոնային գրքերի ձևաչափ է: MOBI-ն, ըստ էության, հանդիսանում է կոնտեյներ (ZIP-արխիվի անալոգ): Օգտվողը տեսնում է միայն մեկ ֆայլ, բայց իրականում ներսում «թաքնված են» մի քանի այլ ֆայլեր՝ գրքի տեքստը, նկարազարդումներ և այլն:


MOBI (PRC, AZW) գրքերի տեքստի յուրաքանչյուր տարրը նկարագրում են այսպես կոչված թեգերը: Արդյունքում ստացվում է մի գիրք, որի մեջբերումները ձևակերպված են մի ձևով, հիմնական տեքստը՝ այլ, անոտացիաները՝ երրորդ ձևով, տողատակի ծանոթագրությունները՝ չորրորդ ձևով և այլն: MOBI ձևաչափը աջակցում է գրքերի այնպիսի տարրեր, ինչպիսիք են նկարները, կազմերը, աղյուսակները, ամփոփումները, մեջբերումները, վերնագրերը, ենթաբաժինները և այլն: Այն նաև աջակցում է թավ, շեղ և ընդգծված տառաձևերը: Յուրաքանչյուր գրքի տարր ֆորմատավորվում է որոշակի ձևով, արդյունքում էլեկտրոնային գրքի ընդհանուր տեսքը մոտեցվում է իրական թղթայինին: MOBI ֆայլում սովորաբար կառուցվում է նաև գրքի ամփոփ նկարագրությունը, նրա վերնագիրը, հեղինակի անունը, ժանրը, հրապարակման տարին, և երբեմն էլ այլ տվյալներ, ինչը հնարավոր չէ TXT, RTF և նույնիսկ DOC ֆայլերի

² Ծրագիրը կարելի է ներբեռնել <http://calibre-ebook.com/download> կայքից:

դեպքում: MOBI-ն հանդիսանում է բաց ֆորմատ (Open eBook): MOBI գրքերը կարելի է տարածել անսահմանափակ և բացել ցանկացած քանակի սարքերի վրա: Յուրաքանչյուր ծրագիր MOBI-ով բացելիս պահպանում է գրքի սկզբնական ֆորմատավորումը, բայց թույլ է տալիս փոխել մի շարք պարամետրեր՝ չափը, տառատեսակի ոճը, տողերի միջև տարածությունը (փոփոխման պարամետրերը կախված են կոնկրետ ծրագրից):

Գիտությունների ազգային ակադեմիայի Հիմնարար գիտական գրադարանում ՀՀ ԳԱԱ ամսագրերը թվայնացնելիս, որպես հրատարակությունների կառավարման համակարգ կիրառվում է Eprints ծրագրային միջավայրը: Այս համակարգը կիրառվում է ԳԱԱ ամսագրերի թվային տարբերակների մատենագիտական նկարագրության իրականացման և բուն հոդվածների թվային պատճենները հասանելի դարձնելու համար: Այդ ամսագրերի հոդվածները կայքում տեղադրվում են PDF ձևաչափով, որը ընդունված ձևաչափ է անհատական համակարգիչների պարագայում:

«Պատմա-բանասիրական հանդես»-ի պարագայում PDF ձևաչափին զուգահեռ հոդվածները ներկայացվում են նաև MOBI ձևաչափով: Սա հնարավորություն է ստեղծում հոդվածները կարդալ ինչպես անհատական համակարգիչների կիրառմամբ, այնպես էլ տաբլետային սարքերի միջոցով: Նկար 1-ում բերված է նման մի հոդված:



Նկ. 1 PDF և MOBI ձևաչափերով պատրաստված հոդված

MOBI ձևաչափի լավ որակ ապահովվելու համար պետք է փոխակերպվող ձևաչափը լինի DOCX, ընդ որում՝ կոդավորումը պետք է լինի 16 բիթանի, այն է՝ ՅՈՒՆԻԿՈԴ:

Թվային դարաշրջանում հայագիտությունը և հայկական մշակույթը մրցունակ դարձնելու համար առաջնահերթ խնդիր է էլեկտրոնային միջավայրը հայերեն և հայկական բովանդակությամբ հագեցնելը, ինչը ենթադրում է հայալեզու գրադարանային նյութերի զանգվածային թվայնացում, ինչպես նաև տարբեր ընթերցիչների համար նյութերի համապատասխան ձևաչափերով թողարկում:

Ներկայումս ողջ աշխարհում էլեկտրոնային գրքերը հասարակության ավելի լայն շերտերին են հասանելի դառնում, հետևաբար գրադարանները պետք է ստեղծեն հնարավորություն՝ տրամադրվող էլեկտրոնային գրքերը մեծ թվով ծրագրերի և սարքերի միջոցով ընթերցելու համար՝ ներառյալ պլանշետները և բջջային հեռախոսները: Հաշվի առնելով այս բոլոր հանգամանքները, էլեկտրոնային գրքի ճիշտ ձևաչափի ընտրությունը և դրա դյուրին ներբեռնելիության ապահովումը հանդիսանում է կարևորագույն խնդիր:

NUNE AGHOYAN INTRODUCING E-BOOK FORMATS AND THEIR APPLICATIONS FOR ARMENIAN SCRIPT MATERIALS

SUMMARY

Electronic books had changed the approaches of end users, and lot of people worldwide now are actively using eBook handheld readers like Kindle, tablet devices, computers, mobile phones. That is why we need to develop and suggest new formats for electronic books. This task is especially important for Armenian language content. Testing of different eBook formats for Armenian language content resulted to suggest MOBI as a most suitable format.

The process of creating MOBI format e-articles for the academic publication ‘Historical-Philological Journal’ of the National Academy of Sciences of Armenia is described.

ՇԻՐԻՆՅԱՆ ԱՆՆԱ

Հանրապետական գիտաբժշկական գրադարանի տնօրեն

ՍԱՖԱՐՅԱՆ ՄԱՐԻՆԱ

Հանրապետական գիտաբժշկական գրադարանի փոխտնօրեն

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳԻՏԱԲԺՇԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ. ԵՐԵՎ, ԱՅՍՕՐ ԵՎ ՎԱՂԸ

Բանալի բառեր՝ Հանրապետական գիտաբժշկական գրադարան, բժշկական գրադարաններ, գրադարանային տեղեկատվական ծառայություններ, 21-րդ դարի գրադարան

Keywords. Republican Scientific Medical Library, medical libraries, library information services, 21-st century library

Առանց գրադարանների մենք ի՞նչ ունենք: Մենք չունենք ոչ անցյալ, ոչ էլ ապագա:

ՌԵՅ ԲՐԵՂԲԵՐԻ

ՆԱԽԱԲԱՆ

76 տարի է, ինչ առողջապահության ոլորտում գործում է Հանրապետական գիտաբժշկական գրադարանը /ՀԳԲԳ/, որը տեղեկատվական գրադարանային ծառայություններով սպասարկում է հանրապետության բոլոր բուժաշխատողներին, բժշկական ուսումնական հաստատությունների ուսանողներին, դասախոսներին, հետազոտողներին՝ ներառյալ մարզերում աշխատող բժիշկներին: Գրադարանում կենտրոնացված է ավելի քան կես միլիոն միավորից կազմված կենսաբժշկական գրականության և տեղեկատվական աղբյուրների լավագույն հավաքածու: Այստեղ կան բժշկական էլեկտրոնային և տպագիր գրքեր, ամսագրեր, սեղմագրեր, լազերային սկավառակներ և տեսալսողական նյութեր:

ԵՐԵՎ

Անցյալ դարի 30-ական թվականների վերջին, երբ Խորհրդային Միությունը կանգնած էր Երկրորդ համաշխարհային պատերազմի

նախաշեմին, իսկ երկրում տիրում էր ռեպրեսիան, ԽՍՀՄ Առողջապահության ժողովուրդի որոշմամբ Խորհրդային միության բոլոր հանրապետություններում ստեղծվեցին հանրապետական գիտական բժշկական գրադարաններ, որոնք պետք է ապահովեին առողջապահության ոլորտի տեղեկատվական դաշտը¹: Այսպես 1939թ. հիմնադրվեց գիտաբժշկական գրադարանը, որպես առողջապահության բնագավառի հիմնարար գրադարան: Մեծ էր գրադարանի դերը հատկապես Հայրենական մեծ պատերազմի տարիներին: Այն մասնագիտական գրականություն էր տրամադրում հանրապետությունում տեղակայված էվակոհոսպիտալների բժիշկներին: 1946թ. տեղի ունեցած ջրհեղեղի հետևանքով գիտաբժշկական գրադարանի հավաքածուի մեծ մասը ոչնչացվեց: Գրադարանն իր փոքրաթիվ հավաքածուով միավորվեց բժշկական ինստիտուտի գրադարանի հետ և միայն 1949թ. այն կրկին առանձնացվեց:

Բացի իր հիմնական առաքելությունից, որն է՝ համալրել, կազմակերպել, պահպանել և ընթերցողներին տրամադրել կենսաբժշկական ոլորտի տպագիր տեղեկատվական աղբյուրները, գիտաբժշկական գրադարանը 1951 թվականից ձեռնամուխ եղավ բժշկական գրադարանների ցանցի /ԲԳՑ/ համակարգմանը և մեթոդական ղեկավարմանը: ԲԳՑ-ի մեջ ներառված էին երկրի բժշկական ուսումնական հաստատությունների, նոր կազմավորվող գիտահետազոտական ինստիտուտների և հիվանդանոցների, ինչպես նաև շրջանային կենտրոնական հիվանդանոցների գրադարանները: ՀԳԲԳ-ն ակտիվորեն համագործակցում էր Խորհրդային միության հանրապետությունների հանրապետական գիտաբժշկական գրադարանների՝ հատկապես Ռուսաստանի կենտրոնական գիտաբժշկական գրադարանի հետ, ակտիվորեն մասնակցում էր համամիութենական տարբեր միջոցառումների: 1980թ. մասնակցելով Լենինի ծննդյան 110-ամյակին նվիրված միջոցառմանը՝ ՍՍՀՄ Կուլտուրայի մինիստրության կողմից ստացել է հաղթողի դիպլոմ:

1988թ. ահեղ երկրաշարժից հետո գրադարանի գործունեությունը կտրուկ փոխվեց: Հայ Օգնության Ֆոնդի /ՀՕՖ/ մարդասիրական օգնության շրջանակներում գիտաբժշկական գրադարանը համալրվեց ամերիկյան լավագույն բժշկական ամսագրերով և գրքերով: ՀՕՖ-ի աջակցությամբ ստացված առաջին համակարգիչները և առաջին լազերային սկավառակները, բժշկական տեղեկատվության Medline շտեմարանը արմատապես փոխեցին

¹ Ավելի մանրամասն տես Оганесян Л.А. История медицины в Армении, Ереван, 1947:

տեղեկատվության որոնման ծառայության որակը: Այս ամենը նորույթ էր ոչ միայն գրադարանի, այլև ողջ հանրապետության համար: 1990–ականներին գրադարանում ներդրվեցին համակարգչային և հեռահաղորդակցության տեխնոլոգիաները: Կազմակերպվեցին համակարգչային դասընթացներ թե՛ գրադարանավարների, թե՛ բժիշկների համար: Խոշոր գրադարանների հետ մեկտեղ գիտաբժշկական գրադարանը ներգրավված էր Հայկական գրադարանային միության ձեռնարկներին և միջոցառումներին:

76 տարիների պատմության ընթացքում գրադարանը հաղթահարել է շատ դժվարություններ: Բազմաթիվ անգամ տեղափոխվել է՝ կրելով կորուստներ, վերսկսելով իր գործունեությունը գրեթե սկզբից: 2003թ. ևս գրադարանի պատմության տխուր էջերից է: Տարիների կենսագրություն ունեցող ՀԳԲԳ–ն լուծարվում էր տարածքից զրկվելու պատճառով: Վտանգված էին տարիների ձեռքբերումները, գրադարանավարները զրկվում էին աշխատանքից: Ամիսներ տևող հուզումների, պայքարի այդ ամբողջ շղթան թվում էր ապարդյուն: Սակայն հուսահատության այդ պահին Կառավարության որոշմամբ գրադարանը տեղափոխվեց ԳԱԱ համակարգ և զբաղեցրեց Ռուբինյանց 29 հասցեում տեղակայված շենքը և ներկայիս տարածքը: Անհրապույր և ոչ բարվոք վիճակում գտնվող շենքում գրադարանն ամեն ինչ սկսեց նորից:

ԱՅՍՈՐ

Գրադարանի այգու մուտքի դուռը դանդաղ և անձայն փակվում է՝ հրավիրելով մեկ այլ աշխարհ, ուր մաքուր օդն ու կանաչ բնությունը կտրում են քաղաքի աղմուկից, ուղղորդում գիտելիքի անծայրածիր աշխարհ և տրամադրում ընթերցանության: Կանաչ թփերով եզերված նեղլիկ արահետը, որը պայմանականորեն անվանում ենք «գիտության արահետ», ընթերցողին տանում է դեպի դեռևս խորհրդային տարիներին կառուցված շենքը, որտեղ տեղակայված է գրադարանն իր կես միլիոնից ավել միավոր գրականությամբ:



Չնայած շենքն այնքան էլ հարմար չէ գրադարանային սպասարկման ժամանակակից ծառայություններին, այնուամենայնիվ, այստեղ իրականացվում են այնպիսի արդիական գործառույթներ, որոնք նպաստում են բժշկական կրթության, բժշկագիտության և կլինիկական բժշկության զարգացմանը: Նշենք դրանցից մի քանիսը.

1. Կրթական՝ Գրադարանի կարևոր գործառույթներից է տեղեկատվական գրագիտությանը նպաստող ուսուցողական դասընթացների կազմակերպումը բժշկական գրադարանավարների և բժիշկների համար: Դասընթացների ընթացքում սովորեցնում ենք ինչպես որոնել, գտնել, գնահատել բժշկական հավաստի տեղեկատվությունը էլեկտրոնային տվյալների շտեմարաններում: Գրադարանում հաճախ դասախոսություններ են կազմակերպվում բժիշկների համար: Օգտագործելով հեռահաղորդակցման տեխնոլոգիաները՝ հանրապետության անվանի մասնագետներն առցանց դասախոսություններ և քննարկումներ են կազմակերպում նաև մարզերում աշխատող բժիշկների համար (telemedicine): Երիտասարդ գիտնականի դպրոցի շրջանակներում արդեն 3-րդ անգամ գրադարանում անցկացվում են դասախոսություններ և գործնական պարապմունքներ, որոնց նպատակն է ծանոթացնել ասպիրանտներին և հայցորդներին գիտական ուսումնասիրություններ կատարելու, ինչպես նաև գիտական հոդվածներ գրելու սկզբունքներին:

2. Գիտական՝ Իր անվանը համապատասխան՝ գիտաբժշկական գրադարանը նպաստում է նաև բժշկական գիտության զարգացմանը: Այն համալրվում է արտասահմանյան գիտական ամսագրերով, գրքերով, ուղեցույցներով և այլ տեղեկատվական աղբյուրներով: Բազմաթիվ ատենախոսություններ և թեզեր պատրաստվում են գրադարանի տեղեկատվական աղբյուրներից վերցված տվյալների հիման վրա: Երիտասարդ մասնագետների և հետազոտողների համար ըստ պահանջված թեմաների կազմվում են մատենագիտական ցանկեր, գրականության ամփոփումներ և սեղմագրեր:

3. Կլինիկական բժշկություն՝ Վերջին մի քանի տասնամյակների բժշկությունը հիմնվում է բացառապես ապացուցողական բժշկության վրա: Այսինքն՝ յուրաքանչյուր միջամտություն իրականացնելիս հաշվի է առնվում կլինիկական հետազոտություններից ստացված ապացույցները: Պրակտիկ բժիշկներին օգնելու համար գրադարանը տրամադրում է ապացուցողական բժշկության տեղեկատվական էլեկտրոնային և թղթային աղբյուրներ, կլինիկական ուղեցույցներ, գործելակարգեր: Գրադարանն ավելի քան 10 տարի է ինչ հրատարակում է «Բժշկական սեղմագրերի հայկական հանդեսը», որով փորձ է արվում տարածել գիտելիքներ ապացույցների վրա հիմնված բժշկության վերաբերյալ:

Հաղթահարելով տարբեր ժամանակների խոչընդոտները, ձեռք բերելով ոչ միայն ավանդույթներ, այլև ուրույն աշխատելաճ՝ ՀԳԲԳ-ն այսօր իրականացնում է բազմաբնույթ և ծավալուն գործունեություն, որի արդյունքում լայն ճանաչում է ստանում գրադարանային և բժշկական հանրության շրջանում: Պատահական չէ, որ 2005թ. մասնակցելով առողջապահության բնագավառի «ԿՈՉՈՒՄ» ազգային մրցանակաբաշխությանը՝ ՀԳԲԳ-ն նվաճեց մրցանակ **«Ոչ բժշկական կազմակերպություններ, որոնք նպաստում են բժշկագիտության զարգացմանը»** անվանակարգում: Այդ մրցանակը գրադարանի լուրջ նվաճումներից է, նրա աշխատանքի գնահատականը, պարտավորեցնող և ոգևորող մի փաստ:

Իսկ վերջերս գիտաբժշկական գրադարանի այգին ձևափոխվեց և դարձավ նոր տիպի ժամանակակից, էկոլոգիապես մաքուր և կանաչ անկյուն, որն ընդունված է նաև անվանել «կանաչ գրադարան»: Ձևավորվեց բացօթյա ընթերցարան, որտեղ Wi-Fi կապի միջոցով հասանելի է համացանցը և ընթերցողները կարող են օգտվել բժշկական էլեկտրոնային գրքերից և ամսագրերից: 11 տարի առաջ, երբ գրադարանը տեղափոխվեց ոչ այնքան գրավիչ նոր վայրը, այս ամենի մասին կարելի էր միայն երագել: Այսօր այն ոչ միայն իրական է, այլև շատ ընթերցողների համար գրադարանը դարձել է ցանկալի վայր, որտեղ

անցկացվում են զանազան միջոցառումներ՝ հանդիպումներ, քննարկումներ, դասախոսություններ:



ՎԱՂԸ

Կարծում ենք, որ գիտաբժշկական գրադարանը՝ որպես բժշկական տեղեկատվության ամենամեծ կենտրոն, մշտապես կունենա իր տեղն ու դերը մեր երկրի առողջապահության համակարգում: Սակայն այն պետք է միջազգային գրադարանային և տեղեկատվական համակարգերից ետ չմնա, այլ ընդհակառակը, համահունչ կերպով զարգանա՝ համապատասխանելով 21-րդ դարի ժամանակակից գրադարանի մոդելին:

Իսկ ո՞րն է 21-րդ դարի գրադարանի մոդելը: Գոյություն ունեն մի քանի բնորոշումներ: Իհարկե, գրադարանի հիմնարար գաղափարը պետք է փոխվի:

19-րդ դարի գրադարանի հիմնական գաղափարը՝ մահացած հանճարների մտքերի զմոտումն էր: 20-րդ դարի գրադարանը ոչ ուղղակի, այլ ստացված գիտելիքի/տեղեկատվության պահոց էր: 21-րդ դարի գրադարանը հանդես է գալիս որպես գիտելիքը տնօրինող, իսկ գրադարանավարը՝ որպես ուղղակիորեն ստացվող գիտելիքի մենեջեր: Ներկա գիտելիքի դարաշրջանում կծաղկեն այն կազմակերպությունները և անհատները, որոնք կկիրառեն գիտելիքը, որպեսզի ստեղծեն գիտելիք և կկազմակերպեն գիտելիքը, որպեսզի արտադրվի գիտելիք: Ժամանակակից գրադարանների և գրադարանավարների դերը

նույնպես փոխվում է: Նրանք պետք է օգտվեն հնարավորություններից, որպեսզի մասնակցեն գրադարանների փոխակերպմանը՝ որպես առցանց գիտելիքի սերվերների²: 21-րդ դարի գրադարանները դառնում են գիտելիքի և տեղեկատվության պորտալներ, որոնք հասանելի են օգտվողներին 24 ժամ, ցանկացած պահին և ցանկացած տեղից: Ի տարբերություն մյուս տեղեկատվական պորտալների՝ գրադարանները տրամադրում են հավաստի, զուլաժ և հանրագիտարանային բնույթի տեղեկատվություն: Չնայած այն կանխատեսումներին, որ «վիրտուալ գրադարանները» անխուսափելի են, այնուամենայնիվ շարունակվում են ստեղծվել նոր գրադարաններ, որոնք շատ հաճախ համալրվում են նաև տպագիր հավաքածուով: Հետևաբար՝ գրադարանները կշարունակեն գոյություն ունենալ, որպես ֆիզիկական և վիրտուալ միջավայր, որտեղ օգտվողները կստանան հավաստի ու ճշգրիտ գիտելիքներ, ինչպես նաև որակյալ տեղեկատվական ծառայություններ: Հարմարավետ պայմաններով, տեղեկատվական տեխնոլոգիաներով հագեցած այս միջավայրում կհանդիպեն և միմյանց հետ կշփվեն թե՛ մասնագետները, թե՛ գրադարանավարները և թե՛ հանրության ներկայացուցիչները³: Գրադարանների հրապուրանքը տարբեր մտքերի կապակցման մեջ է, իսկ 21-րդ դարի գրադարանը հնարավորություն է ընձեռում հաստատել այդ կապը⁴:

Մենք լավատես ենք: Համոզված ենք, որ ՀԳԲԳ-ն դեռ շատ ծրագրեր կիրականացնի: Կգա ընթերցողների մի նոր սերունդ իր ձգտումներով, պահանջներով և տեղեկատվության անվերջ հեղեղում, ժամանակին համընթաց քայլող գիտաբժշկական գրադարանը կառաջնորդի նրանց գիտելիքների անձայրածիր աշխարհում:

² Matheson, N. W. *The idea of the library in the twenty first century*. Bull Med Libr Assoc. 1995 Jan; 83(1): 1-7, Dowlin, K.E. *Intelligent library buildings: proceedings of the 10th seminar of the IFLA Section on Library Buildings and Equipment*, The Hague, Netherlands, 1997, 117-209, Saur.

³ McDonald Andrew. *The Ten Commandments revisited: the Qualities of Good Library Space*: <http://liber.library.uu.nl/index.php/lq/article/view/7840/8010>

⁴ [IFLA Library Building Guidelines: Developments and Reflections. K.G.Saur, Munchen, 2007.](#)

ANNA SHIRINYAN
MARINA SAFARYAN
REPUBLICAN SCIENTIFIC-MEDICAL LIBRARY:
YESTERDAY, TODAY AND TOMORROW

SUMMARY

In 2014 Republican Scientific Medical Library (RSML) of Health Ministry of Republic of Armenia celebrated the 75th anniversary of its establishment. It is already seven decades that RSML having its special role and mission in the health care system, contributes to the continuing professional development of physicians, as well as the development of the biomedical science with its traditional and modern library and information services.

ԳՐԹԻ ԱՐԺԵՔԸ

Բանալի բառեր՝ Գյուղական գրադարան, գիրք, միջոցառումներ, գրքերի սպասարկում:

Keywords. Village library, book, events, book services.

Գեղամա լեռների միջով անցնող Հրազդան գետի երկկողմ լանջերի գրկում ծվարել է Գեղարքունիքի մարզի Դդմաշեն գյուղը, որի հայրենասեր, ավանդապահ, մշակութային ու ընթերցասեր բնակիչները այստեղ են հաստատվել 1828թ. Արևմտյան Հայաստանի Մակու քաղաքից՝ շենացնելով այս գեղեցիկ անկյունը: Գյուղում գործող միջնակարգ դպրոցի, մանկապարտեզի, կապի բաժանմունքի, պոլիկլինիկայի կողքին իր ուրույն տեղն ունի գրադարանը, որը 1955թ. առ այսօր (շուրջ վեց տասնամյակ) սպասարկում է մոտ 2800 ազգաբնակչության: Հաճելի և գոդորիկ անկյուն է Դդմաշենի գրադարանը՝ լուսավոր և ընդարձակ սենյակներով: Այն ունի գրապահոց, ընթերցասրահ, մանկական բաժին, Վերնատուն, դասարան, թանգարանային բաժին: Մուտքի մոտ ընթերցողը կարդում է. «Գլխարկը հանած մտեք գրադարան, որովհետև տաճար եք մտնում»: Այս տողերից արդեն ընթերցողը լցվում է հարգանքով դեպի գիրքն ու գրականությունը: Աշխարհը այս սքանչելի վայրի տեղը չգիտի, բայց այս անկյունը աշխարհի մասին հազարավոր գրքեր է պահում, պահպանում: Գրադարանը տարիներ շարունակ իր շուրջն է հավաքել գրքասերներին, ընթերցողների ու գյուղաշխարհի մարդկանց: Գրադարանի շնորհիվ գյուղը պահում է կապը աշխարհի հետ: Այստեղ 43 տարի է, ինչ աշխատում է բանասեր, մատենագետ և ջութակահար, գործի նվիրյալ Ֆլորա Գրիգորյանը, որին ծննդավայրում «Գրադարանի աղջիկ» են անվանում: Նրա կողմից նախաձեռնված, կազմակերպված յուրաքանչյուր միջոցառում մի յուրօրինակ, ինքնատիպ շեշտ է ունենում, որը գրավում է գյուղի բնակչությանը: Նվիրված լինելով գրքին, գրականությանը՝ նա այսօր առաջնորդում է գյուղի երիտասարդ սերնդին՝ ցույց տալով կյանքում ճիշտ դրսևորվելու, սեփական ուղին գտնելու և հաստատվելու ճանապարհը: Նրա համար գիրքը պատմություն է, երեկն ու այսօրը, իր կենսագրության մի հատվածը:

Հենց սա է պատճառը, որ գրադարանավարուհին արժանացել է «ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ» և «Դմաշեն գյուղի պատվավոր քաղաքացի» կոչումներին: Նրա գործի հայեցակարգը մշակույթն է: Գրադարանի աշխատանքային պրոցեսում նա կարևորում է մարդկային ճիշտ հարաբերությունները, ընթերցողների նկատմամբ պատշաճ վերաբերմունքը, գրադարանի ներքին ճիշտ կահավորանքն ու ձևավորումը, գրականության համալրումը:

Դմաշենի գրադարանն առանձնանում է կազմակերպված միջոցառումների որակով, որոնք, ըստ գրադարանավարուհու, կապ են ստեղծում ընթերցողի և գրադարանի միջև: Իսկ միջոցառումների տարեգրությունը բավական հարուստ է: Այստեղ հյուրընկալվել են Հովհաննես Շիրազը, գուսան Շահենը, Արաքսյա Գյուլզադյանը, Վազգեն Գաբրիելյանը, Լևոն Անանյանը, Կարպիս Սուրենյանը, Հովհաննես Գրիգորյանը, Էդուարդ Միլիտոնյանը և ուրիշներ: Այստեղ կազմակերպված միջոցառումներից պետք է հիշատակել Գրիգոր Նարեկացուն նվիրված երեկոն, Հայոց գրերի 1600-ամյակին, Երևանը Գրքի մայրաքաղաք հռչակելու և հայ գրատպության 500-ամյակին նվիրված միջոցառումները: Պարբերաբար կազմակերպվում են ցուցահանդեսներ, շնորհանդեսներ, պատի թերթեր: Առանձնահատուկ ձևով այստեղ նշվում է «Հանրապետական գրադարանային շաբաթը», իսկ 2012-2015թթ. բազմաթիվ էին Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի առիթով կազմակերպված միջոցառումները՝ հետևյալ խորագրերով. «Կոմիտաս», «Ո՞վ ենք մենք, որտեղի՞ց ենք գալիս, ու՞ր ենք գնում», «Ոգեկոչում», «Հիշում ենք և պահանջում», «100 դողանջ» (որը տեղի ունեցավ գյուղի 7-րդ դարի կառույց Սուրբ Թադևոս եկեղեցում 23.04.15թ. ժամը 19¹⁵) և այլն: Գրադարանի ջանքերով այցեր են կազմակերպվել Ծիծեռնակաբերդ և Հովհաննես Թումանյանի տուն-թանգարան: Բոլոր միջոցառումների ու այցերի տեսագրությունները, լուսանկարները պահպանվում են գրադարանի «Վերնատուն» բաժնում: Միջոցառումները լուսաբանվում են մարզային մամուլում և հեռուստաալիքներով: Գրադարանավարուհին պարբերաբար հանդես է եկել հոդվածներով, որոնք տպագրվել են «Հայաստանի կուլտ. լուս», Մոսկվայի «Библиотекарь», ամսագրերում՝ արժանանալով պատվոգրերի:

1983թ. հանրապետության 5 լավագույնների թվում Դմաշենի գրադարանը արժանացել է «Լավագույն գրադարան» կոչմանը, Հայաստանի կուլտուրայի մինիստրության դիպլոմի:

2013թ. մասնակցել է մշակութային «Էքսպո-2013» միջոցառմանը Վանաձորի քաղաքի տաղավարում՝ որպես լավագույն գրադարան:

Գրադարանում ստեղծված են բոլոր պայմանները՝ նոր սերնդին համապատասխան գրականություն մատուցելու, սպասարկումը բարձր մակարդակով կազմակերպելու համար: Հաղթահարվում են բոլոր խոչընդոտները՝ գյուղացուն գրքին ու գրադարանին մոտ պահելու, գրքի արժեքը բարձրացնելու համար: Այստեղ ճիշտ են ընկալվում գրքի նկատմամբ բնակչության հարգանքն ու վերաբերմունքը, ճիշտ է ընկալվում նաև գրադարանավարի դերը այս միջավայրում: Այսպես են ապրում Դմաշենի գրադարանն ու աշխատակազմը:

Այսօր անհրաժեշտ է արժևորել գյուղական գրադարանները, ուշադրություն դարձնել առկա խնդիրներին, որոնցից ամենակարևորը գրքային ֆոնդի համալրումն է: Պետք է ակնհայտ դառնա այն փաստը, որ գյուղական գրադարանները գործունե դերակատարում ունեն ազգաբնակչության մեջ:

FLORA GRIGORYAN

THE PRICE OF A BOOK

SUMMARY

Ddmashen is a village in Gegharkunik Province, with well equipped library, with rich history and active patrons. The everyday life of the rural library is described.

ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ-ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Բանալի բառեր՝ Կրթության պատմություն, գրադարանային մատենագիտական բարձրագույն կրթությունն ու գիտությունը (ԳՄԲԿ) Հայաստանում, ուսուցման առարկաների և կրթական ծրագրերի համակարգ, գրադարանային-տեղեկատվական և մատենագիտական գործունեություն, ԳՄԲԿ հումանիտար և տեխնոլոգիական զարգացում:

Keywords. History of Education, Library-Bibliographic Higher Education and Science (LBHES) in Armenia, the System of Teaching Subjects and Educational Programs, Library-Informational and Bibliographic Activity, LBHES Liberal and Technological Development, Digital Libraries, Library Automation, Union Cataloges.

Հոդվածը նվիրված է Գրադարանագիտության և մատենագիտության ամբիոնի 45-ամյակին: Հայաստանի բարձրագույն կրթության և գիտության զարգացման համակարգում ունեցած նշանակության ու մասնագետների պատրաստման գործում նրա դերի գնահատմամբ խնդիր է դրվել համակողմանիորեն նկարագրել ամբիոնի ուսումնական, գիտական և մեթոդական աշխատանքները պատմական տարբեր ժամանակաշրջաններում: Այդ նպատակով կատարվել են նաև տեղեկատվական ու վիճակագրական կարևոր վերլուծություններ: Օգտագործվել է մասնագիտական հարուստ գրականություն, ուշադրություն է դարձվել դասախոսների հեղինակած հրատարակությունների ներկայացմանը: Գրադարանային-տեղեկատվական և մատենագիտական համալսարանական կրթության զարգացման համատեքստում կատարվել են լուրջ դիտարկումներ, որոնց արդյունքում արվել են սկզբունքային առաջարկություններ:

Հայաստանում գրադարանային-մատենագիտական բարձրագույն կրթության հիմքը հիմնականում դրվել է 1970 թ.-ին՝ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի (2000 թ.-ից՝ համալսարան) կուլտուրայի ֆակուլտետում Գրադարանագիտության և մատենագիտության ամբիոնի ստեղծմամբ, չնայած տարբեր ժամանակահատ-

վածներում տվյալ մասնագիտությամբ մասնագետներ պատրաստվել են սկզբում Երևանի պետական համալսարանի, այնուհետև Երևանի հեռակա հայկական պետական մանկավարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետներում:

Վերոնշյալ կրթական հաստատություններում, հատկապես Գրադարանագիտության և մատենագիտության ամբիոնում, ուսումնական գործընթացի կազմակերպման ու զարգացման համար կարևոր ներդրում են ունեցել Ռաֆայել Իշխանյանը (1922-1995), Հրաչյա Կոստիկյանը (1915-1989), Հայկ Դավթյանը (1919-1983), Գուրգեն Մկրտչյանը (1919-2010), Խիկար Բարսեղյանը (1918-1996), Քնարիկ Կորկոտյանը (1927-1999), Բալաբեկ Մելյանը (ծնվ. 1926), Նինել Ոսկանյանը (1923-2005), Ելենա Բադդասարյանը (1938-2005) և ուրիշներ: Նրանցից Ռ. Իշխանյանը, Հ. Կոստիկյանը, Հ. Դավթյանը, Գ. Մկրտչյանը և Ք. Կորկոտյանը արդեն սկզբնական շրջանում ունեին գիտական կոչումներ, պաշտպանել էին թեկնածուական ատենախոսական թեմաներ (1962-1970 թթ.)¹ և գրադարանային գործի, մատենագիտության ու գրքի պատմության վերաբերյալ լույս էին ընծայել արժեքավոր ուսումնասիրություններ²: Բայց պետք է նշել, որ Հայաստանում գրադարանային-մատենագիտական մասնագիտության գծով բարձրագույն կրթության կազմակերպումը և շուրջ մեկ տասնամյակում այդքան կարևոր հրապարակումները պատահական չէին: Նախ՝ հայ գրքի և մատենագիտության պատմության հարցերի շուրջ հետաքրքրությունները գալիս էին վաղ անցյալից և այդ առումով անգնահատելի են մինչև 1961թ. ինչպես հայկական գաղթօջախներում (Գ. Զարբհանալյանի, Գ. Գալեմբարյանի, Ա. Ղազիկյանի, Թեոդիկի, Ա. Սալմասյանի և ուրիշների), այնպես էլ Հայաստանում (Գ. Լևոնյանի, Հովհ. Պետրոսյանի, Հ. Անասյանի և այլոց) տպագրված աշխատությունների³ դերն ու կիրառական լայն նշանակությունը:

Այդպիսով, դասախոսական կազմի և համապատասխան մասնագիտական գրականության առկայությամբ (ներառյալ նաև Հայաստանի ազգային

¹ Տես՝ Библиография авторефератов диссертаций, защищенные в Армении (1935-1975 гг.): Библиография. Т. 1, Ер.: Национальная книжная палата, 2003, էջ 355-356, 371, 374-375:

² Տես՝ Իշխանյան Ռ. Ա. Հայ մատենագիտության պատմություն: Պր. Ա-Գ. - Եր., 1964-68: Դավթյան Հ. Մ. Աշխարհաբար գիրքը հայ տպագրության սկզբից մինչև 1850 թ.: Առաջաբան և մատենագիտական ցանկ: Եր., 1964, 143 էջ: Կորկոտյան Ք. Ա. Հայ տպագիր գիրքը Կոստանդնուպոլսում (1567-1850 թթ.): - Եր., 1964, 153 էջ: Մկրտչյան Գ. Գ. Գրադարանային գործը Հայաստանում (1920-1965): - Եր., 1965, 179 էջ: Կոստիկյան Հ. Կ. Սովետահայ մատենագիտության զարգացման ուղիները, Եր., 1966, 212 էջ:

³ Տես՝ Իշխանյան Ռ. Ա. Մատենագիտություն հայկական մատենագիտության (ուղեցույց), Եր., 1963, 344 էջ:

գրապալատի, նախկին հանրային գրադարանի ու մատենադարանի հրատարակությունները) սկիզբ է դրվում ամբիոնի հետագա զարգացման: Նախատեսվում է առկա և հեռակա ուսուցմամբ պատրաստել «Գրադարանավար-մատենագետ» որակավորմամբ մասնագետներ: Այդ խնդիրը հավասարապես ծառացած էր նախկին խորհրդային հանրապետությունների կրթական համակարգերի առջև, որի արդյունավետ լուծումը կախված էր նաև (քառամյա և հնգամյա) ուսումնական պլանների բովանդակային կառուցվածքից, ուսուցման մեթոդներից:

Պատմական ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մինչև Խորհրդային միության փլուզումը՝ 1991 թ., Գրադարանագիտության և մատենագիտության ամբիոնի ուսումնական պլանում, բացի ընդհանուր հումանիտար մասնագիտական դասընթացներից («Հայոց լեզու», «Հայ գրականության պատմություն», «Ռուսաց լեզու», «Արտասահմանյան լեզու», «Արտասահմանյան գրականություն», «Հայոց պատմություն», «Փիլիսոփայություն», «Մանկավարժություն», «Հոգեբանություն», «Տնտեսագիտություն», «Քաղաքագիտություն», «Ընդհանուր պատմություն» և այլն), ընդգրկվել են հատուկ մասնագիտական հետևյալ առարկաները՝ «Ընդհանուր գրադարանագիտություն», «Գրադարանային գրացուցակներ», «Գրադարանային ֆոնդեր», «Աշխատանք ընթերցողի հետ», «Գրադարանային գործի կազմակերպում և ղեկավարում», «Գրադարանային գործի պատմությունը Հայաստանում և արտասահմանում», «Ընդհանուր մատենագիտություն», «Մատենագիտական աշխատանքի կազմակերպման մեթոդները գրադարանում», «Գեղարվեստական գրականության մատենագիտություն», «Արտասահմանյան մատենագիտություն», «Արվեստի մատենագիտություն», «Հասարակական-քաղաքական գրականության մատենագիտություն», «Մանկական գրականության մատենագիտություն», «Երկրագիտական մատենագիտություն», «Հայ պարբերական մամուլի մատենագիտություն», «Բնագիտատեխնիկական և գյուղատնտեսական գրականության մատենագիտություն», «Հայ մատենագիտության պատմություն», «Համընդհանուր տասնորդական դասակարգում»:

Կրթության զարգացման պահանջով ամբիոնի դասախոսների և ոլորտի մասնագետների ջանքերով կազմվում և հրատարակվում է ուսումնական նոր գրականություն⁴, որոնցում տեսական, պատմական, մեթոդական և կազմա-

⁴ Տես՝ Մատենագիտություն (ընդհանուր դասընթաց): Ուսումնամեթ. ձեռնարկ գրադարանային բաժնի ուսանողների համար / կազմեց՝ Հ. Կ. Կոստիկյան, Եր., 1978, 108 էջ: Մկրտչյան Գ. Գ. Աշխատանք ընթերցողների հետ: Ուս. ձեռն. կուլտ. ֆակ. գրադ. բաժնի ուսանող. Համար, Եր.,

կերպական հարցերը ստանում են առանձնակի լուսաբանում: Ակտիվություն է դրսևորվում ուսանողների շրջանում, ինչի վկայությունն են տարբեր տարիներին բուհում կազմակերպված ուսանողական գիտական նստաշրջաններում նրանց լավագույն զեկուցումները:

Անհրաժեշտ է նշել, որ ուսումնական գործընթացում օգտագործվել են նաև ճանաչված հեղինակների ռուսալեզու դասագրքեր, մենագրական և ուսումնամեթոդական բազմաթիվ աշխատություններ⁵:

Ետխորհրդային շրջանում (1991-2000 թթ.) ուսումնական պլանում կատարվում են որոշակի փոփոխություններ՝ նախկին առարկայացանկին ավելանալով «Հայագիտական մատենագիտություն», «Գրքագիտություն և գրքի պատմություն», «Մանկավարժական գրականության մատենագիտություն», «Սփյուռքահայ գրականության մատենագիտություն», «Գրադարանային-ինֆորմացիոն համակարգի տեխնիկական միջոցներ», «Հեռուստա-ռադիո հաղորդումների նյութերի մատենագիտություն», «Հայ տպագրական արվեստի պատմություն», «Գրաբար», «Կրոնական գրականության մատենագիտություն» առարկաները:

Գիտական աճի տեսանկյունից հարկ է նշել հետևյալը: Ամբիոնի դասախոսական կազմից 1985թ. թեկնածուական թեզ է պաշտպանել Բ. Գ. Մելյանը: Իսկ տողերիս հեղինակը, ով 1987–1990 թթ. սովորել և ավարտել է Մոսկվայի կուլտուրայի պետական համալսարանի նպատակային ասպիրանտուրան,

1979, 111 էջ: Մելյան Բ. Գ. Մանկական գրականության մատենագիտություն (ուս. ձեռնարկ), Եր., 1982, 79 էջ: Դավթյան Հ. Մ. Գեղարվեստական գրականության և գրականագիտության մատենագիտություն: Ուս. ձեռնարկ, Եր., 1981., 88 էջ: Իշխանյան Ռ. Ա. Հայ գիրքը 1512 – 1920, Եր., 1981, 154 էջ և այլն:

⁵ Տե՛ս՝ Абрамов К. И. История библиотечного дела в СССР: Учебник для вузов. – 3-е изд.- М., 1980, 352 с. Коршунов О. П. Библиографоведение. Общий курс. Учебник. – М., 1990, 232 с. Столяров Ю. Н. Библиотечный фонд: Учебник для студ. биб. фак. инст культуры, ун-ов и пед вузов. – М., 1991, 272 с. Терешин В. И. Информационные фонды СССР. Учеб. пособие.- М., 1981, 52 с. Беловицкая А. А. Общее книговедение. – М., 1987, 256 с. Библиотечные каталоги: Учебник. изд. 2-е / Под. ред. Г. И. Чижиковой.- М., 1977, 303 с. Мамонтов А. В. Щерба Н. Н. Краеведческая библиография: Учеб. для биб. фак. инст культуры, ун-ов и пед вузов. -М., 1978, 166 с. Гудовщикова И. В. Лютова К. В. Общая иностранная библиография. Учебник. -М., 1978, 224 с. Воробьев Г. Г. Документ: Информационный анализ.- М., 1973, 255 с. Чубарьян О. С. Общее библиотековедение: 3-е изд.- М., 1976, 271 с. Ши́ра Дж. Введение в библиотековедение: Основные элементы библиотечного обслуживания / Пер. с англ. В. В. Скворцов. – М., 1983.- 256 с. Баренбаум И. Е. История книги.- М., 1984, 288 с. Работа с читателями: Учебник для студ. инст культуры, пед вузов и ун-ов.- 3-е изд.- М., 1981, 296 с. Сукиасян Г. А. Библиография в Армении и армянской диаспоре в контексте истории (V – XX вв.). Монография. – М., 1997.- 250 с. Соколов А. В. Эволюция социальных коммуникаций.- СПб, 1995.- 163 с. և այլն:

1994-97 թթ.՝ նույն համալսարանի դոկտորանտուրան, 1991 թ. պաշտպանել է թեկնածուական, իսկ 1997-ին՝ դոկտորական թեզեր («05. 25. 03» ծածկագրով):

Հատուկ պետք է ընդգծել, որ երկրաշարժը (1988 թ.), 1980-ական թթ. վերջերին և 90-ական թթ. ԼՂՀ-ի անկախության համար ծագած հայ-ադրբեջանական պատերազմը, ինչպես նաև ԽՍՀՄ-ի փլուզման հետևանքով ստեղծված քաղաքական, սոցիալ-տնտեսական ծանր պայմանները բացասաբար անդրադարձան Հայաստանի գիտության, կրթության և մշակույթի ընդհանուր զարգացման վրա... Ծանր վիճակի մեջ հայտնվեցին նաև գրադարանները⁶: Օրակարգային դարձան գրադարանային ֆոնդերի պահպանման, համալրման, սպասարկման և ընթերցանության կազմակերպման հարցերը: Հասարակական կյանքի բոլոր ոլորտների զարգացման և արտաքին (ներառյալ սփյուռքի հետ) կապերի վերականգնման «միակ ուղին» հանդիսացավ անկախ պետությունների համագործակցության (ԱՊՀ), նորագույն ժամանակներում՝ նաև «Մաքսային միության» ստեղծումը...

Մինչև XX դարի վերջը Գրադարանագիտության և մատենագիտության ամբիոնի ուսումնագիտական աշխատանքները ժամանակագրական կարգով ղեկավարել են՝ Հ. Կ. Կոստիկյանը (1969 / 1970-1980), Խ. Հ. Բարսեղյանը (1980-1985), Բ. Գ. Մելյանը (1985-1998), Ք. Ա. Կորկոտյանը (1998-1999)⁷: 1999 թ. պաշտոնակատար է նշանակվել, իսկ 2000 թ.-ին ամբիոնի վարիչի պաշտոնում է ընտրվել Գ. Ա. Սուքիասյանը, ով ամբիոնը ղեկավարել է մինչև 2014թ.:

XXI դարի սկզբին ինչպես հասարակական-տնտեսական, այնպես էլ մշակույթի, կրթության ու գիտության զարգացման ոլորտներում սկսվում է նոր փուլ: Հատկապես տեղեկատվական մշակույթի բնագավառում փաստաթղթային (գրքային) աղբյուրների ժողովրդականացման և ընթերցանության դերի բարձրացման, փորձի փոխանակման ու համագործակցության նպատակով սկսվում են ներդրվել տեխնոլոգիական բազմազան միջոցներ, ձևավորվում են տեղեկատվական-հաղորդակցական նոր հարաբերություններ: Հետևաբար՝ առաջացած խնդիրների արդիական լուծման համար առաջ են քաշվում նաև մեթոդաբանական նորանոր մոտեցումներ՝ նոր բովանդակություն հաղորդելով հայ գրադարանագիտական, մատենագիտական և գրքագիտական մտքի զարգացմանը:

⁶ Сукиасян Г. А. Библиотеки Армении в экстремальных ситуациях // Библиотечная ассамблея Евразии.- М.: РГБ, 1994. Вып. 3.- С. 50-51.

⁷ Տես նաև՝ Մելյան Բ. Մեր ամբիոնը, Եր., 2005, էջ 27-40:

Այդ տեսանկյունից անկյունադարձային էր նաև ամբիոնի գործունեությունը. 2000 թ. հունիսի 22-ի նիստում (հիմք՝ թիվ 10 արձ.) օրակարգային դարձավ «Գրադարանագիտության և մատենագիտության գծով մասնագետների և մասնագիտացումներ հեռանկարային զարգացումը Հայաստանում» հարցը: Ամբիոնի վարիչ Գ. Ա. Սուքիասյանի նախաձեռնած հարցի և զեկուցման շուրջ քննարկմանը ակտիվ մասնակցություն են ունեցել, ինչպես ամբիոնի դասախոսական կազմը, այնպես էլ նիստի մասնակիցները՝ Ֆաթմա Խաչատրյանը (ՀՀ Մշակույթի նախարարության գրադարանների բաժնի վարիչ), Անահիտ Գալստյանը (ՀՀ Մշակույթի նախարարության թանգարանների բաժնի վարիչ), Տիգրան Հովհաննիսյանը (Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ գրադարանի տնօրեն), Ռուզան Տոնոյանը (Խնկո Ապոբ անվան ազգային մանկական գրադարանի տնօրեն), Ռիտա Զիլինգարյանը (Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանի գրադարանի տնօրեն)՝ նշելով հարցի լրջությունը և նորագույն պահանջներով համալսարանական կրթությամբ մասնագետներ պատրաստելու կարևորությունը:

Քննարկվող հարցի վերաբերյալ դրական կարծիքներ են հայտնել նաև Հ. Ներսիսյանը (ՀՀ ԳԱԱ ՀԳ տնօրեն), Դ. Սարգսյանը (Հայաստանի ազգային գրադարանի տնօրեն), Ս. Միրզոյանը (Պատմության պետական կենտրոնական արխիվի տնօրեն), Ա. Սարգսյանը (Նորագույն պետական կենտրոնական արխիվի տնօրեն), Վ. Մովսիսյանը (Հ. Թումանյանի տուն-թանգարանի տնօրեն), Վ. Ասլանյանը (ԵՊՀ գիտական գրադարանի տնօրեն) և ուրիշներ:

Ամբիոնի համատեղ նիստում որոշվեց անցյալից պահպանված «Գրադարանավար-մատենագետ»-ից բացի, շրջանավարտներին տալ նոր մասնագիտացումներ՝

- գրադարանավար-մատենագետ, մանկավարժ,
- գրադարանային և գրքային գործի մենեջեր,
- գրադարանային, արխիվային և թանգարանային գործի մենեջեր,
- թանգարանագետ, էքսկուրսավար,
- համակարգչային հաղորդակցական գործի ղեկավար:

Պետք է նշել, որ առաջարկությունների ցանկը նախապես լսվել և քննարկվել էր կուլտուրայի ֆակուլտետի գիտական խորհրդի 2000 թ. մարտի 17-ի նիստում և խորհրդի անդամներ՝ ՀՀ կինոմատոգրաֆիստների միության նախագահ, պրոֆեսոր Ս. Խ. Իսրայելյանի, գրադարանագիտության և մատենագիտության ամբիոնի դոցենտ Բ. Գ. Մելյանի, երաժշտության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ս. Գ. Աբրահամյանի, հեռուստատեսության ամբիոնի վարիչ պրոֆեսոր Ա. Գ. Յավուրյանի և կուլտուրայի ֆակուլտետի ղեկան, գիտ-

խորհրդի նախագահ Ռ. Կ. Միրզախանյանի կողմից արժանացել է հավանության: Ֆակուլտետի խորհրդի նույն թվականի հոկտեմբերի 3-ի նիստում լսվում և համալսարանի գիտական խորհրդի հաստատման է երաշխավորվում նոր մասնագիտացումներից բխող ուսումնական ծրագրերը վերանայելու և ուսումնական պլանում փոփոխություններ կատարելու ամբիոնի առաջարկությունները:

Այդպիսով, 2000–2001 ուս. տարվանից Գրադարանագիտության և մատենագիտության ամբիոնի ուսումնագիտական աշխատանքներում սկսվում են նոր գործընթացներ: Ելնելով առաջադիր նպատակներից ու խնդիրներից, տողերիս հեղինակի առաջարկությամբ և նախաձեռնությամբ 2001թ. ամբիոնում հիմք է դրվում «Թանգարանային գործ և հուշարձանների պահպանություն» բաժնին՝ ընդլայնելով ամբիոնի զարգացման ուղղությունները: Կազմվում և 2003–2004 ուսումնական տարվանից սկսում են գործել երկու մասնագիտական բաժինների հնգամյա ուսուցմամբ ուսումնական պլանները:

Նոր փոփոխությունների և լրացումների արդյունքում «Գրադարանագիտության և մատենագիտության» բաժնի ուսումնական պլանում ներմուծվում են՝ «Սոցիալական հաղորդակցություն», «Փաստաթղթագիտություն և փաստաթղթային ֆոնդեր», «Աղբյուրագիտություն. տեսություն և մեթոդիկա», «Գիտահետազոտական աշխատանքի հիմունքներ», «Համեմատական գրադարանագիտություն», «Գրադարանային-ինֆորմացիոն գործունեության կառավարում» առարկաներ, ինչպես նաև «Գրադարանավարի լեզվական կուլտուրա», «Ինֆորմացիոն համալիրի մատենագիտական սպասարկում», «Գրադարանային գործունեության մեթոդական սպասարկում» ընտրովի դասընթացները:

Համեմատական կարգով՝ «Թանգարանային գործ և հուշարձանների պահպանություն» բաժնի ուսումնական պլանում, որի ընդհանուր և հումանիտար մասնագիտական դասընթացները նույնականացված են զուգահեռ բաժնի ուսումնական պլանի համանուն բլոկների հետ, հատուկ մասնագիտական առարկաների ցանկում ընդգրկվել են՝ «Թանգարանագիտություն», «Թանգարանային գործը Հայաստանում և արտասահմանում», «Թանգարանային ֆոնդերի հաշվառում և պահպանում», «Հուշարձանների պահպանություն», «Հուշարձանների պատմությունը Հայաստանում», «Նյութական մշակույթի և կենցաղի պատմություն», «Համաշխարհային արվեստի պատմություն», «Էթնոլոգիա», «Տեղեկատու և մասսայական աշխատանքը թանգարանում», «Թանգարանային ցուցադրության գիտական կազմակերպում», «Էքսկուրսիոն աշխատանք», «Թանգարանային մանկավարժություն», «Տեղեկատվական տեխնոլոգիաները և

տեխնիզացնելը թանգարանային գործում», «Թանգարանային դիզայն», «Պատմագրություն», «Հայկական վիմագրություն», «Հնագիտություն», «Աղբյուրագիտություն», «Փաստաթղթագիտություն և փաստաթղթային ֆոնդեր», «Ընդհանուր մատենագիտություն», «Գրքագիտություն և գրքի պատմություն», «Հայագիտական մատենագիտություն», «Գրադարանային ֆոնդեր», «Արխիվագիտություն», «Երկրագիտություն», «Հուշարձանագիտություն», «Գիտահետազոտական աշխատանքի մեթոդիկա» առարկաները, ինչպես նաև «Պատմամշակութային և թանգարանային արժեքների պահպանություն և վերականգնում» ու «Թանգարանային փորձագիտության մեթոդիկա» ընտրովի դասընթացները:

Փաստորեն առարկաների ընտրության և ուսուցման ճշգրիտ մեթոդաբանությամբ ուսանողներին հաղորդակից է դարձվել տեսական, պատմական և մեթոդական հաստատուն գիտելիքներին, լուսաբանվել գիտության և պրակտիկայի զարգացման փոխադարձ կապերը:

Բուհական գիտակրթական գործը ավելի բովանդակալից ու ժամանակակից դարձնելու նպատակով առաջին անգամ 2004թ. ստեղծվում են պետական կրթական չափորոշիչներ (որոնց հեղինակ է տողերիս հեղինակը), որոնց հիման վրա էլ կազմվում և 2005թ. լույս են տեսնում առարկայական նոր ծրագրեր⁸, նոր հիմքերի վրա են դրվում գրադարանային-տեղեկատվական (մատենագիտական) և թանգարանային-հուշարձանագիտական համալսարանական կրթությունը: Վիճակագրական տվյալներով 2008թ. ամբիոնի 2 մասնագիտական բաժիններում սովորել են 242 ուսանողներ, այդ թվում՝ 132-ը 2007թ. անվանափոխված «Գրադարանային-տեղեկատվական աղբյուրներ» բաժնում (որից 44-ը՝ հեռակա), իսկ 110-ը՝ «Թանգարանային գործ և հուշարձանների պահպանություն» բաժնում: Հաստատված ուսումնական պլաններով «Գրադարանային-տեղեկատվական աղբյուրներ» բաժնի 18 շրջանավարտներին շնորհվել է «Գրադարանավար-մատենագետ, մանկավարժ»-ի, իսկ «Թանգարանային գործ և հուշարձանների պահպանություն» բաժնի 16 շրջանավարտներին՝ «Թանգարանագետ-էքսկուրսավար»-ի որակավորմամբ դիպլոմներ:

Համաձայն կրթական չափորոշիչների՝ «Գրադարանային-տեղեկատվական աղբյուրներ» բաժնի շրջանավարտները կարող են աշխատել բոլոր տիպի

⁸ Տես՝ Ուսումնական ծրագրեր և հանձնարարելի մատենագիտություն (05. 27-Գրադարանագիտություն և մատենագիտություն, 05. 28-Թանգարանային գործ և հուշարձանների պահպանություն): Ձեռնարկ / Կազմեց՝ Գ. Ա. Սուքիասյան, Եր.: Արեգ, 2005.- 92 էջ: Գրախոսություն՝ Մկրտչյան Գ., Սուրադյան Ա.: Հասցեագրված է մանկավարժին, Հայաստան, Երևան, 2015, թ. 32-33, 9 դեկտ., էջ 15:

ու տեսակի գրադարաններում (գրադեցնելով տարբեր պաշտոններ), գրապալատում, խմբագրական-հրատարակչական և գրավաճառային հիմնարկ-կազմակերպություններում, գիտատեխնիկական ինֆորմացիայի օրգաններում, ուսումնական հաստատություններում (դպրոցներում, քոլեջներում, բուհերում), արխիվներում, թանգարաններում և փաստաթղթային հաղորդակցությունների համակարգի այլ հիմնարկ-կազմակերպություններում, մատենադարաններում: «Թանգարանային գործ և հուշարձանների պահպանություն» բաժնի շրջանավարտները կարող են աշխատել տարատեսակ թանգարաններում, պատկերասրահներում, պատմաագագրական և տուրիստական համալիրներում, գիտահետազոտական ու նախագծային հիմնարկ կազմակերպություններում՝ իրականացնելով պատմամշակութային ժառանգության ուսումնասիրում, պահպանում և մասսայականացում, մենեջեր՝ պատմության և մշակույթի հուշարձանների պահպանման օրգաններում հասարակական, պետական և կոմերցիոն հիմնարկ կազմակերպություններում՝ հիմնելով ու զարգացնելով թանգարանների, պատկերասրահների ու տուրիստական կազմակերպությունների ցանցը, միջին հանրակրթական և մասնագիտական ուսումնական հաստատություններում՝ թանգարանային գործի հուշարձանների պահպանության բնագավառների համար առաջատար մասնագետներ պատրաստելու նպատակով:

Անհրաժեշտ է նշել, որ տարբեր ժամանակահատվածներով հիմնական դրույքով և համատեղությամբ ամբիոնի երկու մասնագիտական բաժիններում դասախոսել են՝ Գագիկ Սուքիասյանը (ամբիոնի վարիչ), Բալաբեկ Մելյանը, Գուրգեն Մկրտչյանը, Ելենա Բաղդասարյանը, Լավրենտի Բարսեղյանը, Այծեմնիկ Կորկոտյանը, Անահիտ Մուրադյանը, Գայանե Կարապետյանը, Ալվարո Գրիգորյանը, Հռիփսիմե Պիկիչյանը, Մարինե Հարոյանը, Հովհաննես Զատիկյանը, Մերի Քեշիշյանը, Անի Մինասյանը, Ներսես Հայրապետյանը, Նարինե Դանիելյանը:

2004-2005 ուսումնական տարվանից կրկին ապագային միտված նոր գործընթացներ են ծավալվում բուհում՝ կապված եռաստիճան (բակալավր, մագիստրատուրա և ասպիրանտուրա) կրթական համակարգերի զարգացման հետ, ինչը զուգահեռաբար պահանջում էր ուսումնական նոր պլանների, ծրագրերի և առարկայական նկարագրերի կազմում (վերջիններս հաստատվեցին 2012-13 ուսումնական տարում): Պետք է նշել, որ այդ ուղղություններով

⁹ Սուքիասյան Գ. Ա. Գիրքը, գրադարանը և թանգարանը բուհական կրթության ու գիտության զարգացման ծրագրերում, Ավանգարդ, Երևան, 2008, թ. 2, 23-39 հունվարի, էջ 7:

նույնպես հետևողական և արդյունավետ աշխատանքներ են տարվել՝ հաշվի առնելով արտերկրի առաջավոր փորձը: Ամբիոնի ընդհանուր աշխատանքների նորովի կազմակերպման ու հեռանկարային զարգացման համար առանձնահատուկ նշանակություն ունեցավ բակալավրիատի և մագիստրատուրայի ուսումնական գործող պլաններով ուսուցանվող առարկաների և ուսումնական պրակտիկայի ծրագրերի կազմումն ու հրատարակումը¹⁰: Բացի այդ, տողերիս հեղինակը կազմել է ՀՀ ԲՈՀ-ի պահանջով ասպիրանտների և հայցորդների համար «Ժ. 01. 09-Գրադարանագիտություն, մատենագիտություն և արխիվագիտություն» մասնագիտության գծով որակավորման քննության, ինչպես նաև գրադարանային-տեղեկատվական (մատենագիտական) ոլորտի մասնագետների վերապատրաստման նպատակով ուսումնական ծրագրերը¹¹, որոնց կից տրված է ուսումնաօժանդակ հարուստ գրականություն:

Սակայն 2009թ. «Թանգարանային գործ և հուշարձանների պահպանություն» բաժինը առանձնացվում է «Գրադարանագիտության և մատենագիտության» ամբիոնի կազմից, որի հիման վրա ձևավորվում է «Թանգարանագիտության և հուշարձանագիտության» ամբիոն: Բայց Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ գիտական խորհրդի 2014թ. փետրվարի 26-ի թիվ 11 նիստի որոշումով և ռեկտորատի 2014թ. մարտի 6-ի թիվ 2-219 հրամանով «Թանգարանագիտության և հուշարձանագիտության» ու «Գրադարանագիտության և մատենագիտության» ամբիոնները միավորվում են՝ ստեղծելով նոր՝ «Թանգարանագիտության, գրադարանագիտության և մատենագիտության» ամբիոն: Նույն հրամանով՝ «Գրադարանագիտության և մատենագիտության» ամբիոնի վարիչի պաշտոնակատար, մանկավարժական գիտություններ դոկտոր, պրոֆեսոր Գագիկ Արամի Սուքիասյանը նշանակվում է ամբիոնի պրոֆեսոր, իսկ նորաստեղծ ամբիոնի վարիչի պաշտոնակատար է նշանակվում «Թանգարանագիտության և հուշարձանագիտության» ամբիոնի վարիչի նախկին պաշտո-

¹⁰ Մանրամասն տես՝ Սուքիասյան Գ. Ա. Գրադարանային-տեղեկատվական և մատենագիտական բարձրագույն կրթությունը Հայաստանում: Ուսումնամեթ. ձեռնարկ: - Եր., 2011.- 124 էջ: Տես նաև՝ Տոնոյան Զ. Դանիելյան Ն., Շնորհանդես ազգային գրադարանում, Հայաստան, Երևան, 2012, թ. 1, 9-15 հունվարի, էջ 8:

¹¹ Տես՝ Գրադարանագիտություն, մատենագիտություն, արխիվագիտություն // Որակավորման մասնագիտական քննության ծրագրեր՝ ըստ Հայաստանի գիտական աստիճանաշնորհման անվանացանկի, Եր., 2011, էջ 84-96: Սուքիասյան Գ. Ա. Գրադարանային-տեղեկատվական (մատենագիտական) ոլորտի մասնագետների վերապատրաստման ուսումնական դասընթացի ծրագրեր. գրադարանագիտություն, մատենագիտություն, գրքագիտություն, Եր., 2010.- 56 էջ:

նակատար, պատմական գիտությունների դոկտոր Լավրենտի Աշոտի Բարսեղյանը (1937-2014): Այնուհետև՝ 2015 թ. ամբիոնի աշխատանքները ղեկավարում է պատմական գիտությունների դոկտոր Ամատունի Սասունիկի Վիրաբյանը: Համակողմանի վերլուծությունը ցույց է տալիս, որ անկախ կառուցվածքային փոփոխություններից «Գրադարանագիտության և մատենագիտության» ամբիոնի ուսումնագիտական և հետազոտական աշխատանքները մշտապես տարվել են արդիական պահանջներին ու զարգացումներին համահունչ: Մասնավորապես կրթական գործի կազմակերպման ուղղությամբ գնահատելի են ինչպես հայալեզու ուսումնական գրականության ստեղծումը, այնպես էլ՝ օտարալեզու գրականության ապահովումը¹²:

Ամբիոնի մասնագիտական ուղղությունների զարգացման նպատակով կարևոր գործոն են հանդիսացել նաև միջազգային համագործակցության կապերի հաստատումը և փորձի փոխանակումը: Այդ առումով հիշարժան են Քվեբեկի համալսարանի (Կանադա) պրոֆեսոր Ֆիլիպ Դյուպեի ղեկավարած դասախոսական, ասպիրանտական և ուսանողական խմբի (2002 թ. հունիսի 20- հուլիսի 8), ԱՄՆ-ի Իլինոյի համալսարանի պրոֆեսոր Լի Էստաբրոուկի (2005 թ. սեպտեմբեր) և Կոնգրեսի գրադարանի հայկական և վրացական ենթաբաժնի մասնագետ, պատմական գիտ. թեկնածու Լևոն Ավդոյանի (2006 թ. ապրիլ և 2014 թ. հոկտեմբեր) հետ հանդիպումները:

Տեղեկատվության փոխզարգացման և փորձի փոխանակման տեսանկյունից ուշագրավ էր 2009թ. հունիսի 13-ին ամբիոնում դասախոս Ա. Է. Մինասյանի գիտատեղեկատվական զեկուցումը՝ «Տպավորություններ ԱՄՆ-ի և

¹² Տես՝ Սուքիասյան Գ. Ա. Բաղդասարյան Ս. Ս. Փաստաթղթագիտություն և փաստաթղթային-տեղեկատվական աղբյուրներ: Դասագիրք, Եր., 2009.- 178 էջ: Նույնի՝ Գրքագիտություն և հայ գրատպության պատմագրություն, Եր., 2013.- 160 էջ: Մուրադյան Ա. Ա. Արխիվագիտություն: Ուսումնամեթ. ձեռնարկ / Խմբագիր՝ Գ. Ա. Սուքիասյան, Եր., 2013.- 88 էջ: Թանգարանային մենեջմենթ և մարկետինգ: Ուս. ձեռնարկ / Կազմեցին՝ Հ. Վ. Պիկիչյան, Ս. Հ. Հարոյան, Ա. Ֆ. Գրիգորյան: Մասնագիտական խորհրդատու՝ Բ. Վորոնցով: Գրախոս և դասընթացի ծրագրի խորհրդատու՝ Գ. Ա. Սուքիասյան: - Եր., 2007.- 196 էջ: Коршунов О. П. Библиографоведение: общий курс. Ч. 1. Основы теории библиографии. Учебник для библиотечно-информационных фак. вузов.- М., 2001.- 105 с. Столяров Ю. Н. Защита библиотечного фонда: Учеб. пособие.- М., 2006.- 504 с. Матильский Р. С. Библиотека как социальный институт.- Минск, 2002.- 374 с. Суслова И. М. Организационные развитие систем управления современной библиотекой: Учеб. пособие.- СПб, 2008.- 192 с. Зиновьева Н. Б. Документоведение: Учеб. пособие.- М., 2001.- 207 с. Вохришева М. Г. Теория библиографии: Учеб. пособие.- Самара, 2004.- 367 с. Библиографоведение, библиотековедение и информатика. Терминологический путеводитель.- М., 2007.- 104 с. Шрайберг Я. Л. Земсков А. И. и др. Авторское право и библиотеки.- М.: ГПНТБ России, 2007.- 48 с. և այլն:

եվրոպական երկրների (Ֆրանսիա, Գերմանիա, Նիդեռլանդներ) գրադարանային և թանգարանային գործունեությունից» խորագրով՝ ուղեկցված տեսաֆիլմերով և զուգահեռ բացատրություններով: Հարկ է նշել նաև տողերիս հեղինակի մասնակցությունը ոչ միայն Մոսկվայում կայացած գիտաժողովներին, այլև՝ 2012 թ. սեպտեմբերի 26-28-ին Ղազախստանի մայրաքաղաք Աստանայում կայացած գրադարանավարների միջազգային ֆորումին, որի շրջանակում քննարկվեցին ԱՊՀ երկրների միջև գիտակրթական և մշակութային կապերի զարգացման մի շարք հարցեր¹³:

«Գրադարանագիտության և մատենագիտության» ամբիոնի դասախոսները, ասպիրանտները և հայցորդները ակտիվ մասնակցություն են ցուցաբերել և զեկուցումներով հանդես եկել բազմաթիվ, այդ թվում ամբիոնի նախաձեռնությամբ կազմակերպված «Հայկական տպագրության 490-ամյակը» (2002 թ. ապրիլի 19), «Գրադարանագիտության, մատենագիտության և թանգարանագիտության արդի խնդիրները և զարգացման հեռանկարները Հայաստանում» (2005 թ. ապրիլի 14-15), «Հայկական տպագրության 500-ամյակը» (2010 թ. ապրիլի 15-16) և «Գրադարանային- տեղեկատվական կրթության համակարգում նոր տեխնոլոգիաների և սոցիալական մեդիայի կիրառման արդի միտումները» (2014թ. հունիսի 10) թեմաներով գիտաժողովներում¹⁴, որոնք ժամանակին լուսաբանվել են նաև մամուլում, արձագանքվել ռադիոյով և հեռուստատեսությամբ: Ի դեպ, հայկական տպագրության 500-ամյակին նվիրված գիտաժողովը ընդգրկվել էր ՀՀ մշակույթի նախարարության 2010-12թթ. միջոցառումների ցանկում:

Բարձր գնահատելով հայ գրքի և տպագրության պատմության դերն ու նշանակությունը հայ ժողովրդի հոգևոր կյանքի զարգացման մեջ՝ տողերիս հեղինակի առաջարկությամբ, հայկական տպագրության 500-ամյակի առթիվ

¹³ Տես՝ Սուքիասյան Գ. Ա. Գրադարանավարների միջազգային ֆորում Աստանայում, Հայաստանի Հանրապետություն, Երևան, 2012, թ. 180.- էջ 6:

¹⁴ Տես՝ Հայկական տպագրության 500-ամյակը (1512-2012): Գիրքը պատմամշակութային և տեղեկատվական հաղորդակցությունների համակարգում: Հանրապետ. գիտաժողովի զեկուցումների ժողովածու / Խմբագիրներ՝ Ա. Վ. Գալստյան, Գ. Ա. Սուքիասյան: -Եր.: Մանկավարժ, 2010.- 132 էջ: Գրադարանային-տեղեկատվական կրթության համակարգում նոր տեխնոլոգիաների և սոցիալական մեդիայի կիրառման արդի միտումները: Հանրապետ. գիտաժողովի զեկուցումների ժողովածու / Կազմող, առաջաբանի հեղինակ և մասնագիտական խմբագիր Գ. Ա. Սուքիասյան, Եր.: Էդիթ Պրինտ, 2014.- 128 էջ և այլն:

կուլտուրային ֆակուլտետի «Գրադարանային-տեղեկատվական աղբյուրներ» բաժնի գերագանց առաջադիմությամբ սովորող ուսանողների համար սահմանվել է «Հակոբ Մեղապարտ» անվանական կրթաթոշակ, որը հաստատվել է համալսարանի գիտական խորհրդի 2011 թ. ապրիլի 29-ի նիստի որոշմամբ (հիմք՝ 03. 05. 2011թ. թիվ 2-74 հրամանը): Համաձայն նշվածի՝ գրադարանագիտության և մատենագիտության ամբիոնի 2013թ. հունվարի 29-ի նիստի որոշմամբ բակալավրիատի երրորդ կուրսի ուսանողուհի Հերմինե Գագիկի Հովհաննիսյանին երաշխավորվել է ներկայացնել առաջին անգամ սահմանված «Հակոբ Մեղապարտ» անվանական կրթաթոշակի:

Մեծ է նաև Գրադարանագիտության և մատենագիտության ամբիոնի դերը գիտական կադրերի պատրաստման գործում: Բավական է նշել, որ «Գրադարանային-տեղեկատվական աղբյուրներ» բաժնի ներկայիս դասախոսները՝ դոցենտ Անահիտ Մուրադյանը, Այծեմնիկ Կորկոտյանը, Արմինե Հակոբյանը և Զարուհի Տոնոյանը, գիտությունների թեկնածուներ են՝ պաշտպանած 2009-2015 թթ., որոնցից Ա. Մուրադյանը, Ա. Հակոբյանը և Զ. Տոնոյանը՝ Գ. Ա. Մուքիասյանի գիտական ղեկավարությամբ:

Անգնահատելի է ամբիոնի դերը նաև գրադարաններին ուսումնամեթոդական ու կազմակերպական օգնություն ցույց տալու գործում: Այդ տեսանկյունից հաշվի է առնվում ոչ միայն մասնագիտական գրականության և այլ նյութերի ստեղծումն ու տարածումը, այլև՝ դասախոսություններով ու զեկուցումներով փաստաթղթային-տեղեկատվական ոլորտների աշխատողների համար հանդես գալը: Այդ առումով տեղին է նշել Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի (2009թ. փետրվար-մարտ) և Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի (2011թ. հունվար) գրադարաններում, ինչպես նաև Երևանի պետական համալսարանում (2010թ. սեպտեմբեր-հոկտեմբեր) ու Արցախի Մեսրոպ Մաշտոց համալսարանում (2008-2014թթ. հուլիս ամիսներ) քաղաքացիական ծառայողների վերապատրաստման նպատակով հրավիրված և կրթական ծրագրերով նախատեսված տողերիս հեղինակի դասախոսություններն ու թեմատիկ զեկուցումները: ՀՀ կրթության և գիտության նախարարության հրամանով (19. 06. 2015 թ.) ընդգրկված լինելով նախնական և միջին մասնագիտական կրթության ոլորտում պետական կրթական չափորոշիչներ մշակող աշխատանքային խմբում՝ տողերիս հեղինակը ակտիվ գործունեություն է ցուցաբերել նաև 2 – 91. 01. 02. «Գրադարանային գործ» մասնագիտության (գրադարանավար որակավորմամբ) նկարագրի, ուսումնական պլանների,

մասնագիտական հատուկ և ընդհանուր մոդուլների կազմման աշխատանքներում:

Այդպիսով, ուսումնասիրությունը ցույց է տալիս, թե որքան մեծ ծավալի աշխատանք է տարվել կրթության և գիտության զարգացման բնագավառներում: Շուրջ 45 տարիների ընթացքում ամբիոնը ունեցել է ավելի քան 2000 շրջանավարտ, որոնք սիրով և նվիրվածությամբ աշխատել ու աշխատում են Հայաստանի և Արցախի տարատեսակ գրադարաններում, արխիվներում, թանգարաններում, մատենադարաններում, կրթական հաստատություններում ու լրատվական կենտրոններում: Միայն 2009-2015 ուս. տարիների ընթացքում «Գրադարանային-տեղեկատվական աղբյուրներ» բաժնի շրջանավարտների թիվը կազմել է 182, այդ թվում՝ 80-ը բակալավրներ (առկա ուսուցմամբ), 22-ը՝ մագիստրոսներ (առկա ուսուցմամբ) և 80-ը՝ հեռական ուսուցմամբ: Լավագույն մագիստրոսներից Մարիամ Հովհաննիսյանը կազմել է Սոս Սարգսյանին նվիրված կենսամատենագիտություն¹⁵, իսկ Շողեր Հունանյանը դասախոսական կազմում գիտական զեկուցումով հանդես է եկել Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի հիմնադրման 90-ամյակին նվիրված գիտաժողովում (2012 թ. դեկտեմբերի 14):

Սակայն ցավով պետք է նշել, որ վերջին երկու տարում «Գրադարանային-տեղեկատվական աղբյուրներ» բաժնում նվազել է սովորողների թվաքանակը (նման իրավիճակ տիրում է նաև բուհերի համարյա բոլոր բաժիններում): Եթե մասնագետների կարիքը հարյուրավոր գրադարանների¹⁶ համար խիստ անհրաժեշտ է, ապա մասնագիտության զարգացումը համապատասխանաբար դառնում է պարտադիր:

Կուզենայի անդրադառնալ վերջին տարիների գիտակրթական բարեփոխումների ընթացքում նկատված մեկ այլ կարևոր խնդրի պարզաբանման, որի անորոշությունը զգացվեց նաև ՀՀ մշակույթի նախարարությունում (2014 թ. նոյեմբեր-դեկտեմբեր) գրադարանային աշխատողների մասնագիտական որակավորման չափանիշներ կազմելու ժամանակ: Բանը նրանում է, որ նախկին «Գրադարանավարություն և մատենագիտություն» մասնագիտությունը ԿԳՆ-ի 2007 թ. օգոստոսի 30-ի № 1038 Ն. որոշմամբ վերանվանվել է 071500 - «Գրադարանային-տեղեկատվական աղբյուրներ»՝ շրջանավարտներին շնորհելով «Գրադարանային-

¹⁵ Տես՝ Հովհաննիսյան Մ., Սոս Սարգսյան. Կենսամատենագիտություն / Խմբ.՝ Ա. Հակոբյան, Եր., 2010, 96 էջ:

¹⁶ Տես՝ Հայաստանի գրադարանները 2013 թ.: Աշխատանքների վիճակագրական վերլուծություն / Կազմող՝ Ա. Բաղդասարյան. Եր.: Գիրք, 2014, էջ 3:

տեղեկատվական աղբյուրագիտություն» բակալավրի և մագիստրոսի որակավորումներ: Կարծում ենք, ոչ միայն ճիշտ չեն տվյալ անվանումները (այդպես ընդունված չէ նաև ԱՊՀ-ի երկրներում), այլև անհամապատասխան են պատրաստվող մասնագետների մասնագիտական որակավորումները՝ հաշվի առնելով ուսումնական պլաններով ուսուցանվող առարկաները, գրադարանային-տեղեկատվական գործի արդի զարգացումները: «Գրադարանային-տեղեկատվական աղբյուրներ» անվանումը հստակ չէ և ճիշտ չի բացահայտում մասնագիտության բուն էությունը. նրանում «աղբյուրներ» հասկացությունը կարող է համարվել գրադարանային կամ մատենագիտական գործունեության օբյեկտ, բայց ոչ ամբողջականացնող անուն: Իսկ «Գրադարանային-տեղեկատվական աղբյուրներ»-ն ամբողջությամբ (անկախ գտնվելու տեղից, լեզվից և բովանդակությունից) հանդիսանում են փաստաթղթային-տեղեկատվական և գրադարանային-մատենագիտական ուսումնասիրման օբյեկտ: Ընդհանրապես անորոշ է «Գրադարանային-տեղեկատվական աղբյուրագիտություն» որակավորման անունը՝ բնականաբար հիմք ընդունելով գրադարանային-տեղեկատվական և մատենագիտական կենտրոնների կառուցվածքա-բովանդակային առանձնահատկություններն ու նրանց տարաբնույթ գործառույթները:

Հաշվի առնելով խնդրի լուծման լրջությունը, մասնագետների և դիմորդների համար մասնագիտության մասին ճշգրիտ պատկերացումներն ու ժամանակակից հետաքրքրությունները՝ առաջարկվել է «Գրադարանային-տեղեկատվական աղբյուրներ» բաժնի անունը անվանակոչել *«Գրադարանային-տեղեկատվական գործունեություն և մատենագիտություն»*, որը, մեր կարծիքով, լիովին համապատասխանում է գրադարանագիտության, մատենագիտության, գրքագիտության և փաստաթղթագիտության արդի պահանջներին: Իսկ շրջանավարտներին առաջարկվել է տալ «գրադարանավար-մատենագետ-մանկավարժ», «տեղեկատվական աղբյուրների վերլուծաբան, մենեջեր», «գրադարանագետ, մատենագետ, փաստաթղթագետ» որակավորումներ: Նշված առաջարկությունները լսվել և քննարկվել են Գրադարանագիտության և մատենագիտության ամբիոնի 2010թ. մայիսի 6-ի և կուլտուրայի ֆակուլտետի խորհրդի 2011թ. նոյեմբերի 29-ի նիստերում ու դրական կարծիքով ներկայացվել է ուսումնական մաս հաստատելու: Իհարկե, մասնագիտական որակավորումները չեն սահմանափակվում հոդվածում նշվածներով:

Գրադարանային-տեղեկատվական և տեխնոլոգիական XXI դարի զարգացումները, շաղկապված «գիրք-ընթերցող-գրադարանավար» փոխ-

ադարձ կապի, գրադարանների հասարակական-ճանաչողական դերի բարձրացման և սոցիալ-հաղորդակցական նոր հարաբերությունների ձևավորման հետ, առաջ են բերել նաև նոր՝ «Գրադարանային հոգեբան»-ի մասնագիտական որակավորման անհրաժեշտություն: Հուսանք, որ կրթական և կիրառական նշանակություն ունեցող այդ և բազմաթիվ այլ խնդիրների լուսաբանման գործում կարևոր դեր կունենա նորաստեղծ «Բանբեր Հայաստանի գրադարանների» (2015 թ.) գիտա-մեթոդական հանդեսը:

GAGIK SUKIASYAN

FROM THE HISTORY OF LIBRARY-BIBLIOGRAPHIC HIGHER
EDUCATION

SUMMARY

The research showed that the library-bibliographic profession had occupied an irreplaceable position in the system of development of higher education and science of Armenia. It becomes obvious and well-founded the fact that without the presence of professionals and without the possession of fundamental library bibliographic and professional knowledge it is impossible not only the organization of the work of library but also it is impossible to actualize objective service in the social-communicative and documentary-informational systems. The problem of library science, bibliography and books' science is to stimulate the perfection of modern library-informational and bibliographic activity, the advance of the cognitive role of libraries in Armenia and out of borders of Armenia.

ԲԱՅՐԱՄՅԱՆ ՍՈՒՐԵՆ Ն.

*Եգիպտոսի հայկական թեմական խորհրդի անդամ,
«Յուսաբեր» մշակութային ընկերակցության ատենապետ*

**ԵԳԻՊՏԱՀԱՅ ԱՌԱՋԻՆ ԼՐԱԳԻՐԸ
«ԱՐՄԱԻԵՆԻ»-Ի 150-ԱՄԵԱԿԸ
(1865 - 2015)**

Բանալի բառեր՝ պատմություն, տպագրություն, հայ մամուլ, Եգիպտոս
Keywords. History, Printing, Armenian Periodicals, Egypt

Հայ ժողովուրդի բազմադարեան պատմութիւնն իր գրական մշակոյթով եւ տպագրութեան արուեստի պատուաբեր վաստակով կարեւորագոյն ազդակներէն մէկը եղած է անոր գոյապայքարին եւ համամարդկային յառաջդիմութեան տարեգրութեան մէջ ունեցած ներդրումին:

Հայ գրական եւ տպագրական մշակոյթը աստանդական պայմաններու տակ թէւ ծնունդ առած է հայրենի բնօրրանէն հեռու վայրերու մէջ, սակայն անոր պաշտպան նուիրեալներու անմնացորդ զոհողութիւններուն արգասիքը եղած է հայ մամուլի եւ տպագրութեան արժանապատիւ ներկայութիւնը համաշխարհային գրականութեան եւ գիտութեան լուսաւորութեան եւ պայծառացումին մէջ:

Այսպէս, եթէ նկատի ունենանք, թէ մամուլի պատմութեան առջինեկի պատիւը կ'երթայ Իտալիոյ Ֆլորէնս քաղաքին մէջ «Նոթիցիէս Սքրիթթի» (Լրատու Գրուածք) անունով 1563-ին լոյս տեսած առաջին լրագրին, եւ այս՝ Կիւրենպերկի 1440-ի տպագրութեան հնարքէն 123 տարիներ ետք¹:

Ասդին, **հայ առաջին պարբերականը «Ազդարար»**² Յարութիւն Քահանայ Շմաւոնեանի (1750-1824) նախաձեռնութեամբ լոյս տեսած է Հնդկաստանի Մատրաս քաղաքին մէջ 1794-ին, հայ տպագրութեան նահապետ Յակոբ Մեղապարտի Վենետիկի համեստ տպարանէն 1512-ին ծնունդ առած «Ուրբաթագիրք»էն 282 տարիներ ետք:

Յիշարժան է, թէ տպապատմութեան մէջ Հայ ազգը 13-րդը հանդիսացած

¹ Տե՛ր Խաչատուրեան Արտաշէս: Հայ Մամուլի Մատենագիտական Գործեր, Պէյրութ, 2014, էջ 20:

է համաշխարհային մակարդակով եւ երկրորդը ներկայացած՝ Արեւելքի երկիրներուն միջեւ, իսկ Մամուլի առաջնահերթութեան մէջ՝ 10-րդ պատուաբեր կարգով:

Եգիպտահայ մամուլն ու տպագրութիւնը իրենց հերթին յառաջապահներէն կը հանդիսանան հայ մամուլի եւ տպագրութեան տարեգրութեան մէջ, եթէ նկատի առնուին շրջապատի այն դժուարին պայմաններն ու իրադրութիւնները, որոնք հայ մտաւորականութեան եւ հասարակական գործիչներու կողմէ դիմակալուեցան իրենց ինքնութիւնը պաշտպանելու մաքառումին ընթացքին:

Եգիպտոսի մէջ տպագրական արուեստի եւ մամուլի հրատարակութեան տեղական նախաձեռնութիւնները սկիզբ առած են Նաբոլիոնի ֆրանսական արշաւախումբին (1798-1801) հետ բերուած տպագրական կազմաճներու միջոցով: Այսպէս, 1798-ի Օգոստոս 28-ին եւ Հոկտեմբեր 1-ին յաջորդաբար հրատարակուած են ընթացիկ լուրերու «Լը Քուրիէ Տը Լ'Էժիպտ» (Եգիպտոսի Լրատու) եւ գիտական բնոյթի «Լա Տէքատ Էժիպսիէն» (Եգիպտական Տասնօրեայ) երկու ֆրանսերէն լրագրերը, իսկ 26 Նոյեմբեր 1800-ին՝ արաբերէն «Էլ Թէնպի» (Ազդարարութիւնը) մամլոյ հրատարակութիւնը, որոնք դադրած են արշաւախումբին Եգիպտոսէն մեկնումով²:

Ժամանակակից Եգիպտոսի հիմնադիր Մոհամէտ Ալի Փաշայի (1805-1849) լուսամիտ քաղաքականութեան ընդառաջ՝ Եւրոպա ուսումնառութեան դրկուած քառասնեակ մը երիտասարդներու վերադարձին եւ անոնց յանձնառութիւններուն յաջող արդիւնքներէն եղան Եգիպտոսի մէջ քաղաքական, մշակութային, գիտական եւ զինուորական մարգերու մէջ արձանագրուած յառաջադիմութիւնները:

Այսպէս, Գահիրէի Պուլաք թաղաշրջանին մէջ, 1821-ին հաստատուեցաւ Եգիպտական առաջին եւ կառավարական «Էլ Էմիրէյա» (Իշխանական) տպարանը, իսկ մամուլի ճամբով՝ յաջորդաբար 1827-ի կէսերուն լոյս տեսան «Կուրնալ Էլ Խտէուի» (Խտիվին Լրագիրը) եւ 3 Դեկտեմբեր 1828-ին՝ պետական պաշտօնաթերթ «Էլ Ուաքաէ Էլ Մասրէյա» (Եգիպտական Անցուդարձերը)

² Դոկտ. Իպրահիմ Ապտո: *Տպագրութեան եւ Լրագրութեան Պատմութիւնը Եգիպտոսի Մէջ: Ա. Տպագր., Գահիրէ, 1949:*


Տարեկան գին՝ Եգիպտոսի համար կես եգիպտական լիռայ
(50 դուրուշ ողջ դրամ) կանխիկ վճարելի

Էջերու թիւը՝ 4 էջ, իւրաքանչիւրը՝ երեք սիւնակ

Չափեր՝ 31 X 47 սմ.

«ԱՐՄԱԻԵՆԻ»-ի անուանագիրը առաջին թիւին մէջ մանր եւ պարզ, իսկ յաջորդական երեք թիւերով՝ խոշոր եւ գեղագիր տառերով ներկայացած է:

Նաեւ նկատառելի է ենթախորագրին բնոյթի բաժնին մէջ կատարուած շարքին փոփոխութիւնը «Ազգային, Քաղաքական եւ Բանասիրական» (թիւ 2, 3 եւ 4) փոխան՝ «Քաղաքական, Ազգային եւ Բանասիրական» ի (թիւ 1):



Լ Բ Ա Գ Ի Բ Կ Ի Ս Ա Մ Ս Ե Ա Յ

Ա.Զ.Գ.ԱՅԻՆ ԲԱՆԱԳՐԱԿԱՆ ԵՒ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Անուանագիրին մասին հետեւեալը դիտել կուտայ Աբրահամ Մուրատեան «Առաջնորդող» իր գրութեան Յ. Գ. Յաւելուածով.

«Յ. Գ.- Լրագրոյս անունը մեծ տառերով գրուած ու փորագրիչին յանձնուած էր թեպէտ ըստ ժամանակին, այլ մինչեւ ցարդ տակաւին փորագրութիւնն աւարտած չըլլալով՝ այդ պատճառին համար աւելի ուշացնել չուզեցինք լրագրոյս հրատարակութիւնը, և այս անգամ այդ մանր գրերով դրինք անունն իր ճակատը. ուստի կլինողրենք մեր Արգոյ Ընթերցողներէն, որ այս անգամ ներողամիտ ըլլան լրագրոյս արտաքին մէկ տգեղութեանը և մեր պիտի ջանամք յաջորդ թիւն աւելի վայելչատես ներկայացնել իրենց»⁴:

«ԱՐՄԱԻԵՆԻ»ի հրատարակութիւնը **առաջարկութեամբը** կատարուած է եգիպտահայոց Առաջնորդական Փոխանորդ Գեր. Մկրտիչ Արքեպիսկոպոս Քէֆսիզեանի (ապագայ Կաթողիկոսը Սիսի – 1871-1894):

⁴ Մուրատեան Ա., Արմաւենի. Ա .տարի, Գահիրէ, 1865, թ.1, էջ Ա.:

Սրբազան Հօր մամուլի հանդեպ ցուցաբերած ուշադրությանը անդրադարձած է Կ. Պոլսոյ եւ Իզմիրի մամուլը, լրագրին լոյս ընծայման ժամանակաշրջանին.

« Գոհութեամբ կ'իմանանք, թէ Նորին Սրբազնութիւնը ջանք ի գործ կը դնէ քաղաքին մէջ տպարան մը հաստատելու եւ կիսամսեայ լրագիր մը հրատարակել տալու համար: Անտարակոյս եմք, որ գերապատիւ Փոխանորդին այս բարի ջանքն յաջողութեամբ կը պսակուի, որովհետեւ - կարծեմք չեմք սխալիր-այնպիսի քաղաքի մը մէջ կը գտնուի, ուր թէեւ փոքրիկ բայց պատուաւոր խումբ մը կայ ժողովրդեան որ ձեռնհաս է յառաջդիմութեան օգնող ամէն խորհուրդ ի գործ բերել, եթէ կամի»⁵:

Նաեւ՝ «...այս լրագրոյն հիմնադրութիւնը Եգիպտոսի առաջնորդական փոխանորդ Գեր. Տէր Մկրտիչ Արքեպիսկոպոսին ազգասիրական ջանից ու յորդորանաց արդիւքն է ... »⁶:

Իսկ, լրագրին տնօրէն Յովսէփ Էֆենտի Մանուկեանն իր “Յայտարարութեան” մէջ կը հաստատէ.

«...առաջնորդական փոխանորդ Գեր. Մկրտիչ Արքեպիսկոպոսին առաջարկութեամբը հիմնեալ եւ մեր տնօրէնութեանը յանձնեալ լրագիրը՝ կփ ափաքիմք ի բոլոր սրտէ՝ որ խաղաղութեան ու արդարութեան գործիք մը ըլլայ...»⁷:

«ԱՐՄԱԻԵՆԻ»-ի հրատարակութեան համար Նուպար Փաշայ Նուպարեանի կատարած **թելադրանքին** մասին հետեւեալ հաւանականութիւնը կ'եզրակացնէ Յովհաննէս Թոփուզեան.

«Նուպար Փաշայի կատարած դերին մասին ոչ մի յիշատակութիւն չկայ մեզ յայտնի աղբիւրներում...», սակայն «... նա գործել է ոչ թէ սեփական նախաձեռնութեամբ, այլ Քէֆսիզեանի եւ նրա շուրջը համախմբուած այն մեծատունների խորհրդով, որոնք հույսեր էին կապում «Փարիզ»-ի խմբագրի՝ Աբրահամ Մուրատեանի հրապարակախօսական տաղանդի հետ: Եգիպտոսի պետական ականաւոր հայ գործիչը միաժամանակ հայկական գաղութի մյուսեւելլին կամ ազգապետն էր, եւ բաւական աշխոյժ մասնակցութիւն էր բերում մեծատունների հակասահմանադրական պայքարին: Նա հաւանաբար միջնորդել է, որպէսզի եգիպտական իշխանութիւններն արտօնէն «Արմաւենի» լրագրի հրատարակութիւնը»⁸:

⁵ Կիլիկիա, Կ. Պոլիս, 1864, 28 նոյեմբերի:

⁶ Արշալոյս Արարատեան, Իզմիր, 1865, 17 Ապրիլի:

⁷ Մանուկեան Յովսէփ: Յայտարարութիւն, Արմաւենի, Գահիրէ, 1865, թ.1, էջ Ա:

⁸ Թոփուզեան Յովհ.Խ. Եգիպտոսի Հայկական Գաղութի Պատմութիւն, Երեւան, 1978, էջ 316-317:

Նկատի կարելի է առնել, թե լրագրին խմբագիր Աբրահամ Մուրատեան Գահիրե հաստատուել է Խորենեան վարժարանի տեսուչ նշանակուել է տք. «... իր գործունեությունը զինքը համակրելի կը դարձնէ Նուպար Փաշային, որ կը թելադրէ իրեն, որ թերթ մը հրատարակէ»⁹:

«ԱՐՄԱԻԵՆԻ»-ի **տնօրէնութեան** յանձնառությունը, որ կատարուած է Ազգային Խորենեան Վարժարանի հոգաբարձութեան եւ **արտօնատիրութիւնը** ստանձնած անոր ատենապետ Յովսէփ Էֆենտի Մանուկեանի կողմէ, այս մասին հետեւեալը նշուած է Վահան Զարդարեանի եգիպտահայ լրագրութեան վաթսունամեակին նուիրուած յօդուածին եւ լրագրին առաջին թիւով լոյս տեսած Յովսէփ Մանուկեանի «Յայտարարութեան» մէջ.

«Թերթին պաշտօնական արտօնութիւնը կ'ստանայ Յովսէփ Մանուկեան, որ իր "Յայտարարութիւն"ին մէջ կ'ըսէ. « Ուրեմն թող նոր թուական մը սկսի մեզի համար, թող մեր հայրենակիցք նպաստեն իրենց քաջալերութեամբ գործոցս յառաջդիմութեանը ... Միմիայն այս պայմաններով է, որ Դպրոցին Հոգաբարձութիւնն իր վերայ առաւ լրագրոյս տնօրէնութիւնը ... »¹⁰:

Նաեւ Յովհ. Թովուզեան կ'աւելցնէ. «... Արտոնագիրը ստացուել է Խորենեան դպրոցի հոգաբարձութեան ատենապետ Յովսէփ Մանուկեանի անունով, եւ նրան էլ վերապահուած էր լրագրի համարները ստորագրելու իրաւունքը»¹¹:

«ԱՐՄԱԻԵՆԻ»-ի հրատարակիչներուն կողմէ անոր **խմբագրութիւնը** Աբրահամ Մուրատեանի յանձնելու որոշումին եւ ընդունուելուն մասին անդրադարձած են բոլոր այն մատենագիր եւ ներհուն մտաւորականները, որոնք թերթին պատմութեան շուրջ կատարած են ուսումնասիրական իրենց երախտաշատ աշխատանքները:

Մատնանշելի է թերթին անդրանիկ թիւով կատարուած «Յայտարարութեան» մէջ. «...Դպրոցին Հոգաբարձութիւնն իր վերայ առաւ լրագրոյս տնօրէնութիւնը և որուն խմբագրութիւնը յանձնեց Պ. Ա . Մուրատեանին, որոյ ուղիղ և ազատական սկզբունքը՝ ճշմարիտ ազգային ոգին և յառաջդիմութեան ունեցած սէրը յայտնի ստուգութիւններ են»¹²:

Իսկ հետեւող խմբագրականին մէջ յիշուած համեստ տրամադրութիւնը. «... ազգային լրագիր մը հիմնել հոս, որուն տնօրէնութիւնը մայրաքաղաքիս Դպրոցին Հոգաբարձութեանը յանձնելով՝ սա ևս անոր խմբագրութիւնը մեր

⁹ Նոյն տեղում, էջ 316:

¹⁰ Զարդարեան Վահան: Եգիպտահայ Լրագրութեան Վաթսունամեակը 1865-1925, Աճեմեան Լ., Եգիպտահայ Տարեցոյց 1925, Ա. Տարի, Աղեքսանդրիա: 1924, էջ 74:

¹¹ Թովուզեան Յովհ. Խ., Եգիպտոսի հայկական գաղութի պատմութիւն, Եր., 1978, էջ 317:

¹² Տես Մանուկեան Յովսէփ: Յայտարարութիւն, Արմաւենի, Գահիրե, 1865, թ.1, էջ Ա:

նուաստութեան տուաւ. «–Մենք ալ միշտ փափաքելով ձեռքերնուս եկած ծառայութիւնն ազգերնուս մատուցանել՝ յանձն առինք այդ ծանր պաշտօնը, որ միշտ մեր կարողութենէն վեր եղած է ...»¹³:

Վաւերական է «Արմաւենի»-ի իւրաքանչիւր յաջորդական թիւերուն չորրորդ էջի երրորդ սիւնակին աւարտին նշուածը՝ «Խմբագիր՝ Ա. Մուրատեան»:

Եւ վերջապէս, նշելի է Աբրահամ Մուրատեանի կողմէ ցոյց տրուած սկզբունքային յանձնարութիւնը՝ լրագրին բնոյթին եւ անոր հրատարակութեան պարբերականութեան մասին, թէ. «Մեր խմբագրութեանն յանձնուած այս թերթը պիտի պարունակէ Քաղաքական, Ազգային և Բանասիրական լուրեր, և իւրաքանչիւր ամսոյ 1 ին ու 16 ին պիտի հրատարակուի»¹⁴:

«ԱՐՄԱԻԵՆԻ»-ի հրատարակութեան **կնքահայրը** նկատուած է Գրիգոր Մարկոսեան (հիմնադիրներէն՝ Կ.Պոլսոյ «Նոյեան Աղանի» շաբաթաթերթին, 1852-1853), որուն նշումը կատարած է Վահան Զարդարեան երկու առիթներով. «Թերթին կնքահայրն եղած է Գրիգոր Մարկոսեան, որ Հնդկաստանի Ժառանգական գործերով այն օրերուն Գահիրէ կը մնար»¹⁵:

«ԱՐՄԱԻԵՆԻ»-ի **տպագրութիւնը** կատարուած է Աբրահամ Մուրատեանի ունեցած տառերով եւ Փարիզէն փոխադրած ձեռքի փոքր տպագրական մամուլով. «... Կիրթմպերկի այս ուխտեալ աշակերտը կը փարի նորէն տպագրական կեանքին եւ Ֆրանսա թողուցած կազմածքը բերել տալով կ'սկսի հրատարակել «Արմաւենի» կիսամսեայ հանդէսը, 16 Մարտ 1865 ին»¹⁶:

«ԱՐՄԱԻԵՆԻ»-ի **տարեկան զինին եւ բաժանորդագրութեան վայրերուն** մասին, անոր յաջորդական թիւերով եւ լրագրին 4-րդ էջի 3-րդ սիւնակի վերջաւորութեան տեղադրուած «Ծանուցումն» կը յայտնէ, թէ՝ «Տարեկան զիննէ բոլոր Եգիպտոսի համար 50 դուրուշ եգիպտական ողջ դրամ, իսկ Եգիպտոսէն դուրս 15 ֆռանք՝ ճանապարհի ծախսէ ազատ»:

Նաեւ՝ «Ստորագրութեան տեղերն են՝

Գահիրէ՝ Հայոց Առաջնորդարանը

Ալէքսանդրիա՝ Հայոց Եկեղեցին

Կ. Պոլիս՝ «Կիլիկիա» լրագրոյն գրասենեակն, Զէնճիրլի խան վերնայարկ թիւ 3

Աֆիօն-Գարահիսար՝ Արապեան Մ. Յակոբ Աղային գրասենեակը Հետզհետէ այլ քաղաքաց ստորագրութեան տեղերն ալ պիտի ծանուցանեմք»¹⁷:

¹³ Տես Մուրատեան Ա., Արմաւենի, Գահիրէ, 1865, թ.1, էջ Ա:

¹⁴ Նոյն տեղում:

¹⁵ Զարդարեան Վահան: Յիշատակարան 1512-1933: Հատոր Ա. Գահիրէ, 1933, էջ 5; Զարդարեան Վահան, Եգիպտահայ Լրագրութեան Վաթսունամեակը 1865-1925: Աճեմեան Լ., Եգիպտահայ տարեցոյց, Ալէքսանդրիա, 1925, Ա. տարի, էջ 75:

¹⁶ Թեղդիկ: Տիպ ու Տառ 412-1512-1912. Կ.Պոլիս, 1912, էջ 141-142:

Եզիպտահայ առաջին այս պարբերականը Աբրահամ Մուրատեանի «Փարիզ» լրագրին համեմատութեամբ թէեւ նուազ տարածում ունէր, սակայն անոր խմբագիրը գոհունակութեամբ կու գայ շնորհակալական հետեւեալ խօսքով ողջունել ընթերցող հասարակութիւնը եւ ցուցաբերուած ընդունելութիւնը՝

«Ուրախութեամբ կտեսնենք, որ *Արմաւենին* սիրալիր ընդունելութիւն մը կգտնէ կոր եզիպտաբնակ Պատուելի Ազգայիններէն և անզգայ պիտի համարուինք, եթէ այս ընդունելութեան անտարբեր մնալով՝ շնորհակալութիւննիս չայտնենք: Այս բանին մեզի գլխաւոր պատճառ տուողն է՝ Աղէք-սանդրիոյ Ազգայնոց լրագրոյս առաջին թիւը տեսած ատեննին իսկոյն փութալ և յիսուն բաժանորդաց ցանկ մը՝ տարեկան գնոյն կանխիկ վճարմամբ ի միասին՝ յԱռաջնորդարանս ուղարկելին: Ասանկ ջերմեռանդ ազգասիրութեան և ուսումնասիրութեան փորձեր քիչ տեսնուած ըլլալով՝ ասիկայ արդարեւ մեծ պատիւ կընէ նոյն քաղաքի մեր սիրելի Համագգեացը և յոյս կու տայ մեզի մեր ազգին յառաջադիմութեանը վրայ»¹⁸:

«ԱՐՄԱԻԵՆԻ»-ի **էջերուն թիւին եւ չափին** մասին մատենագիր Գարեգին Լեւոնեան կը նշէ 16 էջ եւ 31 X 47 սմ. չափերով¹⁹: Վաւերական է սակայն լրագրին միայն չորսական էջերով կազմը, 31 X 47 սմ. չափերով:

«ԱՐՄԱԻԵՆԻ»-ի **աշխատակից-թղթակիցներուն** մասին Հայր Մկրտիչ Պօտուրեան հետեւեալը կը նշէ՝ քաղուած իր տեսած լրագրին միայն առաջին երկու թիւերէն (թիւ 1 եւ 2).

«Արմաւենի»-ի յօդուածագիրներն էին, բացի խմբագրէն՝ *Մկրտիչ եպիսկոպոս* Միաբան սրբոյ Երուսաղէմի, որ աւելի խրատական մասը ստանձնած էր, Յովսէփ Մանուկեան՝ դպրոցական խնդիրներով զբաղող, Ս. Ս. Յ. Ներշապուհ՝ գրական յօդուածները կը ստորագրէ, ունի ոտանաւոր հանելուկներ և հետեւողութեամբ գրուած առակներ: Կ'երեւնան Ռ. Ռ. թղթակից մը և Ս. Մ. (Աղա Սիմէօն Մուրատեան), վերջինս «Բանասիրական» խորագրով գրաբար յօդուածով հայկական լրագրութեան նիւթ կը մատակարարէ: Արմաւենիի խմբագիրը Ազգային և Քաղաքական լուրեր հաղորդելէ զատ *Այլ և այլք* խորագրին ներքեւ իր ընթերցողաց կու տայ համագգային մանր լուրեր»²⁰:

¹⁷ Ծանուցում, Արմաւենի, Գահիրէ, 1865, թիւ 2, 3 եւ 4, էջ 4:

¹⁸ Արմաւենի, առաջին տարի, Գահիրէ, 1865, թիւ 3, էջ 2:

¹⁹ Լեւոնեան Գարեգին: Հայ Պարբերական Մամուլը (լիակատար ցուցակ): 1794-1934.- Երեւան, 1934, էջ 16:

²⁰ Պոտուրեան Հ. Ս., Եզիպտահայ Լրագրութեան Քառասնամեայ Պատմութիւնը: 1865-1905, Բազմավէպ, Վենետիկ, 1907, թիւ 2, էջ 74:

Այստեղ կարելի է աւելցնել նաեւ Բանասիրական խորագրով Դաւիթ Յակոբեանի յօդուածները եւ Յարութիւն Միքայէլեանի թերթին խմբագրին յղած գրութիւնը «Արմաւենի»-ի 3 եւ 4 համարներուն 4-րդ էջերով:

«ԱՐՄԱԻԵՆԻ»-ի **հրատարակութեան դադրելուն** մասին կարգ մը պատճառներ ներկայացուած են, որոնք կը վերագրուին Աբրահամ Մուրատեանի առողջական պայմաններուն, Եգիպտոսի մէջ հնդախտի (քոլերա) համաճարա կին տարածման, ինչպէս նաեւ համայնքային կեանքէն ներս տիրող “Հոգաբարձութիւն եւ Առաջնորդական Փոխանորդ” փոխադարձ անհանդուրժողական իրադարձութիւններուն: «ԱՐՄԱԻԵՆԻ»-ն քանի մը ամիս միայն կեանք ունեցաւ, նախ անոր համար որ Աբրահամ Մուրատեան Եգիպտոսի կլիմայէն չօգտուեցաւ եւ մեկնեցաւ, եւ յետոյ Եգիպտոսի հազիւ 200 տուն հայերը չէին կրնար թերթ մը ապրեցնել»²¹:

Կը նշուի, թէ հնդախտի համաճարակին պատճառով Մուրատեան լրագիրը դադրեցնելով՝ մեկնած է Եգիպտոսէն. «Որպէս լրագրի դադարելու պատճառ առաջ քաշուած փաստարկները (խոլերայի համաճարակ, խմբագրի հիւծախտ եւ այլն) հազիւ թէ համապատասխանեն իրականութեան»:

«...Եթէ իրոք, Եգիպտոսի կլիման բացասաբար անդրադառնար Մուրատեանի առողջական վիճակի վրայ, ապա նա Տրիեստն եւ Կ.Պոլիս կատարած կարճատեւ ուղեւորութիւնից յետոյ չէր գնայ Եգիպտոս»:

«Արմաւենի» լրագրի հրատարակութեան դադարելու պատճառը պէտք է փնտրել հակաքէֆսիզեան այն ելոյթների մէջ, որ 1865թ. մարտ-ապրիլ-մայիս ամիսներին տեղի ունեցան Կահիրէում: Քէֆսիզեանը ստիպուեց հեռանալ Եգիպտոսից: Իհարկէ, այդ պայմաններում նրա շահերի պաշտպանութիւնը ստանձնած լրագիրը չէր կարող այլեւս շարունակել իր գոյութիւնը»²²:

Միւս կողմէ Աբրահամ Մուրատեան գիրքեր, «Փարիզ» լրագրէն համարներ եւ գոյք վաճառելու «Ծանուցումներ» կը կատարէ «Արմաւենի»-ի թիւ 4 վերջին համարով. «Մեր գրքերուն մէկ մասը վաճառելու մտադիր ըլլալով կիմացընեմք մայրաքաղաքիս ընթերցասէր Ազգայնոց, որ եթէ անոնցմէ գնել ուզեն, կրնան մինչեւ ամսոյս 20ը ամեն օր երեկոյեան ըստ տաճկաց ժամը 10էն յետոյ մեր գրասենեակն հրամայել եւ նայիլ ու իրենց պէտք եղածը գնել»:

«Նաեւ «Փարիզ» լրագրէս ալ սակաւաթիւ օրինակներ կգտնուին քովերնիս, որոնք կէս գինով կվաճառեմք: Պատկերներ ու գրասեղան մըն ալ ունիմք ծախու»²³:

²¹ Ալպոյաճեան Արշակ, ԱՄՇ-ի Եգիպտոսի Նահանգը Եւ Հայերը, Գահիրէ, 1960, էջ 295:

²² Թովուզեան Յովհ. Խ., Եգիպտոսի Հայկական Գաղութի Պատմութիւն, Երեւան, 1978, էջ 318:

²³ Ծանուցում, Արմաւենի, Գահիրէ, 1865, թիւ 4, էջ 4:

Եզիպտահայ մամուլի առաջին հրատարակության «ԱՐՄԱԻՆԻ»-ի 150-ամեակին առթիւ եւ անոր մասին կատարուած ուսումնասիրութիւններուն շուրջ կարելիութեան սահմաններով մատուցուած ներկայ համադրուած աշխատանքը կ'ամբողջանայ՝ իր ժամանակի մտաւորական տարրին, հասարակական գործիչներու, հոգեւորական դասին եւ համայնքային կեանքի իրադարձութիւններուն մասնակից անձերու լրագրին հրատարակութեան մէջ ունեցած դերակատարութեան մասին ամփոփ տեղեկութիւններու ներկայացումով: Սոյն առաջադրանքը կատարելի է յառաջիկային:

SOUREN BAYRAMYAN

**150 ANNIVERSARY OF THE FIRST ARMENIAN NEWSPAPER IN
EGYPT – “ARMAVENI”**

SUMMARY

History of establishment of the first Armenian periodical in Egypt “Armaveni” is described. Being established in 1865 in Cairo, only 4 issues of the newspaper were published. The reasons of the short life of the newspaper are provided.

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՄԱՅԱ

*Հայաստանի ազգային գրադարանի
մատենագիտության և գիտական հետազոտությունների բաժնի վարիչ,
բանասիրական գիտությունների թեկնածու*

ՀԱՅ ԳԻՐՔԸ՝
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՔԱՌՈՒՂԻՆԵՐՈՒՄ
(ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ)

Բանալի բառեր՝ Գիրք, տպագրություն, հայոց պատմություն, էլեկտրոնային շտեմարան, թվայնացում:


Key words. Book, Printing, Armenian history, Electronic catalogue, Digitization

Գիրքը՝ որպես տեղեկատվության փոխանցման կարևորագույն արժեք, գնահատված է եղել բոլոր ժամանակներում: Հասարակության պատմական զարգացմանը զուգահեռ այն կատարել է տվյալ ժամանակահատվածի ձեռքբերումներն ապագա սերունդներին փոխանցելու բարդ գործառույթը, ինչը հնարավորություն է տվել ճիշտ գնահատելու անցյալը: Այս երևույթն առավել ընդգծվում է, երբ անդրադարձ ենք կատարում հայ գրքարվեստի պատմությանը: Տարբեր դարաշրջաններում, երբ հայ ժողովուրդը գոյատևման համար կառչել է փրկության ակունքներից, գիրքը և գիրը հանդես են եկել իրենց ազդեցիկ առաքելությամբ՝ ապագա սերունդներին ի պահ տալով պատմական փաստերը, գիտական ձեռքբերումները, գրական-գեղարվեստական պատկերացումները:

Հայ գրքի պատմությունը զուգահեռվել է հայ տպագրության պատմությանը, ինչը Ռ. Իշխանյանի բնութագրմամբ՝ «...հեղաշրջիչ է եղել մարդկության պատմության մեջ»: Հայ գրատպության պատմությունն անցել է զարգացման տարբեր փուլերով, որի ընթացքում ձևավորվել են տպագրական արվեստի որոշակի սկզբունքներ: Յուրաքանչյուր դարաշրջան ինքնատիպության իր շեշտն է դրել հայ գրքարվեստի ձևավորման բարդ գործընթացում՝ հնարավորություն ընձեռելով հաջորդ սերունդներին կատարելագործելու տպագրության արվեստը: Նշենք, որ Գուտենբերգի գյուտը Գերմանիայից

անցել է Իտալիա և Հոլանդիա (1465), Շվեյցարիա և Չեխիա (1468), Բելգիա և Իսպանիա (1473): 15-րդ դարի երկրորդ կեսին գրեթե ամբողջ Եվրոպան արդեն տիրապետում էր տպագրության արվեստին:

Հայ գրատպության սկիզբ համարվում է 1512 թվականը, երբ լույս են տեսել առաջին հնատիպ գրքերը: Վարկածներ են եղել, որ 1512 թվականից առաջ եղել են հայատառ հատվածներով տպագիր գրքեր, սակայն այդ վարկածները պատմական ստույգ քննության արդյունք չեն¹:



Մինչև 19-րդ դարի առաջին կեսը հայ առաջին տպագիր գիրք համարվել է Աբգար Թոխաթեցու «Սաղմոսարան»-ը (1565թ.): Սակայն նույն 19-րդ դարի երկրորդ կեսին արդեն ի հայտ են եկել հիշատակումներ 1512-1513թթ հրատարակությունների մասին, որոնցով էլ ձևավորվել է հայ տպագիր գրքի պատմությունը²: Կատարված համեմատությունները հաստատել են, որ

¹ Այս հարցի շուրջ հիմնավոր ուսումնասիրությունները տես Լևոնյան Գ., Հայ գիրքը և տպագրության արվեստը, Ե., 1958, Իշխանյան Ռ., Հայ գրքի պատմություն, Ե. 2012:

² Առաջին տպագիր գրքերի մասին հիշատակումների մասին տես Բազմավեպ, Վենետիկ, 1865, էջ 221 (հոդվածի մեջ Ղևոնդ Ալիշանն առաջին անգամ հիշատակել է «Աղթարք»-ը), Զարբհանալյան Գ., Հայկական մատենագիտություն, Վենետիկ, 1883, էջ 20 (հեղինակը հիշատակել է «Աղթարք»-ի և «Ուրբաթագրքի» մասին): Գովրիկյան Գրիգոր, Հանդես ամսօրյա, Վիեննա, 1889, էջ 209-212 (առաջին անգամ հիշատակվել է «Պարզատումար»-ը), Խապայան Ս., Արևելք, Կ. Պոլիս, 1890 (առաջին անգամ հիշատակվել է «Տաղարան»-ը):

առաջին հնատիպ գրքերն ունեն նույն տառատեսակը, թղթի որակը, շարվածքը, ինչն էլ թույլ է տվել հաստատելու, որ նրանք պատկանում են նույն ժամանակահատվածին և նույն տպագրիչի արտադրանքն են: Սկզբնական շրջանում եղել են վարկածներ, որ առաջին տպագիր գիրքը «Պարզատումար»-ն է, իսկ ավելի ուշ ճշտվել է, որ «Ուրբաթագիրք»-ն է³: Ճշտվել է նաև տպագրիչը՝ Հակոբ, որն իրեն անվանել է Մեղապարտ, վայրը՝ Վենետիկ, տարեթիվը՝ 1512-1513:

Արդեն իսկ պարզ է, որ հայ գրքարվեստի պատմության ձևավորումը տեղի է ունեցել պատմական Հայաստանի սահմաններից դուրս: Պատճառներից մեկը բուն հայկական տարածքներում առկա սոցիալ-տնտեսական և քաղաքական իրավիճակն էր⁴, որի արդյունքում մեծ չափերի էր հասնում արտագաղթը: Երկրորդն այն էր, որ եվրոպական տարբեր քաղաքներում ձևավորված հայկական գաղթօջախները յուրացնում էին տվյալ երկրի ձեռքբերումները, մասնակցում էին այդ երկրի քաղաքական, սոցիալական, տնտեսական, մշակութային հարցերի կարգավորման և զարգացման գործընթացին, այդ ամենը ծառայեցնում հայ ժողովրդի և սեփական գաղթօջախի շահերին: Փաստենք հետևյալը. Աբգար Դպիր Թոխաթեցին Կ. Պոլսում հայերեն գիրք է հրատարակել դեռևս 1568թ, իսկ նույն Կ. Պոլսում թուրքերեն առաջին գիրքը տպագրվել է 1729թ.: Իրանում հայերեն առաջին գիրքը տպագրվել է 1638թ., երբ Միջին Արևելքում դեռևս տպարան գոյություն չունեին, իսկ պարսկերեն առաջին գիրքը տպագրվել է 1830թ.: Փաստերը խոսում են այն մասին, թե ինչ կարևոր նշանակություն է ունեցել գրքի տպագրությունը հայ իրականության մեջ:

Հակոբ Մեղապարտից հետո հայ գրքարվեստի պատմությունը բուռն զարգացում է ապրել Վենետիկում, Կ. Պոլսում, Հռոմում, Լվովում և այլուր: Նրա գործը շարունակել է Աբգար Թոխաթեցին, որը 1565թ. հրատարակել է «Խառնայինթուր տումարի գեղեցիկ և պիտանի» գիրքը, իսկ նույն թվականի վերջում՝ «Մաղմոսարանը»: Նա, իսկ հետո նրա որդին՝ Սուլթանշահը, հայ գրքարվեստի և գրատպության պատմությունը հասցրել են որակական նոր մակարդակի: 1567-1568թթ Կ. Պոլսում լույս են տեսել «Փոքր քերականություն», «Տոնացույց», «Աղօթամատոյց (Ժամագիրք)-Պատարագամատոյց», «Մաշտոց» գրքերը: Հռոմում հայ տպագրությունը սկզբնավորած Սուլթանշահը՝ Աբգար

³ Ավելի մանրամասն տես Ռ. Բշխանյանի ուսումնասիրությունը:

⁴ Հայ գրատպության ձևավորման պատմական ակունքների մասին տես «Հայ ժողովրդի պատմություն: Սկզբից մինչև մեր օրերը», Երևան, 1975, Մելքոնյան Աշոտ, Հայոց պատմություն, Երևան, 1998:

Թոխաթեցու որդին, 1579թ. ձուլել է տալիս հայերեն տառեր և կատարում փորձնական տպագրություն, որը բանասերները անվանում են Յայտարարություն⁵: Իսկ 1584թ. տպագրել է «Տոմար Գրիգորեան»-ը:

16-րդ դարում տպագրվել է 17 անուն գիրք, որից 8-ը՝ Վենետիկում, 6-ը՝ Կ. Պոլսում, 3-ը՝ Հռոմում:

17-րդ դարում հայ գրքարվեստն ու տպագրությունը զարգացում են ապրել՝ ընդլայնելով աշխարհագրական տարածքները: Չնայած այդ ժամանակ բուն Հայաստանում սոցիալ-քաղաքական վիճակը չափազանց ծանր էր, սակայն այս դարաշրջանում ծաղկում է ապրել մշակույթը, պատմագրությունը, գրականությունը, մատենագրությունը: Առաջադրված նորանոր պահանջների արդյունքում նոր որակական փուլ է մտել գրատպության արվեստը: Ինչպես նշում է Ռ. Իշխանյանը՝ «Այս դարի երկրորդ կեսում էր, որ հայ գրքի տպագրությունը անջատ, ընդհատվող պոռթկումներից վերածվեց մշտական անընդմեջ մի գործողության, որ այդպես շարունակվելով՝ հասավ մեր օրերը»⁶:

17-րդ դարում տպագրվել է 165 գիրք: Տպագրական օջախներ են դառնում Հռոմը (38 գիրք), Վենետիկը (32 գիրք), Ամստերդամը (40 գիրք), Լվովը (3 գիրք), Փարիզը (2 գիրք), Մարսելը (20 գիրք), Նոր Զուղան (12 գիրք), Կ. Պոլիսը (2 գիրք), Լիվոռնոն (1 գիրք), Զմյուռնիան (1 գիրք), Լայպցիգը (1 գիրք), Սուչավան (1 գիրք), Պադուա (1 գիրք) և այլ քաղաքներ: Կարելի է վստահ նշել, որ ի տարբերություն նախորդ դարի՝ 17-րդ դարը աչքի է ընկնում տպագրված գրքերի առատ քանակով:

18-րդ դարում տպագրվում է ավելի քան 800 գիրք: Նշանակում է՝ հայ գրքարվեստի պատմությունն ընթանում է բնական հունով: Գիրքը դառնում է անհրաժեշտություն հայ իրականության մեջ: 18-րդ դարի գրատպության պատմության ամենաակնառու փաստն այն է, որ այն սկզբնավորվում է Վաղարշապատում, ուր 1772թ. Սիմեոն Երևանցի կաթողիկոսի ջանքերով հիմնադրվում է տպարան, իսկ ավելի ուշ՝ թղթի գործարան, ինչը հնարավորություն է տալիս զարգացնել հայ գրատպությունը բուն Հայաստանում: Դա խթան է հանդիսանում մշակույթի, հատկապես գրքարվեստի զարգացման համար:

19-րդ դարում հայ գրքարվեստի պատմությունը զարգացման նոր մակարդակ է թևակոխում՝ կապված Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանի կազմի մեջ մտնելու, սոցիալական, տնտեսական կայուն իրավիճակի և մշակույ-

⁵ Այս «Յայտարարություն»-ը հայտնաբերել է Գ. Գալեմբյարյանը: Տե՛ս Հանդես ամսօրյա, Վիեննա, 1914, էջ 17-22:

⁶ Իշխանյան Ռ., Հայ գրքի պատմություն, Ե. 2012, էջ 32:

թային կյանքի աշխուժացման հետ: Շատանում են տպարանները, որոնք ընդգրկում են աշխարհագրական նոր տարածքներ, ինչն էլ ավելացնում է տպագրված գրքերի քանակը: Կարելի է պնդել, որ 19-րդ դարից գրատպության արվեստը մտնում է ժողովրդի առօրյայի մեջ, իսկ գիրքը դառնում է պահանջված հասարակական տարբեր խավերի կողմից: Զարգացման այս տենդեցը շարունակվում է 20-21-րդ դարերում՝ ընդգծելով գրքի արժեքը մեր իրականության մեջ: 19-րդ դարում աշխարհի տարբեր վայրերում տպագրվում է մոտ 9200 հայերեն կամ հայերեն ելից տվյալներ պարունակող գիրք, 20-րդ դարում՝ այդ թիվը հասնում է շուրջ 80.000-ի, իսկ 21-րդ դարում՝ շուրջ 29.000 գիրք: Վիճակագրական այս պատկերն ինքին խոսում է հայ գրքարվեստի օրինաչափ զարգացման որակական հատկությունների մասին:

Հայ գրքի պատմության համատեքստում կարևորվում են տարբեր ժամանակաշրջաններում ստեղծված գրացուցակները կամ գրքի մատենագիտությունները, որոնք լավագույնս պատկերացում են տալիս հայ գրքի և գրատպության անցած ուղու մասին: 19-րդ դարում հայ գրքի մատենագիտության պատմությունը թևակոխում է նոր գիտական փուլ՝ մատենագիտական ցանկերը ներկայացնելով որոշակի վերլուծություններով: Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ Իգնատիոս Փափագյանը կազմում է 1565-1800թթ տպագրված հայերեն գրքերի ցուցակ, որը մնում է անտիպ, բայց անտիպ այս աշխատանքը դառնում է Գ. Զարբհանալյանի «Հայկական մատենագիտություն» գրքի հիմքը: Այսպես սկզբնավորվում է հայ տպագիր գրքի մատենագիտության պատմությունը, որը հետագա տասնամյակներում հսկայական առաջընթաց է ունենում: Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամները պարբերաբար տպագրում են մատենագիտական ցանկեր, որոնցում ներկայացնում են իրենց մոտ պահվող, ինչպես նաև իրենց հրատարակած գրքերը: Հայ գրքի մատենագիտության պատմության մեջ ակնառու են դառնում այնպիսի անհատներ, ինչպիսիք են Ստ. Նազարյանը, Ալ. Խուդաբաշյանը, Հովհ. Շահխաթունյանը, Գ. Զարբհանալյանը, Գ. Գալեմքյարյանը, Գ. Լևոնյանը, Մ. Պոտուրյանը, Մ. Միանսարյանը, Ղ. Ալիշանը, Ա. Ղազիկյանը, Հ. Անապյանը, Հ. Պետրոսյանը, Ա. Բաբայանը, Հ. Կոստիկյանը, Ն.

Ոսկանյանը, Ռ. Իշխանյանը և այլք: Նրանց կազմած մատենագիտությունների կամ մատենագիտական ցանկերի շնորհիվ հայ իրականության մեջ ձևավորվում են «ազգային», «գիտական» մատենագիտություն հասկացությունները, ինչն էլ այսօր հնարավորություն է տալիս պատկերացում կազմել տպա-

գրված գրքերի քանակի, որակի, տպագրական նրբությունների, գտնվելու վայրի և այլ կարևոր գործոնների մասին⁷:

Հայ գրքի մատենագիտության պատմությունը որակական նոր փուլ է մտնում, երբ Ալ. Մյասնիկյանի անվան հանրապետական գրադարանում 1946թ. ձեռնամուխ են լինում հայ գրքի ամբողջական մատենագիտության կազմման աշխատանքներին: Պետք է մեկ ամբողջականության մեջ ներառվեր և ներկայացվեր հայ տպագիր գիրքը: Առաջին հատորը պետք է ներառեր 1512-1800թթ տպագրված հայ հնատիպ գրքերը: Սակայն որոշ ժամանակ անց աշխատանքները դադարեցվում են, քանի որ բացակայում էին համապատասխան աշխատանքային պայմաններն ու միջոցները: 1958թ. Հայաստանի կուլտուրայի մինիստրության որոշմամբ վերսկսվում են աշխատանքները, գիտխորհրդին ներկայացվում են որոշ թեզիսներ և կանոնադրություն, որոնք սակայն մերժվում են՝ մինիստրության ծրագրերին չհամապատասխանելու պատճառով: Հատկապես գրքի կառուցվածքի, գրքերի նկարագրության հարցերը լուրջ քննարկումների նյութ են դառնում: Կանոնադրությունը, որն արտացոլում էր աշխատանքի նպատակը, գործառույթները, որոշ վերապահումներով հաստատվում է 1958թ. դեկտեմբերի 30-ին, որից հետո սկսվում են աշխատանքները: Առ այսօր հրատարակվել է հինգ հատոր՝ ներկայացնելով հայ գրքի պատմությունը 1512-1930թթ: Ավարտական փուլում է գտնվում է 6-րդ հատորը, որը ներառում է 1931-1940թթ հրատարակությունները:

Հայ գրքի մատենագիտության կազմման աշխատանքները ենթադրում են.

-կազմողը պետք է տեսնի գիրքը և նկարագրությունը կատարի տիտղոսաթերթից: Տիտղոսաթերթի բացակայության դեպքում առաջնային են դառնում գրքի կազմի տվյալները: Եթե բացակայում են գրքի տիտղոսաթերթն ու շապիկը, ապա ելից տվյալները քաղվում են գրքի բովանդակությունից կամ այլ աղբյուրից՝ անպայման արձանագրելով աղբյուրը:

- նկարագրության ժամանակ առանձնացվում են բոլոր կարևոր տեղեկությունները՝ հեղինակ, թարգմանիչ, հրատարակիչ, կազմող, վերնագիր, տպագրության վայր, տարեթիվ, տպարան, հատորը, առկա լեզուն կամ լեզուները: Նշվում է, թե որերորդ հրատարակությունն է, գրքի գտնվելու վայրը և դասիչը:

⁷Հայ մատենագիտության պատմությունը, այդ թվում՝ հայ գրքի մատենագիտությունը, լավագույնս ներկայացված է Ռ. Իշխանյանի աշխատություններում: Տես Իշխանյան Ռ., Հայ մատենագիտության պատմություն, Պրակ Ա-Գ, Եր., 1964-1968:

- կազմողն արձանագրում է նաև բոլոր կարևոր տեղեկությունները, որոնք կարող են նպաստել գիրքը լիարժեք ներկայացնելուն, կատարում է բանասիրական, պատմական ճշգրտումներ:

-առանձնացվում են ոչ միայն հայերեն, այլև հայերեն հատվածներ պարունակող օտարալեզու, ինչպես նաև երկլեզու կամ եռալեզու գրքերը, նաև հայատառ թուրքերեն գրքերը:

Արդյունքում՝ յուրաքանչյուր հատոր ժամանակագրական կարգով հնարավորինս ամբողջական ներկայացնում է հայ տպագիր արտադրանքը՝ տպագրված աշխարհի տարբեր անկյուններում: Հատորների վերջում արտացոլվում են անձնանունների, վերնագրային, առարկայական, աշխարհագրական, ինչպես նաև տպարանների ու մատենաշարերի ցանկերը՝ այբբենական կարգով: Կատարվող հսկայածավալ աշխատանքը առավելագույնս նպաստում է հայ գրքի և մշակույթի պահպանության համընդհանուր գործին:

20-րդ դարի վերջում և, հատկապես, 21-րդ դարում հայ գրքի պատմության մեջ տեղի են ունենում որակական նոր փոփոխություններ: Խոսքը տեղեկատվական նոր տեխնոլոգիաների և ավտոմատացման համակարգերի մասին է, որոնք ընդարձակում են գրքի պահպանության, խնամքի, հաջորդ սերունդներին փոխանցելու հնարավորությունները: Համակարգիչների մուտքը գրքերի աշխարհի հեղաշրջում է մինչ այդ եղած պատկերացումները, իսկ թղթային տարբերակի կողքին էլեկտրոնային գրքերի հայտնությունը հնարավորություն է տալիս ընդգրկել ընթերցողական լայն շրջաններ, ինչը, հատկապես 21-րդ դարի սկզբին, դառնում է լուրջ հիմնախնդիր: Գրքերի թվայնացման աշխատանքները գնալով ավելի մեծ ծավալներ են ընդգրկում՝ ամբողջական դարձնելով հայ գրքի պատմությունը:

Հայաստանի ազգային գրադարանը՝ որպես հայ գրատպության խոշորագույն պահոց, ստեղծում է հնարավոր բոլոր պայմանները՝ հայ տպագիր և էլեկտրոնային գիրքը մի ընդհանուր դաշտում ամփոփելու և ներկայացնելու համար: Ստեղծված տարաբնույթ էլեկտրոնային շտեմարանների շարքում առանձնանում է «Հայ գիրք» էլեկտրոնային շտեմարանը, ուր ներառված են 1512 թվականից մինչ այսօր աշխարհի տարբեր հատվածներում տպագրված հայերեն, հայատառ, ինչպես նաև հայերեն հատվածներ պարունակող գրքերը:

Նպատակը՝

1. Մեկ ամբողջական շտեմարանում ներկայացնել հայ գրքի պատմությունը՝ տեսանելի դարձնելով պատմության հարցականները և օրինաչափ զարգացման պատկերը:

2. Հավաքագրել աշխարհով մեկ սփռված հայերեն կամ հայերեն հատվածներ պարունակող օտարալեզու գրքերը՝ ապագայում կորուստներից խուսափելու նպատակով:
3. Ճշտել աշխարհով մեկ սփռված գրքերի աշխարհագրական տարածքները՝ նշելով յուրաքանչյուր գրքի գտնվելու վայրը, ինչպես նաև ֆիզիկական վիճակը:
4. Պահպանելով հեղինակային իրավունքի նորմերը՝ թվայնացնել գրքերը՝ ընթերցողական լայն լսարան ունենալու, ինչպես նաև հնամաշ գրքերը չվնասելու համար:

Շտեմարանում առանձնանում են մի շարք բազմալեզու հրատարակություններ, որոնց բնագիր լեզուներից մեկը հայերենն է: Ներառված են ատլասների, քարտեզների ժողովածուներ, հմայիլներ, կատալոգներ, պատկերագրքեր, բառարաններ, պատմական, գեղարվեստական, կրոնական, քաղաքական, մասնագիտական տարաբնույթ գրքեր՝ շուրջ 120.000 միավոր: Առանձնացված են փնտրման տարբեր ուղիներ՝ ըստ հեղինակի, վերնագրի, տարեթվի՝ համապատասխան այբբենական և ժամանակային դասավորվածության: Փնտրման այս ուղիները անմիջականորեն կապվում են միջազգային չափանիշներին համապատասխան կատարվող հեղինակավոր գրառումներին, ինչն էլ հնարավորություն է տալիս ստանալ լրացուցիչ տեղեկատվություն այս կամ այն հեղինակի, թեմայի վերաբերյալ: Մուտք գործելով Հեղինակավոր գրառումների դաշտ՝ ընթերցողը կարող է տեսնել, թե քանի գիրք է հրատարակել տվյալ հեղինակը, ինչ անուններով է հանդես եկել, ինչ թեմաներ կան և ինչպես են դրանք փոխկապակցված, կարող է տեսնել, թե ինչ գրքեր են ներառվել տվյալ թեմայով և ուսումնասիրել տվյալ գրքերի գրառումները⁸:

Օրինակ՝

ՈՒՐԲԱԹԱԳԻՐԸ /

Material type:  Book

Publisher: Վենետիկ : [տպ. Հակոբ Մեղապարտի](#), 1512

Description: 124 էջ ; 16 սմ.

Subject(s): [Հայ հնատիպ գիրք](#) | [Միջնադարյան բժշկության](#) | [Աղոթքներ](#) | [ՀԱԳ](#)

Online resources: [Կարդալ անցանց](#)

MARC Preview: [Show](#)

Էլեկտրոնային շտեմարանը տեսանելի է դարձում գրքարվեստի պատմության տարբեր ժամանակահատվածները, ինչպես նաև հնարա-

⁸ Հղումը դրվում է որպես օրինակ: <http://haygirk.nla.am:8080/cgi-bin/koha/catalogue/search.pl?q=Թումանյան>

վորություն է տալիս կատարել վիճակագրական վերլուծություններ: Կատարվող աշխատանքների շնորհիվ հաճախ հայտնաբերվում են կազմակից գրքեր, որոնք առ այսօր գրացուցակներում չեն արտացոլվել: Ձուտ տեխնիկական աշխատանքներից զատ կատարվում են բանասիրական ուսումնասիրություններ՝ ճշտելով այս կամ այն գրքի հրատարակության տարեթիվը, տպարանը կամ հրատարակչությունը և այլ տվյալներ: Ընդհանուր առմամբ, «Հայ գիրք» էլեկտրոնային շտեմարանը օժտված է անսահմանափակ հնարավորություններով՝ հայ գիրքը ընթերցողին մատուցելու, ինչպես նաև տեղեկատվական բոլոր դաշտերից օգտվելու համար:

Հայաստանի ազգային գրադարանի և ՀՀ ԳԱԱ Հիմնարար գիտական գրադարանի աշխատակիցների ջանքերով լայնածավալ աշխատանքներ են տարվում գրքերի թվայնացման ուղղությամբ: Թվայնացումը կատարվում է համապատասխան ժամանակակից պահանջների: Բացի թվայնացման բուն գործընթացից աշխարհի խոշորագույն գրադարանների ազատ դիտման կարգավիճակով տեղադրված թվայնացված ֆոնդերից ներբեռնվում են հայերեն լեզվով գրքերի էլեկտրոնային տարբերակները:

2012-2015թթ «Հայ գիրք» էլեկտրոնային շտեմարան է ներառվել 2331 թվայնացված գիրք կամ 623.731 էջ: Վիճակագրական պատկերը հետևյալն է.

ՏԱՐԻ	ԱՆՈՒՆ	ԷՋ
2012	315	79.389
2013	641	163.100
2014	726	198.029
2015 (ներառյալ սեպտեմբեր ամիսը)	649	182.965
Ընդամենը	2331	623731

Եզրակացություն.

1. Հայ գրքի պատմությունը միանշանակորեն կապված է հայ գրատպության պատմության հետ:
2. 16-րդ դարից սկսած հայ գիրքն անցել է պատմական զարգացման երկարատև ճանապարհ՝ կատարելագործվելով և ձեռք բերելով այն հատկանիշները, որոնք այսօր ընդունելի են մեր կողմից:

3. Հայ գրքի պատմությունը միշտ գտնվել է ուսումնասիրողների ուշադրության կենտրոնում, որոնք պարբերաբար կազմել են մատենագիտական ցանկեր, ինչն էլ օժանդակել է հայ գրքի մատենագիտության պատմության ձևավորմանը:

4. 20-րդ դարի վերջում և 21-րդ դարում հայ գրքի պատմությունը թևակոխում է մի նոր փուլ՝ կապված տեղեկատվական տեխնոլոգիաների և ավտոմատացման համակարգերի հետ, ինչն էլ հնարավորություն է տալիս պահպանել անցյալից մնացած մշակութային արժեքները և գրքերը հասանելի դարձնել ընթերցողական ավելի լայն շրջանակների:

5. «Հայ գիրք» էլեկտրոնային շտեմարանը 21-րդ դարի մշակութային ոլորտի կարևորագույն ձեռքբերումներից է, ինչը հնարավորություն է տալիս կուտակել ահռելի քանակի ինֆորմացիա, սպասարկել ընթերցողական լայն շրջանակների՝ առանց աշխարհագրական տարածքների սահմանափակման:

6. Հայ գրքի թվայնացման աշխատանքները դարաշրջանի պահանջն են:

MAYA GRIGORYAN

ARMENIAN BOOK IN THE CROSSROADS OF THE HISTORY

SHORT ESSAY

SUMMARY

The book as the most important communication value, has been estimated at all times. In different eras, when the Armenian people cling to the sources of salvation for the survival, the book and the writing have made their mission to save the nation, deposit of future generations to historical facts, scientific achievements, literary and artistic ideas. In the history of Armenian book is important the invention of typography, which allowed the development of a new level of art history. In the late 20 th century and 21 th century history book is entering a qualitatively new field of information related to automation and technology. History of digitizing books has become an integral part of the expanding range of readers, as well as becoming the defining issue of preservation of the most important books.

ՄԻ ԳՐՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Հայ գրքարվեստի պատմության մեջ կան բազմաթիվ դրվագներ, որոնք առ այսօր ուսումնասիրման կարիք ունեն: Կատարվող հետազոտական աշխատանքները և, հատկապես, 21-րդ դարի տեղեկատվական նոր տեխնոլոգիաները հնարավորություն են տալիս գտնելու պատմության հարցականները, ինչպես նաև ամբողջացնել հայ գրքի պատմությունը, ինչին ձեռնամուխ է եղել Հայաստանի ազգային գրադարանը: Այստեղ պահպանվող հավաքածուները, պարբերաբար ստուգվում են, ինչի արդյունքում համալրվում են ֆոնդերը:

Հայաստանի ազգային գրադարանի հավաքածուներում կան բազմաթիվ գրքեր, որոնք կազմակից /ալիգատային/ են: Սա պատճառ է հանդիսացել, որպեսզի որոշ գրքեր դուրս մնան գրացուցակներից: Նմանատիպ գրքերից է Լազարյան ձեռնարանի հավաքածուի 2337 գույքահամարով գրանցված Brosset, M. F. Monographie des mornaies armeniennes. SPB, 1839 գիրքը:

2015թ. կատարված հերթական ստուգումը ցույց տվեց, որ այս գրքին կազմակից են այլ գրքեր, որոնք տասնամյակների ընթացքում չեն գրանցվել և գույքահամար չեն ստացել: Նույն կազմի մեջ ներառված են 5 միավոր այլալեզու, 1 միավոր ռուսերեն և 1 միավոր հայերեն գրքեր: Առանձնացնենք կազմի մեջ ներառված հայերեն գիրքը՝ «Յայտարարութիւն Արամեան ընկերութեան վասն գիրս ուսմանց տարածանելոյ» (Վիեննա, 1843)¹:

Հայկ Դավթյանն իր «Հայ գիրքը 1801-1850 թվականներին» աշխատության մեջ գիրքը նկարագրել է աստղանիշով, 1213 համարի ներքո՝ «1213*. Արամեան Ընկերութեան՝ Ուսման գրքեր տարածելու յայտարարութիւնը: Վիեննա, տպ. «Պաշտպան ս. Աստուածածնի վանքը» (Մխիթարյան), 1843, յունուար ամսու մէջ»: Աստղանիշով նշված լինելը նշանակում է, որ մատենագրողը գիրքը չի տեսել, այլ նկարագրել է Արսեն Ղազիկյանի մատենագիտության տվյալների հիման վրա, քանի որ իր կատարված նկարագրության

¹Արսեն Ղազիկյանի «Հայկական նոր մատենագիտութիւն եւ հանրագիտարան հայ կեանքի», Վենետիկ, 1909-1912 աշխատության մեջ գրքի նկարագրությունը հետևյալն է՝ «ԱՐՄԱԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ՝ Ուսման գրքեր տարածելու Յայտարարութիւնը: Վիեննա, Պաշտպան. Ս. Աստուածածնայ վանքը. 1843, Յունվար ամսու մէջ»:

վերջում նշված է. «Ղազիկյանը ծանոթագրել է. «Նոյնը արտատպուած Արշալոյս Արարատեանի մէջ , 1843, թիւ 131, Ղ. 1. 228»²:



4 էջից բաղկացած գրքուկը ներակայացնում է «Արամեան» ընկերության կոչ-հայտարարությունը՝ ավելի շատ ուշադրություն դարձնել կրթության հարցերին, կարևորել հայերեն դասագրքերի տպագրությունը, միավորվել և հանդես գալ բարեգործությամբ: Գրքուկը ներառված է նաև «Հայ գիրք» էլեկտրոնային շտեմարան՝ համապատասխան գրառմամբ, ընթեռնելի է http://greenstone.flib.sci.am/gsd/collect/armbook/books/aram_index.html հղումով:

Այսպիսով, Հայաստանի ազգային գրադարանի հայ գրքի հավաքածուում ևս մեկ գիրք ավելացավ, որը մինչ այսօր համարվում էր բացակա:

Նմանատիպ աշխատանքները շարունակվում են և առաջիկայում կներկայացնենք այլ գրքեր, որոնք նախկինում դուրս են մնացել գրացուցակներից:

ALISA ADAMYAN

HISTORY OF BOOKS

SUMMARY

New findings from the National Library of Armenia collections are introduced.

² Ղ. 1. 228 նշանակում է Ղազիկյան, հատոր առաջին, էջ 228:

PEHLIVANIAN MELINE

Deputy Head of the Oriental Department.

Staatsbibliothek zu Berlin

LIBRAIRIE ORIENTALE H. SAMUELIAN

Բանալի բառեր՝ Հայկական գրախանութներ

Keywords. Armenian bookstores



The last Armenian bookstore of Europe... An exposition dedicated to the “Librairie orientale H. Samuelian” by Armand Franjulien

There was always a place in Paris where Armenian intellectuals, students and bookish people from all over the world met: The “Librairie orientale H. Samuelian”. A place out of time, filled with Armenian and orientalist books, old ones and new ones alike, and managed by the warm-hearted and well-instructed Samuelian siblings: Serge Armen Samuelian and Alice Aslanian, his elder sister. There one could find new publications on Armenia in French, English, Armenian, or could go on a treasure hunt in the bookstore’s rich stock of antiquarian books, periodicals or maps. And one could be sure to make interesting encounters of another kind: with the publisher or author bringing his newest book, with the Armenian tourist from Armenia or Argentina or elsewhere, with the historian searching for information using the

encyclopaedical knowledge of Serge or the excellent contacts of Alice or with the Armenian grandma from the “banlieue” searching a Western Armenian textbook for her grandson...



This magical place was founded in 1930 by Hrant Samuelian (1891-1977), who was a remarkable man: an intellectual, prolific journalist at the “Haratch” newspaper and other diaspora journals, and ARF politician, who had to leave his Western Armenia homeland in 1920 and found refuge in Paris. Paris was at the time the capital of the Armenian Europe and attracted the elite of Armenian intellectuals in exile. His bookstore, which was founded with the stock of the renowned Armenian “Balentz” Bookstore (Gradun Balentz) of Constantinople, became one of the intellectual landmarks of “Hay Paris”. Things did not change when, after his death, his children became his successors.

Alas, due to the advanced age of both Alice and Serge Armen and aggravated by the latest catastrophic water leak, the glorious days of the Librairie orientale are now over... But the memory and the gratitude of the community are alive, even more

alive than ever, perhaps due to the fact that the clients and friends of this unique library are finally aware of its imminent disappearance.

In order to honour the memory of this disappearing legend, the first photo exhibition about the Samuelian Library was inaugurated at the “Maison des étudiants arméniens” (a guesthouse for Armenian students) at the “Cité internationale universitaire de Paris” on Mai 7th. The photo artist (and retired official of the European Parliament) Armand Franjulien had had the idea for this wonderful show of some 54 pictures, taken by himself in 2013 and the first half of 2014. Armand Franjulien could realize his project with the support of the Gulbenkian Foundation. For the end of this year he plans to publish a kind of “Hushamadyan” with his photos and numerous memoirs testimonies of friends and companions of Alice and Serge.

ՄԵԼԻՆԵ ՓԵՂԼԻՎԱՆՅԱՆ

Հ. ՍԱՄՈՒԷԼԵԱՆ ԱՐԵՎԵԼԱԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԸ

ԱՄՓՈՓՈՒՄ

Հակիրճ ներկայացված է Փարիզի Սամուէլեան գրատան անցած ուղին և ներկա վիճակը:

ՇՐՋԻԿ ԳՐԱԴԱՐԱՆԸ՝ ՄԱՐԶԵՐՈՒՄ
ԲԻԲԼԻՈԲՈՒՍ
ՆՎԵՐ ՖՐԱՆՍԻԱՅԻ ՎԱՆԴԵ ԵՐԿՐԱՄԱՍԻՑ

ՂԱԶԱՐՅԱՆ ՀԱՄԱԻԿ

Հայաստանի ազգային գրադարանի փոխտնօրեն



2006թ. նոյեմբերին Ֆրանսիայում Հայաստանի տարվան նվիրված միջոցառումներին մասնակցելու համար Հայաստանից Ֆրանսիա մեկնեց 12 հոգուց բաղկացած պատվիրակություն, որը մասնակցեց Վանդե երկրամասում հանքափորների մատուցում բացված ցուցահանդեսին: Այցի ընթացքում տեղի ունեցան հանդիպումներ, ձեռք բերվեց երկկողմ համագործակցության պայմանագիր: Որպես առաջին քայլ՝ ֆրանսիացիները Հայաստանի ազգային գրադարանին նվիրեցին շրջիկ գրադարան (բիբլիոթուս):

Բիբլիոթուսը կահավորված և գրքերով ապահովված հատուկ ավտոմեքենա է, որը նախատեսված է ընթերցողների ոչ ստացիոնար սպասարկման համար:

Այն Ֆրանսիայի Վանդե երկրամասից Հայաստան տեղափոխվեց ՀՀ երջանկահիշատակ վարչապետ Անդրանիկ Մարգարյանի օժանդակությամբ և առ այսօր կատարում է իր առաքելությունը՝ շրջելով բոլոր մարզերում, մարդկանց մեջ հետաքրքրություն արթնացնելով դեպի գիրքը:

Բիբլիոթուսի շնորհանդեսը տեղի ունեցավ Գյումրու Վարդան Աճեմյանի անվան թատերական հրապարակում: Հայաստանի առաջին շրջիկ գրադարանում բացված ցուցահանդեսը, ուր ներկայացված էին Հայաստանի ազգային գրադարանի հրատարակությունները, մատենագիտություններ, գեղագիտական գրականություն, ամսագրեր, երաժշտական, արվեստի, մանկական գրքեր, պարբերականներ, հմայիլներ, միկրոֆիլմեր, հետաքրքրություն առաջացրեց բնակչության լայն շրջանակների մեջ:

2007 թվականից շրջիկ գրադարանը բազմաթիվ այցեր է կատարել դեպի ՀՀ մարզեր և Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն: Նպատակը՝ համալրել քաղաքային և գյուղական գրադարանները նոր գրականությամբ, ծանոթանալ ՀՀ և ԼՂՀ տարածքներում գրադարանների ընդհանուր վիճակին և խնդիրներին, հենց բիբլիոթուսի մեջ կազմակերպել գրքերի ցուցադրություններ:



2015թ. Հայաստանի ազգային գրադարանի աշխատակազմը շրջիկ գրադարանով այցելել է ՀՀ 5 մարզերի 7 տարածաշրջաններ՝ Արագածոտնի մարզի

Արագածոտնի տարածաշրջան (8), Շիրակ մարզի Արթիկի տարածաշրջան (19), Գեղարքունիքի մարզի Ճամբարակի տարածաշրջան (7), Գեղարքունիքի մարզի Մարտունու տարածաշրջանի (14), Լոռու մարզի Թումանյանի տարածաշրջանի (11), Լոռու մարզի Գուգարքի տարածաշրջան (5), Սյունիքի մարզի Մեղրու տարածաշրջան (12): Ծրագրի մեջ ներառված են եղել քաղաքային, կենտրոնական և համայնքային գրադարաններ: Այցերի ընթացքում նվիրաբերվել է 3775 միավոր գրականություն:

Հանդիպումների ընթացքում Հայաստանի ազգային գրադարանի մասնագետները համայնքային գրադարանների գրադարանավարների հետ անցկացրել են սեմինար-խորհրդակցություններ գրադարանային խնդիրների շուրջ, տեղեկատվություն է տրվել 2012թ. ՀՀ կառավարության կողմից ընդունված «Գրադարանի և գրադարանային գործի մասին» օրենքի և նրանից բխող ենթաօրենսդրական ակտերի վերաբերյալ:

HASMIK GHAZARYAN

BIBLIOBUS IN THE REGIONS

SUMMARY

Visits of the National Library of Armenia mobile public library "Bibliobus" to the regions of Armenia are provided.

ՎԱՐՊԵՏԱՑ ԴԱՍԵՐ

ԶԵՆՁԻՐՁՅԱՆ ԿԱՐԻՆԵ

Հայաստանի ազգային գրադարանի գիտնական քարտուղար

Գրադարանավարի մասնագիտությունը հայ իրականության մեջ միշտ արդիական հնչեղություն է ունեցել, քանի որ ժողովրդի պատմական և մշակութային ժառանգությունը ամբարված է եղել առաջին հերթին գրադարաններում, իսկ գրադարանավարը եղել է այդ ժառանգության կրողը և փոխանցողը: 20-րդ դարի վերջին և 21-րդ դարում Հայաստանի Հանրապետությունում մի փոքր խաթարվել է գրադարանավար տերմինի ըմբռնումը՝ կապված սոցիալ-քաղաքական տեղաշարժերի հետ, սակայն վսեմ այդ կոչումը կրողներն այսօր էլ պատվախնդրորեն կատարում են իրենց սրբազան պարտականությունը: Նշենք, որ պետական մարմինները միշտ ուշադրության կենտրոնում են պահում առկա խնդիրները և հնարավորինս աջակցում են գրադարանավարներին: Դրա վառ ապացույցն է 2012 թվականից յուրաքանչյուր տարի կազմակերպվող «Վարպետաց դասեր» ծրագիրը՝ ՀՀ մշակույթի նախարարության և Հայաստանի ազգային գրադարանի անմիջական նախաձեռնությամբ:



ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ

1. Բարձրացնել գրադարանավարների մասնագիտական պատրաստվածությունը
2. Ապահովել «Գրադարանների և գրադարանային գործի մասին» ՀՀ օրենքի, գրադարաններին և գրադարանային գործին առնչվող կառավարության որոշումների հասանելիությունը
3. Ներկայացնել ՀՀ մշակույթի նախարարության գործունեության առանցքային կետերը
4. Ծանոթացնել գրադարանային գործում նոր իրողություններին ու ժամանակակից մոտեցումներին
5. Պատրաստել ժամանակակից գրադարանների պահանջներին համապատասխանող կադրեր



Հանրապետությունում կա մոտ 900 հանրային բնույթի գրադարան (2013թ. վիճակագրական տվյալներով՝ 897) և 1800-ից ավելի գրադարանավար (տե՛ս «Հայաստանի գրադարանները 2013 թվականին. աշխատանքների վիճակագրական վերլուծություն», Ե., 2014, էջ 7, 19): Յուրաքանչյուր տարի մարզերից ընդգրկվում են շուրջ 90 գրադարանավարներ, որոնց տեղեկատվություն է տրվում գրադարանային գործընթացների ավտոմատացման, փաստաթղթերի

թվայնացման, բարձր տեխնոլոգիաների՝ գրադարանային գործընթացներում նպաստակային օգտագործման, գրադարանային գործում նոր իրողությունների վերաբերյալ:



Դասընթացները կազմակերպվում են տարվա մեջ մեկ անգամ՝ երկու շաբաթվա տևողությամբ, 4 խմբի համար՝ յուրաքանչյուր խմբում՝ 22-25 գրադարանավար: Դասընթացները եռօրյա են (4x 23 ժամ=92 ժամ, որից 80 ժամ՝ տեսական, 12 ժամ՝ գործնական պարապմունք): Դասընթացները վարում են Հայաստանի պետական մանկավարժական համալսարանի, Հայաստանի ազգային գրադարանի, ՀԱՀ Փափագյան գրադարանի, Խնկո-Ապոր անվան մանկական գրադարանի, Ավ. Իսահակյանի անվան կենտրոնական գրադարանի, ՀՀ ԳԱԱ հիմնարար գիտական գրադարանի առաջատար մասնագետները: Դասընթացների ավարտին գրադարանավարները լրացնում են հարցաթերթիկներ, նշում իրենց առաջարկություններ, որոնք անհրաժեշտ են հետագա դասընթացները կազմակերպելու ժամանակ, մասնակցին տրվում է հավաստագիր: Ուսուցանվող թեմաներն են՝ ժամանակակից գիտական տեղեկատվական համակարգեր, գրադարանային հավաքածուի համալրման աղբյուրները, գրքափոխանակության խնդիրները, Amazon, eBay գրավաճառ

ցանցեր, Հեղինակավոր գրառումներ, առարկայական խորագրեր, գրադարանային դասակարգում, մեքենաընթեռնելի քարտագրում MARC 21 ձևաչափով, թվային գրադարանների առանձնահատկությունները և դրանց ստեղծման նախադրյալները, գրադարաններ և սոցցանցեր, տեղեկատու ապարատի կազմակերպումը և սպասարկումը և էլեկտրոնային շտեմարաններ, գրադարանային փաստաթղթերի պահպանություն և սպասարկում, հանրային օգտագործման առցանց քարտարանների ներկայացում /KOHA, Aleph, Evergreen/, գրադարանային փաստաթղթերի վերականգնում և ամրակայում, ՀՀ գրադարանային օրենսդրությունը, ենթաօրենսդրական ակտեր, գրադարանավարի վարվելակերպի կուլտուրան դեռահասների հետ աշխատանքները կազմակերպելիս: Հուսով ենք, որ ծրագիրը ծառայում է իր նպատակին և նպաստում է գրադարանների զարգացման գործընթացին:

KARINE ZENJIRJYAN

MASTER CLASSES FOR THE LIBRARIANS


SUMMARY

Description of the Master Classes for the librarians for the year 2015 is provided. Topics being covered during these classes, outcomes and future plans for the year 2016 are introduced.

«ՄԱՆՈՒԿ» ՊԱՐԲԵՐԱԿԱՆԸ

ԱՂԱՍՅԱՆ ԱԼԻՍԱ

*Հայաստանի ազգային գրադարանի հնատիպ,
հազվագյուտ և արխիվային գրականության բաժնի վարիչ*



Հայաստանի ազգային գրադարանի «Հնատիպ, հազվագյուտ և արխիվային գրականության» բաժնի «Նվիրատվությունների և անհատական հավաքածուների» ենթաբաժնի հավաքածուները ձևավորվել են տարբեր կազմակերպությունների, ուսումնական հաստատությունների, մտավորականների և անհատ բարեգործների կողմից կատարված գրականության նվիրատվությունների հիման վրա:

Այդպիսի նվիրատուներից է իրանահայ բարեգործ և բարերար Ավո Հովհաննիսյանը, ով Հայաստանի ազգային գրադարանին է նվիրել շուրջ 1207 միավոր գրականություն: Նշենք, որ Ազգային գրադարանի հավաքածուների համալրման գործում ունեցած անուրանալի վաստակի համար Ավո Հովհաննիսյանը պարգևատրվել է «Հակոբ Մեղապարտ» հուշամեդալով: Նրա հավաքածուի մեջ կարևոր տեղ են զբաղեցնում իր ծննդավայրին՝ Նոր Զուղային վերաբերող գրքերը: Բարերարն այժմ ապրում է Երևանում և շարունակում է իր ազգանվեր առաքելությունը:

2015թ. Ավո Հովհաննիսյանը Հայաստանի ազգային գրադարանին նվիրեց մեկ խմորատիպ հանդես, որը եզակի օրինակ է՝ «Մանուկ: Կիսամսեայ հանդես նախաձեռնութեամբ քօլէջի «Վտակ» միութեան» (Սպահան, 1931): Հանդեսի խմբագիր՝ Արշամ Պետրոսեան: Այն բաղկացած է 8 էջից, չափերը՝ 33X21 սմ: Հանդեսը ներառված է նաև «Հայ մամուլ» էլեկտրոնային շտեմարան, ընթերցելի է [http://tert.nla.am/archive/NLA%20AMSAGIR/Manuk1931/1931\(8\).pdf](http://tert.nla.am/archive/NLA%20AMSAGIR/Manuk1931/1931(8).pdf) հղումով: Հանդեսը հայ պարբերական մամուլի ցանկերից ոչ մեկում առ այսօր հիշատակված չի եղել: Անընթերցելիության պատճառով բնօրինակին կցված է նաև մեքենագիր օրինակը:

- 1 -

ՄԱՆՈՒԿ

ԿԻՍԱՄՍԵԱՅ ՀԱՆՐԱՅ

ՆԱԽԱԶԵՆՈՒԹԵԱՄԲ ՔՕԼԵՋԻ «ՎՏԱԿ»

ՄԻՈՒԹԵԱՆ

Թիւ 8

ապրիլ 18 1931

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Ուրախ ենք յայտարարելու «Մանուկ»-ի ընթերցող աշակերտութեանը, որ բաղդը պիտի ունենայ յաճախակի կարգալու մեր քօլէջի նախկին աշակերտ Ն. Ն.-ի օգտաշատ ու խրատալից յօդածը՝ ժամանակի արժէքի մասին, որը յաջորդաբար երևան է գալու «Մանուկ»-ի սուղ էջերում:

Նաև օր. Արփենիկի «Ինքնագրագում» խորագրով յօդածը, որը նոյնքան հետաքրքրական և խրատական է:

Թերթիս կանոնաւոր կարգապահութեան պատճառաւ «Մանուկ»-ը կ'իրատարակուի ամեն ամսի 1-ին և 15-ին, հետևաբար յաջորդ օրինակը լոյս կտեսնի մայիսի 1-ին:

Վերջին էջի տասը հարցերը պակասացնում ենք հինգի և իւրաքանչիւր հարցին տալիս տասը քանջան, որով հընարաւորութիւն կտրուի աւելի շատ խորհելու հարցերի շուրջ:

Խնդրում է յարգելի յօդածագիրներին իրենց յօդածները տասն և հինգ օր առաջ հրատարակելուց - ներկայացնեն խմբագրութեանս:

Անցեալ եռամսիակ հարցերին պատասխանելու մէջ առաջինը հանդիսացաւ Արմենակ Ալիալէրդեանը, իսկ երկրորդը՝ Սկրտիչ Սկրտչեանը:

«Մանուկ»-ի բաժանորդագիրները երեք ամիսը 3 դր. առանձին համարը 60 սենթ:

ALISA ADAMYAN

“MANUK” PERIODICAL

SUMMARY


New acquisitions of the National Library of Armenia for Armenian periodicals, which aren't registered in the bibliographic lists of 'Armenian Periodicals' are introduced.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԸ՝
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍԴԱՆՈՒԹՅԱՆ 100-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻ
ՊԵՏԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ**

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՄԱՅԱ

*Հայաստանի ազգային գրադարանի մատենագիտության
և գիտական հետազոտությունների բաժնի վարիչ*

Հայկական մշակույթը, Հայոց ցեղասպանությունը, Հայաստանին և հայությանը վերաբերող պատմական տարբեր ժամանակաշրջանների կարևոր իրողություններն արտացոլվել են հայ և օտարազգի պատմաբանների, գրողների, քաղաքական գործիչների, դիվանագետների, լրագրողների բազմաժանր ուսումնասիրություններում: Նրանցից յուրաքանչյուրը յուրովի է անդրադարձել պատմական փաստերին՝ իր հետքը թողնելով հայոց պատմության, մշակույթի ձևավորման բարդ գործընթացում: Այդ ամենն արտացոլվել է գրքերում, որոնց պահպանումը և փոխանցումը հաջորդ սերունդներին այսօր ունի խիստ արդիական հնչեղություն:



2015թ. Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի շրջանակում կազմակերպված պետական միջոցառումների շրջանակում Հայաստանի

ազգային գրադարանն առանձնացավ թեմայի վերաբերյալ տարաբնույթ միջոցառումներով, որոնցից առանձնացնենք երկուսը:

2015թ. ապրիլի 22-23-ին «Ընդդեմ ցեղասպանության հանցագործության» զլոբալ հասարակական-քաղաքական ֆորումի համատեքստում Հայաստանի ազգային գրադարանը ներկայացրեց «Հայոց ցեղասպանությունը գրականության մեջ» խորագրով ցուցադրություն՝ նվիրված Մեծ Եղեռնի 100-րդ տարելիցին: Խորհրդանշական այս տարում կարևոր էր նմանատիպ ցուցադրություն կազմակերպելու անհրաժեշտությունը, քանզի Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի միջոցառումների շարքում մի անգամ ևս ընդգծվեց գրքի առանցքային նշանակությունը՝ որպես պատմական փաստերի հավաստի աղբյուր: Հայաստանի ազգային գրադարանում առկա Հայոց ցեղասպանության վերաբերյալ գրական, գեղարվեստական, պատմական, վերլուծական, հրապարակախոսական բնույթի շուրջ 3 հազար անուն գրքերից ցուցադրվեց աշխարհի 37 երկրներում 23 լեզուներով հրատարակված ավելի քան 900 միավոր գրականություն՝ տարբեր ժամանակագրական շեշտադրումներով: Վիճակագրական տվյալներով Հայաստանից հետո ամենաշատ հրատարակություններով աչքի ընկան Ամերիկայի Միացյալ Նահանգները, Ֆրանսիան, Լիբանանը, Թուրքիան, Ռուսաստանը, Ռումինիան, Մեծ Բրիտանիան:



Նշենք, որ գրքերի գեղարվեստական, գաղափարական, աղբյուրագիտական արժանիքները գնահատվել են տարբեր ժամանակահատվածներում, իսկ նրանց հեղինակների ներդրումը ցեղասպանության ճանաչման գործում անգնահատելի է:

Ցուցադրության շրջանակում առանձնացվեցին գրքեր, որոնք ակնառու էին իրենց եզակիությամբ, ներառում էին հայոց ցեղասպանության մասին առաջին անդրադարձները, ներկայացնում էին օտարազգի հայտնի գործիչների, ականատեսների, նրանց ժառանգների հիշողությունները կամ վերլուծական պատկերացումները կատարված ողբերգության վերաբերյալ: Ընդգծենք Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան քառասուն օրը» վեպի 1993 թ. ճապոներեն հրատարակությունը, Անրի Վեռնոյի «Մայրիկ» ֆրանսերեն գիրքը հեղինակի մակագրությամբ, Ավրորա Մարտիկանյանի §Հոշոտված Հայաստան. Ավրորա Մարտիկանյանի պատմությունը՝ ինքնակենսագրական գիրքը, որի հիման վրա նկարահանվել է առաջին ֆիլմը՝ «Հոգիների աճուրդ», Ջեյմս Բրայսի «Անգղիական կառավարության կապույտ գիրքը հայկական մեծ եղեռնի մասին», Դիանա Աբգարի «The peace problem», («Խաղաղության հարցը»), արաբ գործիչ Ֆայեզ էլ-Ղոսէյնի «Հերոսական հայության անցյալն: Ջարդերը Հայաստանի մեջ» և այլ գրքեր:



Ցուցադրության համատեքստում կազմակերպվեցին Ալան Ուայթհորնի (Կանադա), Հարրի Զիեթնի (Գերմանիա), Դանա Վալրաթի (ԱՄՆ), Մարսելա Փալնի (Ավստրալիա), Մարկ Մորթեի (Իսպանիա), Սևան Փիրսոն (Նոր-Զելանդիա) և այլ հեղինակավոր գրողների՝ Հայոց ցեղասպանության վերա-

բերյալ գրված գրքերի շնորհանդեսներ: Երկօրյա միջոցառման ընթացքում հանդիպումներ եղան տարբեր երկրներից ժամանած լրագրողների, հրատարակիչների, մտավորականների, քաղաքական գործիչների հետ, որոնց ներդրումը գնահատելի է Հայոց ցեղասպանության ճանաչման միջազգային գործում:



2015թ. սեպտեմբերին Հայաստանի ազգային գրադարանը, ՀՀ մշակույթի նախարարության և Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի միջոցառումները համակարգող պետական հանձնաժողովի աջակցությամբ, հասարակությանը ներկայացավ ArmBookExpo երկրորդ ցուցադրությամբ, որի նպատակն է ընդգծել պատմական անցումային շրջաններում հայ գրքի և գրատպության ազգափրկիչ առաքելությունը, աշխարհի ուշադրությունը սևեռել Հայոց ցեղասպանության փաստի վրա, համախմբել աշխարհասփյուռ հայությանը մշակութային մեկ կարևոր միջոցառման շրջանակում: Նշենք, որ առաջին ArmBookExpo ցուցահանդեսը կազմակերպվել էր 2012թ. Երևանը Գրքի համաշխարհային մայրաքաղաք հռչակելու և հայ գրատպության 500-ամյակի միջոցառումների շրջանակում, երբ հանրությանը ներկայացվեց պատմական, գեղարվեստական, մշակութային, հայագիտական բնույթի շուրջ 2000 միավոր

գիրք: Ժամանակագրական առումով ընդգրկված էին 1990-2012թթ հրատարակությունները, ներկայացված էր 41 երկիր, 26 լեզուներով:

Երկրորդ ցուցադրության ժամանակ ներառված էին Հայոց ցեղասպանության թեմայով հրատարակված գրքեր՝ տարբեր ժամանակագրական շեշտադրումներով, արտերկրում հրատարակված հայագիտական գրքեր՝ 1990թ առ այսօր, Հայաստանում և Արցախում հրատարակված գրքեր՝ 2012թ առ այսօր: Ներկայացվեց 5400 միավոր գրականություն (49 երկիր, 27 լեզու): Ներառված գրքերից շուրջ 2800-ը հրատարակված էր Հայաստանում և Արցախում: Ցեղասպանության թեմայով ընդգրկվել էր 2275 միավոր գիրք:

Ամբողջ գրականությունը ներկայացված է ցուցահանդեսի կայքում՝ համապատասխան մատենագիտական նկարագրության չափանիշների, հայերեն և անգլերեն: Կայքում առանձնացվել են որոնման տարբեր ուղիներ՝ ըստ երկրի, հրատարակչության, լեզվի, տարեթվի, ժանրի, հեղինակի:



Ցուցադրության համատեքստում պատրաստված կատալոգը ներառում է հայկական մշակույթին, Հայաստանին և հայությանը վերաբերող 2012-2015թթ աշխարհի տարբեր երկրներում լույս տեսած գրքերը, իսկ Հայաստանում և Արցախում հրատարակված գրքերից ընտրված է նշված ժամանակահատվածում Հայոց ցեղասպանության վերաբերյալ լույս ընծայված հայագիտական, պատմական, գեղարվեստական բնույթի գրականությունը՝ հայերեն և անգլերեն: Առանձնացված է յուրաքանչյուր գրքի կազ-

մը, տրված են հակիրճ մատենագիտական տեղեկություններ: Առանձնացված են նաև հրատարակություններ, որոնք աչքի են ընկնում բազմալեզու հրատարակություններով, բովանդակային-գաղափարական կարևոր հարցադրումներով:

Կարծում ենք՝ տարին խորհրդանշական էր յուրաքանչյուր հայի համար:

Ազգային գրադարանը շարունակելու է գրքերի ցուցադրություններով պարբերաբար փաստել, որ կատարված ողբերգությունը անպատիժ մնալ չի կարող:

MAYA GRIGORYAN
“THE ARMENIAN GENOCIDE IN LITERATURE” BOOK
EXHIBITION DEVOTED TO THE ARMENIAN GENOCIDE
CENTENNIAL.

SUMMARY

“ArmBookExpo” second book exhibition was held in Yerevan, during September 24-26, 2015. In the article details of the exhibition are provided.

ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ ԱՆԱՀԻՏ

*Հայաստանի ազգային գրադարանի
հանրության հետ կապերի և միջոցառումների բաժնի վարիչ*

ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄՆԵՐ

2015թ. հայ մշակույթին մատուցած ծառայությունների, ազգային, հասարակական կյանքում ունեցած ավանդի համար Հայաստանի ազգային գրադարանի կողմից «Հակոբ Մեղապարտ» հուշամեդալով պարգևատրվել են՝

ՀՈՒՆՎԱՐ

14. 05.

ՅՈՎՍԷՓ ՆԱԼՊԱՆՏԵԱՆ (ԱՄՆ)՝ գրող, թարգմանիչ, մատենագետ, գրականագետ

ՀՈՒՆԻՍ

11. 06.

ՀՐԱԶ ԶԱԴՈՅԱՆ (ԱՄՆ)՝ հրապարակախոս, հասարակական գործիչ
«ՄԵԾՆ ՆԵՐՄԵՍ»՝ հասարակական, բարեգործական կազմակերպություն

ՀՈՒԼԻՍ

11. 07.

ՄԿՐՏԻՉ ՅԱԿՈԲ ՊՈՒԼՏՈՒՔԵԱՆ (ԼԻԲԱՆԱՆ)՝ հրապարակախոս, տնտեսագետ, ազգային, հասարակական գործիչ

ՕԳՈՍՏՈՍ

04. 08.

ՎԱԶԳԵՆ ՂՈՒԿԱՍԵԱՆ (ԱՄՆ)՝ հայագետ, արևելագետ, հրապարակախոս, ազգային-հասարակական գործիչ

ՀՈԿՏԵՄԲԵՐ

07.10.

ԷՄՄԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ՝ Սյունիքի մարզի Մեղրիի կենտրոնական գրադարանի տնօրեն

15.10.

ՔՆԱՐԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ՝ Լոռու մարզի Սպիտակի քաղաքային գրադարանի տնօրեն

16.10.

ՖԼՈՐԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ՝ Գեղարքունիքի մարզի Սևանի տարածաշրջանի Դմաշեն գյուղի գրադարանի վարիչ

19.10

ՍՈՒՍԱՆՆԱ ՄԻՆԱՍՅԱՆ՝ Սյունիքի մարզի Կապանի մարզային գրադարանի տնօրեն

29.10.

ԱՐԵՎՇԱՏ ԱՎԱԳՅԱՆ՝ բանաստեղծ, գեղանկարիչ, հրապարակախոս
ՎԼԱԴԻՄԻՐ ՊՈՂՈՍՅԱՆ՝ «Պատմամշակութային արգելոց թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի տնօրեն